

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

# DIRECTORY
# OF INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

**2024**

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА**

# ВЕДОМОСТИ
# ИНСТИТУТА ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

**2024**

Yerevan 2025
Ереван 2025

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

# ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

## 2024

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 030:81
ԳՄԴ 92+81
Հ 247

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Կազմողներ՝ Վ. Կատվալյան, Գ. Մխիթարյան, Ն. Հովհաննիսյան

Պատասխանատու խմբագիր՝ Ն. Հովհաննիսյան

Հ 247 ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տեղեկագիրք 2024.– Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, 2025.- 240 էջ:

Տեղեկագիրքը ընդհանուր գծերով ներկայացնում է 2024 թ. ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական աշխատանքները, աշխատակիցների հրապարակումների հիմնական բովանդակությունը և ձեռք բերված արդյունքները՝ ըստ հաստատության հիմնարար գիտական հետազոտությունների ուղղությունների:

Գիրքը տեղեկատվական բնույթ ունի, նախատեսված է մասնագետների, լեզվաբանությամբ հետաքրքրվողների, գիտական լայն հանրության համար:

ՀՏԴ 030:81
ԳՄԴ 92+81

ISBN 978-9939-970-11-0
© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2025

## Երկու խոսք

Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ՀՀ ԳԱԱ կազմում հայերենագիտության ոլորտի գիտահետազոտական հաստատություն է, որը նաև կազմակերպում է հետբուհական կրթություն: Հայոց լեզվի ուսումնասիրությունը ընթանում է գիտական չորս ուղղություններով՝ ա) արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ, բ) հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր, գ) հայ բարբառների ուսումնասիրություն, դ) ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր: Ըստ այդմ՝ ինստիտուտի գործունեության հիմնական նպատակներն են հայոց լեզվի շարունակական և համակողմանի ուսումնասիրությունը, ընդհանուր, համեմատական և կիրառական լեզվաբանական հետազոտություններ ծավալելը, լեզվաքաղաքական ու լեզվամշակութային, գրական լեզվի կանոնարկման խնդիրներ արծարծելը և դրանց լուծմանը նպաստելը, ինչպես նաև գիտական կադրեր պատրաստելը:

Իր գոյության ութ տասնամյակների ընթացքում լեզվի ինստիտուտը գիտական արժեքավոր բազում հետազոտություններով համալրել է հայերենագիտությունը, կիրառել լեզվաբանական հետազոտության նորագույն մեթոդներ, էական դերակատարում ունեցել հայերենագիտության և ընդհանրապես լեզվաբանության գիտակարգերի ուսումնասիրության մեջ, եղել հայերենագետներին և հայերենագիտական կենտրոնները համախմբող, լեզվի ուսումնասիրության խնդիրները համակարգող հաստատություն: Ինստիտուտը ձգտում է նպաստել հասարակության լեզվամշակույթի մակարդակը բարձրացնելուն, լեզվի վերաբերյալ ճիշտ պատկերացումներ ձևավորելուն, մայրենին պահպանելուն և տարածելուն, լեզվաքաղաքական խնդիրներ լուծելուն:

Հայոց լեզվի ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությունում գիտության գերակա ուղղություն է, իսկ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը երկրում հայերենի հե-

տազոտությամբ զբաղվող հիմնական հաստատությունն է: Այսօր էլ ինստիտուտի գիտական արդյունքները կարևոր ներդրում են հայերենագիտության մեջ, դրանք նաև կարևոր նյութ և աղբյուր են օտար հայագետների, հնդեվրոպաբանների համար:

Լեզվի ինստիտուտը գիտական հանրությանը, կրթական ոլորտի աշխատողներին և սովորողներին, առհասարակ հաստատության գիտահետազոտական արդյունքներով հետաքրքրվողներին իր հրապարակած գիտական աշխատանքների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ տրամադրելու նպատակով շարունակում է «Տեղեկագրքի» ամենամյա հրապարակումը: Շարքի հինգերորդ հատորը ընդհանուր տեղեկություններ է պարունակում 2024 թվականին ինստիտուտի ձեռք բերած կարևորագույն, բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված, ինչպես նաև կիրառական աշխատանքների արդյունքների վերաբերյալ: Տրվում է 2024 թ. հրապարակումների ցանկը: Ըստ գիտահետազոտական աշխատանքների վերոհիշյալ չորս ուղղությունների՝ ներկայացվում են տարվա ընթացքում հրապարակված գրքերի և հոդվածների համառոտ ամփոփագրերը՝ նախ հայերեն, ապա անգլերեն և ռուսերեն: Հոդվածների օտարալեզու համառոտ ամփոփագրերը նույնությամբ արտատպվում են համապատասխան գիտական հանդեսներից:

«Տեղեկագրքի» հատորների բովանդակային և մատենագիտական տեղեկությունները կարևոր աղբյուր կծառայեն ինստիտուտի աշխատանքներին անդրադարձողների համար:

Կազմողներ

# ՄԱՍ I

# ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2024 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## Ա. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2024թ. ընթացքում լեզվի ինստիտուտում կարևորվել է գիտական այնպիսի խնդիրների արծարծումը, որոնք այս կամ այն կերպ առնչվում են աշխարհում և հատկապես մեր տարածաշրջանում առկա իրավիճակին և երկրի առջև ծառացած մարտահրավերներին: «Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ. Կատվալյան) հետազոտվել է 16-17-րդ դարերի իտալացի հայագետ Ֆրանցիսկո Ռիվոլայի «Բառագիրք հայոց. Dictionarium armeno - latinum» (1621) աշխատության մեջ առկա՝ ազգային ինքնությանն առնչվող բառաշերտը, որը բարբառային ծավալուն բառապաշարի հետ միասին կազմում է հայերեն առաջին տպագիր բառարանի, նաև առաջին բարբառային բառարանի գիտական առավել հետաքրքրական առանձնահատկությունը: Բառարանում առկա է ինչպես Հայաստանին, հայ ժողովրդին, հայերենին, այնպես էլ այլ երկրների, ժողովուրդների, լեզուների վերաբերող ընդարձակ բառաշերտ, որի դասդասումը և վերլուծությունը, բարբառային տարբերակների քննությունը թույլ է տվել պատկերացում կազմելու ուշ միջնադարի հայության մի հատվածի աշխարհաճանաչողության վերաբերյալ՝ միաժամանակ լրացնելով ժամանակի աշխարհաքաղաքական իրավիճակի՝ այս կամ այն չափով օբյեկտիվ պատկերը, մի շարք երկրների ու ժողովուրդների անցյալի վերաբերյալ արժանահավատ հիշատակումների պատմությունը: Պարզվել է, որ բառարանում տեղեկություններ կան հայերի հարևան երեք ժողովուրդների՝ պարսիկների, թուրքերի և վրացիների վերաբերյալ, բացի այդ՝ հիշատակ-

վում են տարածաշրջանի գրեթե բոլոր ժողովուրդները՝ որպես կանոն ազգի, երկրի և լեզվի անվանումներով, երբեմն՝ այլ տեղեկություններով: Բառարանում Աղրբեջան անվանումը նշվում է իբրև գավառի անուն, հասկանալի է՝ խոսքը Իրանի նահանգներից մեկի մասին է, մանավանդ որ այդ անվանմանն առնչվող ազգ կամ լեզու չի հիշատակվում: Կան նաև անդրադարձներ եվրոպական, ասիական ու աֆրիկյան երկրներին ու ժողովուրդներին: Ռիվոլայի բառարանում առկա լեզվական փաստերն ու տեղեկությունները արտացոլում են մեր տարածաշրջանի երկրների և ժողովուրդների իրական փոխհարաբերությունները 16-17-րդ դարերում և հանդես են գալիս իբրև հիմնավոր գիտական հակափաստարկ պատմական իրողությունների ներկայիս աղավաղումների:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Գ.Մխիթարյան) դիտարկվել են հայերեն Աստվածաշնչում թեք հոլովաձևերով ենթակայի կիրառության առանձնահատկությունները: Անցողական բայի հետ սեռական, տրական հոլովներով ենթակայի գործածությունը վկայում է, որ հին հայերենին խորթ չեն եղել էրգատիվ բնույթի կառույցները: Ներկայում ընդհանրապես հաստատված է, որ աշխարհի լեզուների մոտ մեկ քառորդը ունի էրգատիվ կառույցներ, դրանց թվում կան նաև մի շարք հնդեվրոպական լեզուներ (խեթերեն, լուվերեն, իրանական շատ լեզուներ, հինդի և այլն): Ավելին, մեր տարածաշրջանի բազմաթիվ լեզուներ (դրանց թվում և ուրարտերենը), անկախ ծագումից, ունեցել են էրգատիվ բնույթ: Իսկ էրգատիվ կառուցվածքից դեպի նոմինատիվ և հակառակ տիպի անցումները արտառոց երևույթներ չեն, այլ՝ ճիշտ հակառակը: Հետազոտությունը փաստում է, որ հին հայերենում նման կառույցները գործառական լայն կիրառություն են ունեցել: Այդ են վկայում ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն գրականության ընձեռած նյութերը, նման կառույցները շատ տարածված են նաև արդի բարբառային հայերենում: Այս ամենը գալիս է ի չիք դարձնելու հայերենի և ուրարտերենի առնվազն սերտ կապերը ժխտողների

այն պնդումը, որ ուրարտերենի էրգատիվ բնույթը բացառում է հայերենի հետ նրա ծագումնաբանական առնչությունների հնարավորությունը: Նյութերը, անշուշտ, հազարամյակների խորքերը ձգվող համադրությունների հնարավորություն են ընձեռում՝ բացահայտելով հնագույն լեզուներին բնորոշ առանձնահատկություններն ու ընդհանրությունները, մշակույթների փոխազդեցությունները, որը կարևոր է հատկապես համաշխարհայնացման արդի փուլում, երբ հաճախ կեղծվում են թե՛ պատմությունը, թե՛ մշակութային արժեքները:

## Բ. ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ. Կատվալյան) դիտարկվել են հայերենի խառը կազմության բարբառային միավորների առանձնահատկություններ, քննության են առնվել բարբառային միավորների քարտեզագրման խնդիրներ, ձևավորվել է Հայաստանի Հանրապետությունում բարբառային միավորների ու հատկանիշների տարածման ընդհանուր պատկերը, ինչպես նաև՝ Արցախի Հանրապետության բարբառային միավորների ընդհանուր բնութագիրը: Ներկայացվել են Ղարաբաղի բարբառի արդի վիճակը և պահպանման հեռանկարները: Հետազոտվել են արաբական, պարսկական փոխառությունները Սյունիք-Արցախի տարածքի բարբառային միավորներում, դրանք դիտարկվել են պատմական, իմաստաբանական հայեցակետերով, քննվել են մի շարք բարբառային հնաբանություններ: Շարունակվել է «բուսանուններ» իմաստային խմբի հետազոտությունը: Անդրադարձ է կատարվել Համշենի բարբառի հնչյունական համակարգին, դիտարկվել են առավել էական հատկանիշներ: Առաջին անգամ շարահյուսական մեկ տասնյակից ավելի զուգաբանություններ դիտարկվել են հայերենի բոլոր բարբառախմբերում: Դիտարկվել է Վայոց ձորի և հարակից տարածքների միջնադարյան վիմագիր արձանագրությունների, որոնա-

նկարների մակագրությունների և ձեռագրերի հիշատակարանների լեզուն, վեր են հանվել տարածքի տեղաբնիկ բարբառի՝ Ճահուկ-Վայքի միջբարբառի ձևաբանական, հնչյունական և բառապաշարային բազմաթիվ հատկանիշներ: Անդրադարձ է կատարվել էպոսի պատումների լեզվին, դիտարկվել է բարբառային մի շարք իրողությունների արտահայտությունը դրանցում: Կատարվել է արևմտահայ խմբակցության բարբառային միավորներից մեկի՝ Ալաշկերտի բարբառի հնչյունաքերականական համակարգերի քննությունը: Համեմատվել են 19-րդ դարում Պարսկաստանի Մարաղայի շրջանից Նախիջևանի Գողթն գավառի մի շարք գյուղերում վերաբնակված բնակիչների խոսվածքի և Մարաղայի բարբառի բարբառային հատկանիշները: Աշխատանքներ են ծավալվել Մշո և Սասունի բարբառների հնչյունական համակարգերի զուգադրահամեմատական քննության ուղղությամբ: Դիտարկվել են գրաբարյան քերականական և հնչյունական ձևեր հայերենի բարբառներում: Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են երեք մենագրություններում և երկու տասնյակից ավելի հոդվածներում:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Գ.Մխիթարյան) վեր են հանվել ու մեկնաբանվել լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի մի շարք փոփոխություններ և դրանց կատարման օրինաչափություններ: Կատարվել է XIV դարի երկերում գործածված օտար ծագման բառերի դասակարգում և ուսումնասիրություն: Դիտարկվել է լատիներենի քերականության ազդեցությունը Ոսկան Երևանցու քերականության մեկնությունների վրա: Ուսումնասիրվել են «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանների տեսակները և կազմությունը: Կատարվել է միջնադարյան բժշկարանների մասնագիտական բառապաշարի քննություն: Հետազոտությունների արդյունքներն ամփոփվել են երեք ժողովածուներում և երկու տասնյակից ավելի հոդվածներում:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ. Համբարձումյան) ուսումնասիրություններ են կատարվել ընդհանուր ու կիրառական և համեմատական ու տիպաբանական լեզվաբանության ոլորտներում: Հետազոտական աշխատանքներ են ծավալվել թվային լեզվաբանության ուղղությամբ: Շարունակվել է հայերենի և տարածաշրջանի մի շարք լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրությունը: Կատարվել է հայերենի և թոխարական լեզուների համեմատություն: Քննվել է ապառնիության իմաստի քերականական արտահայտությունը գրաբարում և միջին հայերենում: Հետազոտվել են հայերենի արաբական՝ թուրքերենով միջնորդավորված փոխառությունները: Ուսումնասիրվել են հայ-գերմանական բառային զուգաբանությունները: Կիրառական լեզվաբանության բնագավառում կատարվել է կիրառական և համակարգչային լեզվաբանական խնդիրների քննություն: Շարունակվել են հետազոտությունները հայերենի փորձառական հնչյունաբանության բնագավառում: Ուսումնասիրվել են ուժգնության և տևողության փոփոխությունները խոսքի տարբեր ոճերում: Աշխատանքներ են տարվել երկլեզվության, նյարդալեզվաբանության խնդիրների հետազոտության ուղղությամբ: Ամփոփվել և հանրայնացվել է երկլեզվության և լեզվական միավորների ընկալման վերաբերյալ Բեռլինի բժշկական բարձրագույն դպրոցի հետ համատեղ գիտափորձը: Հետազոտությունների արդյունքները արտացոլվել են մոտ երկու տասնյակ հոդվածներում:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Թ. Ասոյան) ուսումնասիրություններ են կատարվել հայերենի ոլորտային տերմինաբանության ուղղությամբ, քննվել են արդի հայերենի շարահյուսական առանձին կառույցներ: Ուսումնասիրվել են հայ լեզվաբանների անդրադարձները հայերենի բառակազմության տեսական խնդիրներին: Քննվել է Մխիթարյանների բառարանագրական և մանկավարժական գործունեությունը: Հետազոտվել են հատկական փոխառությունները, հայերենի բժըշ-

կազիտական տերմինները, բառապաշարի շերտերի ոճական կիրառությունները: Կատարվում է չբառարանագրված բառերի հավաքման աշխատանք, պատրաստվել են «Նոր բառեր»-ի արևելահայերեն և արևմտահայերեն հերթական պրակները: Ուսումնասիրվել են օտարաբանությունների խնդիրները արդի արևմտահայերենում: Շարունակվում են մշակվել արևմտահայերենի կանոնարկման և հատուկ անունների տառադարձման սկզբունքները: Աշխատանքներ են տարվել ՀՀ ուսումնական հաստատություններում (5-9-րդ դասարաններում) ներգաղթյալների ուսուցման խնդիրները ուսումնասիրելու ուղղությամբ: Աշխատանքներ են տարվում նաև լեզուների պահպանման միջազգային փորձի ուսումնասիրության ուղղությամբ: Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են երկու տասնյակ գիտական հոդվածներում:

## Գ. ԹԵՄԱՏԻԿ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Շիրակի մարզի բարբառային համապատկեր» թեմատիկ ծրագրով (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Կատվալյան) կատարվել են գիտարշավներ Շիրակի մարզ, հավաքվել է ուսումնասիրության համար անհրաժեշտ նյութ: Աշխատանքների ավարտին որոշվել են մարզում գործածվող բարբառների ընդգրկման սահմանները, ընդհանուր գծերով նկարագրվել են այդ միավորները և խմբավորվել մարզում դրանց դրսևորումները: Կազմվել է մարզի խոսվածքներում տարածում ունեցող բարբառային առավել կարևոր հատկանիշների ցանկը, բազմահատկանիշ հետազոտության աղյուսակներով ներկայացվում է դրանց տարածման պատկերը հետազոտված բոլոր խոսվածքներում, կատարվել են համապատասխան վերլուծություններ: Կազմվել է խոսվածքների հետազոտության ընթացքում արձանագրված, ինչպես նաև գրառված նմուշներում գործածված բարբառային բառերի բառացանկ: Հետազոտության արդյունքների հիման վրա կատարվել է մարզի լեզվավիճակի ընդհանուր նկա-

բազրություն և բնութագրում: Խմբագրման փուլում է «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, գիրք 3, Շիրակի մարզ» հատորը: Շուրջ 30 մամուլ ընդգրկող այս գրքում նկարագրվում են Կարնո բարբառը և նրա դրսևորումները Շիրակի մարզում, Մշո բարբառի շիրակյան խոսվածքները, տրվում է խառը տիպի խոսվածքների ընդհանուր բնութագիրը: Առանձին-առանձին ներկայացվում են Շիրակի մարզի 90-ից ավելի բնակավայրերի բարբառային բնութագրերը: Մարզի խոսվածքներին բնորոշ հատկանիշների ցանկին հաջորդում են դրանց ընդգրկումը ցույց տվող աղյուսակները: Գրքում ընդգրկված են Շիրակի խոսվածքների բազմաբնույթ և բավականին առատ նմուշներ, որոնց հաջորդում է բարբառային բառերի բացատրական բառացանկը:

## Դ. ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հրապարակվել է «Հայերենի ածանցների բառարան»-ը (Մ. Սարգսյան, Ճ. Ասիլբեկյան, Ս. Բաղրամյան, Ն. Խաչիբաբյան), որը կարող է օգտակար լինել ընդհանուր և հայ լեզվաբանությամբ հետաքրքրվողների, ինչպես նաև բանասիրական ֆակուլտետների ուսանողների համար:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Թ. Ասոյան) հրապարակման են պատրաստվել «Նոր բառեր»-ի մեկական պրակներ՝ արդի գրական արևելահայերենի և արևմտահայերենի գործառական տարբերակներից քաղված նյութի ընդգրկումով:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ. Համբարձումյան) ամփոփվել և հանրայնացվել է երկլեզվության և լեզվական միավորների ընկալման վերաբերյալ Բեռլինի բժշկական բարձրագույն դպրոցի հետ համատեղ գիտափորձը: Գիտափորձի նպատակն էր պարզել երկլեզու անհատների լեզվամտածողությունը հնչյունային և բառային մակարդակներում, ինչպես նաև լեզվի

ընկալման ենթագիտակցական ազդակները և արձագանքը լեզվական միավորներին: Գիտափորձն իրականացնելու համար մշակվել է հայերենի, անգլերենի և գերմաներենի հնչյունային և բառային համակցված շտեմարան, որը դրվել է լեզվական հմտությունը թեստավորող հանրահայտ *LexTale* թեստի նոր տարբերակի կազմության հիմքում: Թեստում առաջին անգամ ներառվել է նաև հայերենը՝ որպես լեզվաիմացության եզր (գիտափորձի անդրադարձին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=v3va2P61nCs):

Հրապարակվել է «Դիտարկումներ մայրենիի շուրջ: Հոդվածների ժողովածու» գիրքը, որում զետեղված են հայոց լեզվի որոշ հարցերի և խնդիրների, տարածված սխալների և երկձևությունների շուրջ դիտարկումներ: Գիրքը կարող է օգտակար լինել ինչպես հայոց լեզվի մասնագետների, ուսանողների, ուսուցիչների, այնպես էլ մայրենիի հիմնահարցերը կարևորող ընթերցողների համար:

Հրապարակվել է «ՀՀ ԳԱԱ ԼԻ Տեղեկագիրք 2023» գիրքը, որը ներկայացնում է 2023 թ. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցների հրապարակած գիտական աշխատանքների մատենագիտական ցանկերը և հրապարակումների համառոտ բովանդակությունը (հայերեն, անգլերեն, ռուսերեն):

## Ե. ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ
## ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ, ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Արցախի ժողովրդագիտություն.Ղարաբաղի բարբառը (Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Ա. Յու. Սարգսյանի), հ. 14 (14), Ե., «Արմավ» հրատ., 2024, 684 էջ:
2. Արցախի ժողովրդագիտություն.Ղարաբաղի բարբառը (Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Ա. Յու. Սարգսյանի), հ. հ. 15(15), Ե., «Արմավ» հրատ., 2024, 684 էջ:
3. «Լեզու և լեզվաբանություն», 1(30), Ե., ԼԻ հրատ., 2024, 105 էջ:

4. «Լեզու և լեզվաբանություն», 2(31), Ե., ԼԻ հրատ., 2024, 100 էջ:
5. Հովհաննիսյան Լ.Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի հնաբանությունները, Ե., «Արմավ» հրատ., 2024, 70 էջ:
6. «Աճառյանական ընթերցումներ», 1 (21), Ե., ԼԻ հրատ., 2024, 150 էջ:
7. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2023, Ե., ԼԻ հրատ., 2024, 247 էջ:
8. Սարգսյան Մ.Ա., Ասիլբեկյան Շ.Հ., Բաղրամյան Ս.Ե., Խաչիբաբյան Ն.Պ., Հայերենի ածանցների բառարան, Ե., «Արմավ» հրատ., 2024, 104 էջ:
9. Վարդանյան Ա.Վ., Դիտարկումներ մայրենիի շուրջ: Հոդվածների ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, 76 էջ:
10. Grigoryan S.M., Grigor Tatevatsi (medical, grammatical and legal questions). Sayings. 1346-1409. Generis, Publishing, 2024, 47 p.

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

1. «Արեւմտահայերենը 21-րդ դարում. մարտահրավերներ և հնարավորություններ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2024, 128 էջ:
https://language.sci.am/sites/default/files/arewmtahayeren-zhoghovatsow.pdf
2. «Բառագիտության արդի խնդիրներ. Հ. Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր», Ե., ԼԻ հրատ., 2024, 103 էջ:
https://language.sci.am/sites/default/files/barhagitowtyan_ardi_khndirner.pdf
3. «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2024, 145 էջ:
https://language.sci.am/sites/default/files/barbarhagitowtyan_hetazotowtyownner._b.pdf

4. «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2024, 183 էջ:
https://language.sci.am/sites/default/files/hlp__gitazhoghovi_nyowter_07.12.pdf
5. Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2024, 182 էջ:
https://language.sci.am/sites/default/files/hayots_lezvi_owsowmnasirowtyan_ew_owsowtsman_ardi_khndirner_mijazgayin_gitazhoghovi_nyowter.pdf

## ԳՐԱԽՈՍՎՈՂ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՈՒ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՐԱԽՈՍՎՈՂ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Առաքելյան Կ., Պատկերավորման լեզվական միջոցների երգիծաստեղծ դերը Նշան Պեշիկթաշլյանի ծաղրանկարներում, Բանբեր հայագիտության, Ե., 2024, № 1, էջ 163-181:
2. Առաքելյան Կ., Երգիծանքի լեզվաոճական միջոցները Նշան Պեշիկթաշլյանի չափածոյում, Վէմ, համահայկական հանդես, Ե., 2024,թ. 2, էջ 137-155:
3. Առաքելյան Կ.Լ., Երգիծական հեքիաթը և նրա լեզվաոճական առանձնահատկությունները Նշան Պեշիկթաշլյանի մշակումներում, «Հեքիաթի բանագիտական քննություն, ժանրային խաչաձևումներ և փոխակերպումներ» միջազգային գիտաժողով՝ նվիրված Արտաշես Նազինյանի ծննդյան 100-ամյակին, Ե., 2024, էջ 102-106:
4. Առաքելյան Կ., Երգիծանքի լեզվոճական միջոցները Առանձարի «Վշտի ծիծաղ» ժողովածուում, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 3, Ե., 2024, էջ 168-177:
5. Առաքելյան Կ., Պարույր Սևակի լեզվական արվեստն ուսումնասիրողն ու բացահայտողը. Արտաշես Պապոյան, Պարույր Սե-

վակ-100 հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2024, էջ 246-259:
6. Ասոյան Թ.Ա., Մխիթարյանների բառարանագրական գործունեության շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Ե., 2024, էջ 337-342:
7. Ասոյան Թ., Մխիթարյանների մանկավարժական գործունեության շուրջ, Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2024, էջ 29-35:
8. Ավետյան Ս. Ռ., Արևելահայերենի բայի եղանակների աբեղյանական մեկնաբանությունը՝ դիտարկված արդի լեզվաբանության տեսանկյունից, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», N 3 (45), Ե., 2024, էջ 34-44:
9. Բարսեղյան Ա.Գ., Շարահյուսական կապակցության եղանակների (խնդրառության) դրսևորումները արդի գեղարվեստական արձակում, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2 (671), Ե., 2024, էջ 272-279:
11. Բարսեղյան Ա.Գ., Կապակցության ներտեքստային միջոցները արդի գեղարվեստական (արձակ) խոսքում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Ե., 2024, էջ 427-436:
12. Գևորգյան Գ.Գ., Նկատառումներ արդի արևելահայերենի բայի ձևակազմական տարբերակների ուսուցման շուրջ, «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը և լեզուների դասավանդման արդի հիմնահարցերը» հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., 2024, էջ 51-56:
13. Դալալյան Տ.Ս., Վերժինե Սվազլյան. անխոնջ բանահավաքբանագետը (ծննդյան 90-ամյակի առթիվ), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1 (670), Ե., 2024, էջ 400-405:
14. Դալալյան Տ.Ս., Կայծակնահար մահացածի շուրջ կատարվող պարը օսական ավանդույթում. сорраy - հայ. ցոփ, «Պարի ծիսական և բանահյուսական ենթատեքստը» հանրապետական գիտաժողով՝ նվիրված Գ. Գինոսյանի հիշատակին, Ե., 2024, էջ 24-27:

15. Դալալյան Տ.Ս., Արեւմտահայերէնի կանոնարկման եւ զարգացման հարցերը «Յառաջ»-ի էջերուն մէջ. շարք մը դիտարկումներ, "Études arméniennes contemporaines", N 15, Paris, 2024, p. 191-200:
16. Դալալյան Տ.Ս., Առասպելաբանական վիշապը և ոռոգման համակարգերի առաջացումը // The Culture of Water Use in Armenia from Ancient Times to Our Days, Yerevan, AICA-Armenia, 2024, p. 116-123.
17. Խպլիկեան Զ.Գ., Քիլէրճեան Պ., Առցանց հարթակներու դերը արեւմտահայերէնի գոյատեւման գործին մէջ, Հայագիտության և լեզվաբանության հարցեր: Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., Լինգվա, 2024, էջ 151-163:
18. Կատվալյան Վ.Լ., Բարբառային հայերենը Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա, Զեկույցներ, 1 (124), Ե., 2024, էջ 67-86:
19. Համբարձումյան Վ., Ք. Պատկանյանը և հայերենի հնդեվրոպական բնույթի և հայ բարբառների տեսության հարցերը, «Վէմ» համահայկական հանդես, N 3 (87), 2024, էջ 109-137:
20. Սանթոյան Ա.Մ., **Հովհաննիսյան Ն.Գ.,** Զուգաբայական հարադրությունների կառուցվածքային առանձնահատկությունները, «Վէմ» համահայկական հանդէս, N 2 (86), Ե., 2024, էջ 156-176:
21. Յովհաննիսեան Ն.Գ., «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում վկայուող բառիմաստների մասին (ԺԲ.-ԺԷ. դարեր), «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-12, Վիեննա, 2024, էջ 93-114:
22. Ղամոյան Լ.Ա., Հայերենի ստուգաբանական բառարաններում արձանագրված «հագուստ» իմաստային դաշտին վերաբերող անհայտ ծագման բառերի դիտարկում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Ե., 2024, էջ 380-390:
23. Ղամոյան Լ.Ա., «Անձնական զարդարանք» իմաստային (թեմատիկ) խումբը հայերենում, «Պատմաբանասիրական հանդես», N 2 (226), Ե., 2024, էջ 122-134:

24. Ղամոյան Լ.Ա., «Անձնական զարդարանք» իմաստային (թեմատիկ) խմբի քննություն հայերենի բարբառներում, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N 2 (44), Ե., 2024, էջ 70-79:
25. Մարգարյան Լ., Արցախի տեղանվանական համակարգի շրջանաբաժանման փորձ, «Պատմաբանասիրական հանդես», N 3 (227), Ե., 2024, էջ 117-130:
26. Մեսրոպյան Հ.Հ., Գրաբարի հնչյունական եւ բառապաշարային որոշ իրողություններ հայերենի բարբառներում, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N 2 (44), Ե., 2024, էջ 61-69:
27. Մեսրոպյան Հ. Հ., Կոմիտաս վարդապետի և Մանուկ Աբեղյանի գրառած խաղիկներում գործածված բուսանունների իմաստային-գործառական առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N 3 (45), Ե., 2024, էջ 54-66:
28. Մեսրոպեան Հ.Հ., Պօղոսյան Ա.Կ., Հայոց դիւցազնավէպի լեզուի և գրառման առանձնայատկութիւնների մասին, «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-12, Վիեննա, 2024, էջ 115-132:
29. Մեսրոպյան Հ.Հ., Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի բարբառային հրատարակությունները, Մայր աթոռ Սուրբ Էջիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի հիմնադրման 10-ամյակին նվիրված գիտաժողովի զեկույցների ժողովածու, Ս. Էջմիածին, 2024, էջ 17-29:
30. Մեսրոպյան Հ.Հ., Ռշտունիքի ժողովրդական հեքիաթներում գործածված բուսանունների իմաստային-գործառական առանձնահատկությունները, «Հեքիաթի բանագիտական քննություն. Ժանրային խաչաձևումներ և փոխակերպումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2024, էջ 69-71:
31. Մեսրոպյան Հ. Հ., Լեզվի հարցերը «Մշակ» լրագրում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., Ե., 2024, էջ 395-410:
32. Մեսրոպյան Հ. Հ., Համբարձումյան Ս.Կ., Տայքի հայերի տեղաշարժերի և լեզվատարածքային առանձնահատկությունների

մասին, «Տայքը պատմության խաչուղիներում» գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2024, էջ 192- 205:
33. Մեսրոպեան Հ.Հ., Սիւնիքի տարածաշրջանի բուսանուններն ըստ «Ազգագրական հանդէսի», «Էջմիածին» ամսագիր, Վաղարշապատ, № Է, 2024, էջ 79-93:
34. Մկրտչյան Մ., Նշանագիտական թարգմանության առանձնահատկությունները տեսողական հաղորդակցությունում. «իմ սիրուն» գովազդային արշավի օրինակով, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի. Լեզվաբանություն և բանասիրություն, 1(68), Ե., 2024, էջ 201–218:
35. Ներսիսյան Վ.Ա., Բառակազմության տեսական հարցերի քննությունը Գր. Ղափանցյանի աշխատություններում, «Հայոց լեզվի ուսուցման և ուսումնասիրման խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., 2024, էջ 110-121:
36. Ներսիսյան Վ.Ա., Ավետիսյան Ա., Բառակազմության ուսումնասիրումը երկրորդ դասարանում, «Հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի նյութեր, ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Ե., 2024, էջ 81-90:
37. Ներսիսյան Վ. Ա., Նոր բառերի թարգմանական (հայերեն-ռուսերեն-անգլերեն) առցանց բառարանի ստեղծում. անհրաժեշտությունն ու խնդիրները, Բանբեր Հայաստանի գրադարանների, 2, Ե., 2024, էջ 163-167:
38. Պապիկյան Ս.Վ., Հունալատինական ծագման հատկական փոխառությունների քննություն, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Ե., 2024, էջ 391-398:
39. Սարգսյան Ա. Յու., Մինասյան Ճ. Մ., Ղարաբաղի բարբառը Լավրենտի Հովհաննիսյանի ուսումնասիրություններում, «Պատմաբանասիրական հանդես», N 3 (227), Ե., 2024, էջ 89-92:
40. Սարգսյան Ն.Մ., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները հրամայական եղանակի համակարգում. բուն հրա-

մայական (եզակի թիվ), «Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. հումանիտար և հասարակական գիտություններ», N 1, Վանաձոր, 2024,էջ 69-79։
41. Սուքիասյան Հ., Ավետիսյան Ա., Հայերեն բժշկական տերմինաբանության աղբյուրները, ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա, Գիտաժողովի նյութերի ժողովածու (էլեկտրոնային), Ե., 2024, էջ 136-150։
42. Սուքիասյան Հ., Զաքարյան Հ., Բժշկական եզրույթների հայերենացման անհրաժեշտությունը, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական հետազոտություններ (բանասիրություն), 1(27), Գյումրի, 2024, էջ 113-128։
43. Վարդանյան Ա.Վ., Պաշտոնական հայերենի մի քանի եզրույթների գործածության սխալների մասին, Գավառի պետական համալսարանի 27-րդ գիտաժողովի նյութեր, Ե., 2024, էջ 409-417։
44. Վարդանյան Ա.Վ., Օծուփ-Հորսի խոսվածքի առնչությունները շրջակա բարբառների հետ, «Պատմաբանասիրական հանդես», N 2 (226), Ե., 2024, էջ 107-112։
45. Ֆելեքյան Մ.Հ., Անձնական դերանունների բառարանագրումը, «Պատմաբանասիրական հանդես», N 2 (226), Ե., 2024, էջ 113-121։
46. Ֆելեքյան Մ.Հ., Բառակազմական ձևույթների բազմիմաստությունն ու համանունությունը արդի հայերենում, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N 2 (44), Ե., 2024, էջ 91-100։
47. Ֆիշենկճեան Ա.Ա., Հայրենիք սփիւռք համագործակցութիւնը եւ արեւմտահայերէնի դերն ու նշանակութիւնը, Հայաստան-սփյուռք համահայկական 11-րդ կրթական խորհրդաժողով, Ե., 2024, էջ 54-62։
48. Arakelyan K.L., Moon in the Poetry of Misak Metsarents and it’s Ligual-stylistic Features, "Communications of the Byurakan Astrophysical Observatory" (ComBAO), vol.71, issue 1, Yerevan, 2024, p. 158-161.

49. Avetyan S.R., On Certain Disputable and/or Unexplained Forms of the Imperative in Modern Armenian Dialects, "Bulletin of Yerevan Yniversity. Phililogy", N 3 (45), Yerevan, 2024, p. 88-98.
50. Dalalyan T.S., Verzhine Svazlyan: the Tireless Ethnographer and Folklorist (on Her 90th Anniversary) // Review of Armenian Studies (Բանբեր հայագիտության), Yerevan, «Gitutyun», 2024, № 1 (34), 226-231.
51. Dalalyan T.S., La standardisation et le développement de l'arménien occidental dans le journal *Haratch*: quelques observations // Études arméniennes contemporaines, № 15: La presse de langues arménienne en France et la création d'un espace transnational (sous la direction de Talar Chahinian et Stéphanie Prévost), Paris: Bibliothèque Nubar de l'UGAB, 2024, p. 201-210.
52. Gevorgyan G.G., Armenian Dialects of mixed mode of formation, "Philological Researches", N 8, Gori,2024, p. 22-29.
53. Grigoryan S.M., Semantic and operational examination of a number of term words of Grigor Tatevats, "Language and Culture", N 9, Kutaisi, 2024, p. 51-54:
54. Kumunts M.S., Margaryan I., Khachatryan H.R., Mkhitaryan G.M., Gevorgyan G.G., Nersisyan L., Katvalyan V.L., The Historical Development of the Place Name in Armenian (Etymology of "Harzhis" Sacred Area), "Forum for Liguistic Studies", vol. 6, Singapore, 2024, p. 43-53.
55. Tioyan S.K., Gasparyan S.Q., Onomatopoeia of Armenian Language, "Onomatopoeia in the World's Languages", de Gruyter, Berlin/ Boston, 2024, p.375-389.
56. Андреева Ю.О., Гуляева Е.Ю., **Далалян Т.С.,** Религиозные практики армян Ордубадского района Нахичеванской АССР в 1950-1980-е гг., "История, археология и этнография Кавказа", т. 20, N 1, Махачкала, 2024, с. 154-168.
57. Месропян А., Влияние христианской религии на лексический запас армянского языка, «Золотой V век армянской культуры: достижения. мировое значение», Сб. статей, Институт мировой

литературы им. А.М. Горького РАН, Российская и Ново-нахичеванская епархия ААЦ, Ассоциация арменоведов, Издательство «Ключ-С», Москва, 2024, с. 270-278.
58. Симонян Н.М., Этимологические заметки, "Language and Culture", N 31, Кутаиси, 2024, с. 67-71.
59. Симонян Н.М., Этимологические заметки, "Language and Culture", N 32, Кутаиси, 2024, с. 72-77.

*** Հոդվածները հրապարակվել են «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսում, 1 (30), Ե., ԼԻ հրատ., 2024, 105 էջ:**
https://language.sci.am/hy/language-and-linguistics/lezow-ew-lezvabanowtyown-130-2024.html

1. Համբարձումյան Վ.Գ., Հայերեն ստուգաբանություններ, էջ 3-12:
2. Սիմոնյան Ն.Մ., Մկրտչյան Մ.Ս., Փոխաբերություն երևույթը և նրա բնորոշումը լեզվաբանության մեջ, էջ 13-25:
3. Պապիկյան Ս.Վ., Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» պոեմի հայերեն թարգմանության հատկական փոխառությունների քննություն, էջ 26-37:
4. Միքայելյան Ս.Ա., Հայերենի արաբերեն միջնորդավորված փոխառությունների շուրջ (թուրքերենով միջնորդավորված բառաշերտ), էջ 38-51:
5. Սարգսյան Մ.Ա., Բաղրամյան Ս.Ե., Հայերենը որպես սփյուռքի լեզու. մարտահրավերներ և խնդիրներ, էջ 81-92:

*** Հոդվածները հրապարակվել են «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսում, 2 (31), Ե., ԼԻ հրատ., 2024, 100 էջ:**
https://language.sci.am/sites/default/files/languageAndLinguistics/lezow_ew_lezvabanowtyown_231_2024_0.pdf

1. Սիրունյան Տ.Դ., Ոսկան Երևանցու թարգմանած քերականությունը. հեղինակային միջամտությունների հարցի շուրջ, էջ 3-11:

2. Տիոյան Ս.Կ., Խաչիբաբյան Ն., Օտարաբանությունների խնդիրը արդի գրական արևմտահայերենում, էջ 12-19:
3. Գրիգորյան Գ.Գ., Դիմակի ազդեցությունը խոսքի ընկալման վրա, էջ 44 -57:

*** Հոդվածները հրապարակվել են «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հանդեսում, 1 (21), Ե., ԼԻ հրատ., 2024, 150 էջ:**
https://language.sci.am/hy/jahukyan-readings/jahowkyanakan-entertsowmner-2024-21.html

1. Դալալյան Տ.Ս. «Թաքուն, քողարկված» հասկացության բայանվանական և գոյականական դրսևորումները վաղնջահայերենից եկող մի արմատի հայ-իրանական ստուգաբանական քննության լույսի ներքո, էջ 5-18.
2. Խաչատրյան Հ.Ռ., Բասենի խոսվածքը Շիրակի մարզում (քերականական առանձնահատկություններ), էջ 61-75:
3. Կատվալյան Վ.Լ., Շիրակի մարզի խոսվածքներին բնորոշ մի քանի բառերի մասին, էջ 76-88:
4. Վարդանյան Ա. Վ., Մարաղայի բարբառի խոսվածքներ Նախիջևանի տարածքում, էջ 89-100:
5. Ֆիշենկճեան Ա.Ա., Գրական արեւմտահայերէնի քերականական համակարգի տեղաշարժերը՝ ըստ արեւմտահայերէնի առկայ դասագիրքերու (բայ), էջ 101-123:
6. Գրիգորյան Գ.Գ., Փորձառական տվյալներ հայերեն խոսքում դադարների դրսևորման վերաբերյալ, էջ 124-141.

***Հոդվածները հրապարակվել են «Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2024, 182 էջ:**
https://language.sci.am/sites/default/files/hayots_lezvi_owsowmnasirowtyan_ew_owsowtsman_ardi_khndirner_mijazgayin_gitazhoghovi_nyowter.pdf

1. Ասոյան Թ.Ա., Մխիթարյանների մանկավարժական գործունեության շուրջ, էջ 29-34:
2. Գալստյան Ա.Ս., Օտարալեզու բաղադրիչով նորակազմ բառերի քննություն, էջ 47-51:
3. Թելյան Լ.Գ., Շարահյուսական մի կառույցի գնահատության մասին, էջ 52-58:
4. Հակոբյան Ֆ.Ա., Հայերենի մեքենական մշակման խնդիրներ, էջ 82-89:
5. Ներսիսյան Վ.Ա., Բառակազմության տեսական հարցերի քննությունը Գրիգոր Ղափանցյանի աշխատություններում, էջ 110-121:
6. Սուքիասյան Հ.Վ., Նկատառումներ ՀՀ լեզվակրթական քաղաքականության շուրջ, էջ 155-160:
7. Վարդանյան Ա.Վ., Բառագործածության մի շարք սխալների մասին, էջ 170-176:

***Հոդվածները հրապարակվել են «Բառագիտության արդի խնդիրներ. Հ.Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ, 2024, 103 էջ:**
https://language.sci.am/sites/default/files/barhagitowtyan_ardi_khndirner.pdf

1. Գալստյան Ա.Ս., Թելյան Լ.Գ., Հայերենի *անել* բայի իմաստագործառական քննություն, էջ 3-10:
2. Խաչատրյան Վ.Մ., Հայերենի խառը հապավումները. դասակարգման, տարբերակման և գրության որոշ խնդիրներ, էջ 11-33:
3. Խաչատրյան Օ.Մ., Տիոյան Ս.Կ., Կիրառական արվեստի մի քանի տերմինների շուրջ, էջ 34-39:
4. Հակոբյան Ֆ.Ա., The Impact of Artificial Intelligence on Modern Electronic Lexicography, p. 40-52:
5. Հակոբյան Ֆ.Ա., Նոր բառերի ներկայացման եղանակները հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարանում, էջ 53-66:

6. Հովսեփյան Գ.Կ., Նորակազմ ներունակ բառերը ժամանակակից հայերենում (ըստ «Նոր բառեր»-ի բառարանաշարի), էջ 67-76:
7. Մարգարյան Ի.Մ., Արդի հայերենի նորակազմությունները հեռուստատեսության խոսքում, էջ 77-91:

***Հոդվածները հրապարակվել են «Արևմտահայերենը 21-րդ դարում. մարտահրավերներ և հնարավորություններ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2024, 128 էջ:**

1. Ֆիշենկճեան Ա. Ա., Կապերու շարահիւսական կիրառութիւնը արեւմտահայերէնի մէջ, էջ 3-12:
2. Խպլիկեան Ձ. Գ., Մարաշլեան Յ.Գ., Արեւմտահայերէն խօսքը Հայաստանի մէջ, էջ 13-28:
3. Ափոշեան Ա. Յ., Արեւելահայերէնէն արեւմտահայերէն փոխադրելու արդի հիմնախնդիրները. քերականութիւն եւ եզրութաբանութիւն, էջ 29-40:
4. Խաչատրյան Վ. Մ., Գոյականի հոգնակիակազմության խնդիրները արևմտահայերենում, էջ 41-63:
5. Տիոյեան Ս.Կ., Խպլիկեան Ձ.Գ., «Հակադիր» իմաստներ արեւմտահայերէն-արեւելահայերէն բառապաշարին մէջ, էջ 87-95:
6. Մարաշլեան Յ.Գ., Արևմտահայերէնի կենսունակութեան պայմանները, էջ 95-105:

***Հոդվածները հրապարակվել են «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2024, 269 էջ:**

1. Ավետյան Ս. Ռ., Some Diachronic Observations on Forms of the Aorist with a Vocalic Augment in the Dialect of Šatax, p. 3-9.
2. Բառնասյան Ջ. Ա., Երկբարբառացումը որպես քերականական միջոց հայերենի որոշ բարբառներում, էջ 20-28:

3. Գևորգյան Գ. Գ., Դիտարկումներ Սևերեկի, Տիգրանակերտի և Եդեսիայի հնչյունական առնչությունների շուրջ, էջ 29-42:
4. Զաքարյան Հ. Լ., Բարբառային մի հնաբանության մասին, էջ 43-61:
5. Խաչատրյան Հ. Ռ., Դիտարկումներ Համշենի բարբառի հնչյունական առանձնահատկությունների շուրջ, էջ 62-83:
6. Խաչատրյան Վ. Մ., Հինգերորդ դարի հայերեն բարբառների հարցը հայերենագիտության մեջ, էջ 84-113:
7. Կատվալյան Վ. Լ., Խառատյան Մ. Հ., Սահակյան Ն. Գ., Շարահյուսական որոշ զուգաբանությունների արտահայտությունը բարբառային հայերենում, էջ 114-130:
8. Մարգարյան Ի. Ա., Չբառարանագրված դարձվածքներ Գորիսի բարբառում, էջ 131-147:
9. Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի առաջին ուսումնասիրությունները, էջ 176-188:
10. Վարդանյան Ա. Վ., Դիտարկումներ Ջուղայի բարբառի վերաբերյալ տարաժամանակյա հայեցակետով, էջ 189-200:
11. Քումունց Մ. Ս., Բաբայան Ա., Ածանցումը Գորիսի բարբառում, էջ 201-228:
12. Քումունց Մ. Ս., Բակունց Ա., Դարձվածքները Ա. Բակունցի «Կյորես» վիպակում (համեմատական քննություն), էջ 229-248:
13. Քումունց Մ. Ս., Բաղդասարյան Մ., Կապի հնչյունական, բառային և քերականական դրսևորումները Գորիսի բարբառում, էջ 230-249:
14. Քումունց Մ. Ս., Մարգարյան Մ., Արևելյան լեզուներից անցած փոխառությունները Գորիսի բարբառում (ըստ Ս. Խանզադյանի «Մատյան եղելությանց» վիպակի), էջ 250-269:

***Հոդվածները հրապարակվել են «Հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., «Ալվարդ Օհանջանյան Վաղլենի» ԱՁ հրատ., 2024, 620 էջ:**
https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/Gitajoghov_2024.pdf

1. Սարգսյան Մ. Ա., Մոլոդիչենկո Ե., Հայերենի ուսուցումը միջմշակութային հաղորդակցության միջոցով. պատկերացումներ և հեռանկարներ, էջ 21-27:
2. Ավագյան Օ. Ս., Ժամանակակից արևելահայերենի լեզվական իրավիճակը և գրական լեզվի զարգացման միտումները, էջ 39-51:
3. Ներսիսյան Վ. Ա., Ավետիսյան Ա. Ա., Բառակազմության ուսումնասիրումը երկրորդ դասարանում, էջ 81-90:
4. Միքայելյան Ս.Ա., Հայերենում և ռուսերենում գործածվող արաբերեն փոխառյալ բառերի շուրջ, էջ 91-96:
5. Խաչիբաբյան Ն. Պ., Բաղրամյան Ս. Ե., Գենդերային դրսևորումները հայերեն առածներում և ասացվածքներում, էջ 97-106:

***Հոդվածները հրապարակվել են «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2024, 173 էջ:**
https://language.sci.am/sites/default/files/hlp_gitazhoghovi_nyowter_07.12.pdf

1. Մխիթարյան Գ.Մ., Հայերեն Աստվածաշնչում սեռական, տրական հոլովներով ենթակաների գործածության շուրջ, էջ 5-10:
2. Ափոշեան Ա.Յ., Յատուկ անուններու տառադարձութեան խնդիրները արեւմտահայերէնի մէջ. պատմական զարգացումն ու զուգընթացութիւնը արեւելահայերէնի հետ, էջ 34-49:
3. Գրիգորյան Ս.Մ., Իրավական հասկացությունները Գ. Տաթևացու «Գիրք Քարոզության» Ամառան հատորի «Նորին քարոզ վասըն տասնաբանեան օրէնս» գլուխներում, էջ 50-60:
4. Թադևոսյան Հ.Մ., Բառակապակցական բուսանունների կիրառությունը Ա. Ամասիացու բժշկարաններում, էջ 78-86:
5. Խաչատրյան Վ.Մ., Միջինհայերենյան փոխառությունների գործածությունը XIV դարի երկերում, էջ 87-103:

6. Խպլիկեան Զ.Գ., Հայերենէ անգլերէն զրուցատրութիւն, էջ 104-110:
7. Սիրունյան Տ.Ղ., Բարդուղիմեոս Բոլոնիացու «Դիալեկտիկայի» քերականական լատինաբանությունները՝ վաղ և ուշ շրջանի ձեռագրերի համեմատությամբ, էջ 120-127:

# ՄԱՍ II

## ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2024 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

## Ա. ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2024 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

### ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

«Արեւմտահայերէնը 21-րդ դարում. մարտահրավերներ և հնարավորություններ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ, 2024, 128 էջ:

«Բառագիտության արդի խնդիրներ. Հ. Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր», Ե., ԼԻ հրատ., 2024, 103 էջ:

Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2024, 182 էջ:

### ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Առաքելյան Կ.Լ., Պատկերավորման լեզվական միջոցների երգիծաստեղծ դերը Նշան Պեշիկթաշլյանի ծաղրանկարներում, Բանբեր հայագիտության, Ե., 2024, № 1, էջ 163-181:
2. Առաքելյան Կ.Լ., Երգիծանքի լեզվաոճական միջոցները Նշան Պեշիկթաշլյանի չափածոյում, Վէմ, համահայկական հանդես, Ե., 2024,թ. 2, էջ 137-155:

3. Առաքելյան Կ.Լ., Երգիծանքի լեզվոճական միջոցները Առանձա-րի «Վշտի ծիծաղ» ժողովածուում, «Լրաբեր հասարակական գի-տությունների», թիվ 3, Ե., 2024, էջ 168-177:
4. Առաքելյան Կ.Լ., Պարույր Սևակի լեզվական արվեստն ուսում-նասիրողն ու բացահայտողը. Արտաշես Պապոյան, Պարույր Սե-վակ-100 հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2024, էջ 246-259:
5. Առաքելյան Կ.Լ., Երգիծական հեքիաթը և նրա լեզվաոճական առանձնահատկությունները Նշան Պեշիկթաշլյանի մշակումնե-րում, «Հեքիաթի բանագիտական քննություն, ժանրային խաչա-ձևումներ և փոխակերպումներ» միջազգային գիտաժողով՝ նվիր-ված Արտաշես Նազինյանի ծննդյան 100-ամյակին, Ե., 2024, էջ 102-106:
6. Ասոյան Թ.Ա., Մխիթարյանների բառարանագրական գործունե-ության շուրջ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Ե., 2024, էջ 337-342:
7. Ասոյան Թ.Ա., Մխիթարյանների մանկավարժական գործունեու-թյան շուրջ, Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2024, էջ 29-35:
8. Ավազյան Օ.Ս., Ժամանակակից արևելահայերենի լեզվական ի-րավիճակը և գրական լեզվի զարգացման միտումները, «Հետա-զոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովա-ծու, «Ալվարդ Օհանջանյան Վառլենի» ԱՁ հրատ., Ե., 2024, էջ39-51:
9. Բարսեղյան Ա.Գ., Շարահյուսական կապակցության եղանակ-ների (խնդրառության) դրսևորումները արդի գեղարվեստական արձակում, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2 (671), Ե., 2024, էջ 272-279:
10. Բարսեղյան Ա.Գ., Կապակցության ներտեքստային միջոցները արդի գեղարվեստական (արձակ) խոսքում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Ե., 2024, էջ 427-436:

11. Գալստյան Ա.Ս., Օտարալեզու բաղադրիչով նորակազմ բառերի քննություն, «Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 47-51:
12. Գալստյան Ա.Ս., Թելյան Լ.Գ., Հայերենի *անել* բայի իմաստագործառական քննություն, «Բառագիտության արդի խնդիրներ. Հ.Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ, 2024, էջ 3-10:
13. Թելյան Լ.Գ., Շարահյուսական մի կառույցի գնահատության մասին, «Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 52-58:
14. Խաչատրյան Օ.Մ., Տիոյան Ս.Կ., Կիրառական արվեստի մի քանի տերմինների շուրջ, «Բառագիտության արդի խնդիրներ. Հ. Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու», Ե., ԼԻ հրատ, 2024, էջ 34-39:
15. Խաչիբաբյան Ն.Պ., Բաղրամյան Ս.Ե., Գենդերային դրսևորումները հայերեն առածներում և ասացվածքներում, «Հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, «Ալվարդ Օհանջանյան Վառլենի» ԱՁ հրատ., Ե., 2024, էջ 97-106:
16. Խպլիկեան Զ.Գ., Քիլէրճեան Պ., Առցանց հարթակներու դերը արեւմտահայերէնի գոյատեւման գործին մէջ, Հայագիտության և լեզվաբանության հարցեր: Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., Լինգվա, 2024, էջ 151-163:
17. Խպլիկեան Զ.Գ., Հայերէնէ անգլերէն զրուցատրութիւն, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 104-110.
18. Խպլիկեան Զ.Գ., Մարաշլեան Յ.Գ., Արեւմտահայերէն խօսքը Հայաստանի մէջ, «Արևմտահայերենը 21-րդ դարում. Մարտա-

հրավերներ և հնարավորություններ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 13-28:
19. Հակոբյան Ֆ.Ա., Հայերենի մեքենական մշակման խնդիրներ, «Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 82-89:
20. Հակոբյան Ֆ.Ա., The Impact of Artificial Intelligence on Modern Electronic Lexicography, «Բառագիտության արդի խնդիրներ. Հ.Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու», Ե., ԼԻ հրատ, 2024, 40-52:
21. Հակոբյան Ֆ.Ա., Նոր բառերի ներկայացման եղանակները հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարանում, «Բառագիտության արդի խնդիրներ. Հ.Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու», Ե., ԼԻ հրատ, 2024, էջ 53-66:
22. Հովսեփյան Գ.Կ., Նորակազմ ներունակ բառերը ժամանակակից հայերենում (ըստ «Նոր բառեր»-ի բառարանաշարի), «Բառագիտության արդի խնդիրներ. Հ. Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու», Ե., ԼԻ հրատ, 2024, էջ 67-76:
23. Ղամոյան Լ.Ա., Հայերենի ստուգաբանական բառարաններում արձանագրված «հագուստ» իմաստային դաշտին վերաբերող անհայտ ծագման բառերի դիտարկում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Ե., 2024, էջ 380-390:
24. Ղամոյան Լ.Ա., «Անձնական զարդարանք» իմաստային (թեմատիկ) խումբը հայերենում, «Պատմաբանասիրական հանդես», N 2 (226), Ե., 2024, էջ 122-134:
25. Ղամոյան Լ.Ա., «Անձնական զարդարանք» իմաստային (թեմատիկ) խմբի քննություն հայերենի բարբառներում, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N 2 (44), Ե., 2024, էջ 70-79:
26. Մարաշլեան Յ.Գ., Արևմտահայերէնի կենսունակութեան պայմանները, «Արևմտահայերենը 21-րդ դարում. մարտահրավեր-

ներ և հնարավորություններ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե.,ԼԻ հրատ., 2024, էջ 95-105:

27. Մարգարյան Ի.Մ., Արդի հայերենի նորակազմությունները հեռուստատեսության խոսքում, Բառագիտության արդի խնդիրներ. Հ. Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու», Ե., ԼԻ հրատ, 2024,էջ 77-91:
28. Մարգարյան Ի.Ա., Չբառարանագրված դարձվածքներ Գորիսի բարբառում, «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 131-147:
29. Մարգարյան Լ., Արցախի տեղանվանական համակարգի շրջանաբաժանման փորձ, «Պատմաբանասիրական հանդես», N 3 (227), Ե., 2024, էջ 117-130:
30. Ներսիսյան Վ. Ա., Բառակազմության տեսական հարցերի քննությունը Գր. Ղափանցյանի աշխատություններում, «Հայոց լեզվի ուսուցման և ուսումնասիրման խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., 2024, էջ 110-121:
31. Ներսիսյան Վ. Ա., Ավետիսյան Ա., Բառակազմության ուսումնասիրումը երկրորդ դասարանում, «Հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի նյութեր, ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Ե., 2024, էջ 81-90:
32. Ներսիսյան Վ. Ա., Նոր բառերի թարգմանական (հայերեն-ռուսերեն-անգլերեն) առցանց բառարանի ստեղծում. անհրաժեշտությունն ու խնդիրները, Բանբեր Հայաստանի գրադարանների, 2, Ե., 2024, էջ 163-167:
33. Պապիկյան Ս.Վ., Հունալատինական ծագման հատկական փոխառությունների քննություն,ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 17, Ե., 2024, էջ 391-398:

34. Պապիկյան Ս.Վ., Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» պոեմի հայերեն թարգմանության հատկական փոխառությունների քննություն, «Լեզու և լեզվաբանություն», 1 (30), Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 26-37:
35. Սարգսյան Ա. Յու., Մինասյան Շ.Մ., Ղարաբաղի բարբառը Լավրենտի Հովհաննիսյանի ուսումնասիրություններում, «Պատմաբանասիրական հանդես», (227), Ե., 2024, էջ 89-92:
36. Սարգսյան Ն.Մ., Միջին հայերեն- արևմտահայերեն փոխանցումները հրամայական եղանակի համակարգում. բուն հրամայական (եզակի թիվ), «Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. հումանիտար և հասարակական գիտություններ», 1, Վանաձոր, 2024, էջ 69-79:
37. Սուքիասյան Հ., Ավետիսյան Ա., Հայերեն բժշկական տերմինաբանության աղբյուրները, ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա, Գիտաժողովի նյութերի ժողովածու (էլեկտրոնային), Ե., 2024, էջ 136-150:
38. Սուքիասյան Հ., Զաքարյան Հ., Բժշկական եզրույթների հայերենացման անհրաժեշտությունը, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական հետազոտություններ (բանասիրություն), 1(27), Գյումրի, 2024, էջ 113-128:
39. Սուքիասյան Հ.Վ., Նկատառումներ ՀՀ լեզվակրթական քաղաքականության շուրջ, «Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 155-160:
40. Տիրյեան Ս.Կ., Խպլիկեան Զ.Գ., «Հակադիր» իմաստներ արեւմըտահայերէն-արեւելահայերէն բառապաշարին մէջ, «Արևմտահայերենը 21-րդ դարում. մարտահրավերներ և հնարավորություններ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 87-95:
41. Տիրյեան Ս.Կ., Խաչիբաբյան Ն., Օտարաբանությունների խնդիրը արդի գրական արևմտահայերենում, «Լեզու և լեզվաբանություն», 2 (31), Ե., 2024, էջ 12-19:

42. Ֆելեքյան Մ.Հ., Անձնական դերանունների բառարանագրումը, «Պատմաբանասիրական հանդես», N 2 (226), Ե., 2024, էջ 113-121։
43. Ֆելեքյան Մ.Հ., Բառակազմական ձևույթների բազմիմաստությունն ու համանունությունը արդի հայերենում, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N 2 (44), Ե., 2024, էջ 91-100։
44. Ֆիշենկճեան Ա.Ա., Գրական արեւմտահայերէնի քերականական համակարգի տեղաշարժերը՝ ըստ արեւմտահայերէնի առկայ դասագիրքերու (բայ), «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (21), Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 101-123։
45. Ֆիշենկճեան Ա.Ա., Կապերու շարահիւսական կիրառութիւնը արեւմտահայերէնի մէջ, «Արևմտահայերենը 21-րդ դարում. մարտահրավերներ և հնարավորություններ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե.,ԼԻ հրատ., 2024, էջ 3-12։
46. Arakelyan K.L., Moon in the Poetry of Misak Metsarents and it’s Ligual-stylistic Features, Yerevan, "Communications of the Byurakan Astrophysical Observatory" (ComBAO), vol.71, issue 1, Yerevan, 2024, p. 158-161.
47. Tioyan S.K., Gasparyan S.Q., Onomatopoeia of Armenian Language, "Onomatopoeia in the World’s Languages", de Gruyter, Berlin/Boston, 2024, p. 375-389.

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

### Առաքելյան Կ.,Պատկերավորման լեզվական միջոցների երգիծաստեղծ դերը Նշան Պեշիկթաշլյանի ծաղրանկարներում
(հոդված)

Հոդվածում նշվում է, որ ֆրանսահայ անվանի գրող Նշան Պեշիկթաշլյանն առավել հայտնի է որպես երգիծաբան։ Նա նոր շունչ է հաղորդել գրական-երգիծական դիմանկարի ժանրին, որի վառ ա-

պացույցն են նրա հեղինակած հարյուրից ավելի դիմանկարները: Դիմանկարներն աչքի են ընկնում տարբեր արժանիքներով՝ գաղափարական, գեղարվեստական և այլն: Դրանցից մեկն է ճոխ լեզուն և պատկերավոր խոսքը, որին խիստ նպաստել են պատկերավորման լեզվական միջոցների առատությունը, դրանց ճիշտ ու տեղին կիրառությունը: Հոդվածում քննվում են դիմանկարներում առկա չափազանցությունները, նվազաբանությունները, փոխաբերությունները, համեմատությունները, հակադրույթները, դրանց ոճաստեղծ ու երգիծաստեղծ դերը: Հաճախ հենց այս միավորներն են դառնում խոսքի միջուկն ու ատաղձը՝ հաղորդելով հոգեբանական հազեցվածություն, փիլիսոփայական խորը ենթատեքստ, երգիծական բովանդակություն:

**Առաքելյան Կ., Երգիծանքի լեզվաոճական միջոցները Նշան Պեշիկթաշլյանի չափածոյում** (հոդված)

Հոդվածագիրն անդրադարձել է Նշան Պեշիկթաշլյանի չափածո ստեղծագործություններում՝ տաղերում, զրույցներում, առակներում, հեքիաթներում, դրսևորված երգիծանքի առանձնահատկություններին: Նշվում է, որ չափածոյի նյութը Նշան Պեշիկթաշլյանը հիմնականում վերցրել է ժողովրդական ստեղծագործություններից՝ հայկական, արաբական, հնդկական և այլն, մշակել ու ստեղծել է գեղարվեստական բարձրարժեք գործեր:

Նշան Պեշիկթաշլյանի երգիծական չափածոն աչքի է ընկնում գաղափարական, գեղարվեստական, գեղագիտական արժանիքներով, ճոխ լեզվով և պատկերավոր խոսքով, որոնց հասնելու համար նա դիմել է լեզվական և պատկերավորման զանազան միջոցների: Հոդվածում փաստվում է, որ ոճական առումով այս միավորների հնարավորություններն անհելի են, և հաճախ սրանց են առնչվում խոսքի արտահայտչականությունը, հազեցվածությունը, ազդեցիկությունը, աշխուժությունը և այլն: Համեմատությունները, փոխաբերությունները, չափազանցությունները, հակադրույթները, կրկնությունները խոսքը հարստացրել են տարբեր

նրբերանգներով, հաղորդել այլաբանական նշանակություն, երգիծական բնույթ:

**Առաքելյան Կ., Երգիծանքի լեզվոճական միջոցները Առանձարի «Վշտի ծիծաղ» ժողովածուում** (հոդված)

Հոդվածում վերլուծվում է արևմտահայ երգիծաբանության ներկայացուցիչ Առանձարի՝ Միսաք Գույումճյանի՝ 1905 թ. լույս տեսած «Վշտի ծիծաղ» ժողովածուն, որը ներկայացնում է Երկրի հայության կյանքը Օսմանյան բռնատիրության ժամանակ, հայերի բարքերն ու տառապանքը՝ համեմված երգիծական տարրով: Երգիծանքը դրսևորվել է տարբեր կերպ՝ հումոր, զվարթախոսություն, հեգնանք և այլն: Առանձարի ստեղծագործությունը, գաղափարական, գեղագիտական և այլ արժանիքներից բացի, առանձնանում է մատչելի, պատկերավոր լեզվով, որին խիստ նպաստում են պատկերավորման լեզվական միջոցների առատությունը, դրանց ճիշտ ու տեղին կիրառությունը: Փոխաբերությունները, համեմատությունները, հակադրույթները խոսքը հարստացնում են տարբեր նրբերանգներով, հաղորդում այլաբանական նշանակություն, երգիծական իմաստ: Երգիծանքը, ըստ հոդվածագրի, դրսևորվում է տարբեր կերպ՝ հումորային, հեգնական և այլն: Նշվում է, որ Առանձարի պատմվածքներում հականիշներն ունեն լայն գործածություն և ուրույն ոճական դեր:

**Առաքելյան Կ., Լուսինը Միսաք Մեծարենցի ստեղծագործության մեջ և նրա լեզվաոճական առանձնահատկությունները**
(հոդված/անգլերեն)

Հոդվածում նշվում է, որ երկնային մարմինները, լուսատուներն ու երևույթներն ուղեկցել են մարդկությանը վաղնջական ժամանակներից: Երկնային լուսատուները եղել են բանաստեղծների ներշնչման անսպառ աղբյուր: Երկնային մարմիններն ու երևույթ-

ները հաճախ ծառայել են որպես միջոց՝ բացահայտելու մարդու ներաշխարհը, նրա անցած ճանապարհը, գալիքի հույսերն ու սպասումները: Այս իմաստով, ըստ հոդվածագրի,բացառություն չէ XX դարասկզբի արևմտահայ քնարերգությունը:

Մեծարենցի քնարերգության մեջ առկա են երկնային մարմիններ, լուսատուներ և երևույթներ նշող *արև*, *աստղ, աստղ, լուսին* բառերը, և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստներով գործածվում են նաև հոմանիշներ՝ *լուսինկա, լուսնակ, լիալուսին, լիալուսնակ, կիսալուսին, մահիկ:* Այս միավորները շատ հաճախ դառնում են բանաստեղծական պատկերի միջուկ ու ատաղձ, խոսքին հաղորդում ամենատարբեր նրբերանգներ, ինքնատիպություն:

### Առաքելյան Կ., Պարույր Սևակի լեզվական արվեստն ուսումնասիրողն ու բացահայտողը. Արտաշես Պապոյան (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ Պարույր Սևակի ստեղծագործությունների լեզվական արվեստը հանգամանորեն քննել է անվանի լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտաշես Պապոյանը: Հոդվածի նպատակն է լուսաբանել անվանի գիտնականի աշխատանքն այս ուղղությամբ, ներկայացնել Սևակի լեզվական արվեստին նվիրված երեք մենագրությունների գիտական արժեքը, դրանց մնայուն տեղը հայագիտության մեջ, առաջ քաշված թեզերի կենսունակությունը:

Փաստվում է, որ Պապոյանը ոչ միայն արձանագրել ու մանրակրկիտ քննել է Պարույր Սևակի լեզվին բնորոշ ամենատարբեր իրողությունները, այլև բացահայտել դրանց ոճական առանձնահատկությունները, նրբերանգներն ու ելևէջները:

**Առոյան Թ., Մխիթարյանների բառարանագրական գործունեության շուրջ** (հոդված)

Հոդվածում արժևորվում է Մխիթարյանների դերը հայ մշակույթի զարգացման մեջ: Նշվում է, որ Մխիթարյանները բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարել հայոց ու համաշխարհային պատմության, աշխարհագրության, բուսաբանության, բժշկության, լեզուների և այլ գիտությունների բնագավառներում, թարգմանել են եվրոպական գրողների ստեղծագործություններ: Հիմնել են դպրոցներ, դասավանդել տարբեր առարկաներ, հեղինակել դասագրքեր: Սակայն Մխիթարյանների գործունեությունը ավելի արդյունավետ է եղել հայոց լեզվի ուսումնասիրության համար: Նրանք զբաղվել են նոր գրական հայերենի մշակման հարցերով, աշխատասիրել են հին հայերենի քերականություններ: Մեծ է նրանց ավանդը հայ նոր բառարանագրության զարգացման ոլորտում: Կարևոր են հատկապես երկլեզվյան և բազմալեզվյան բառարանները, որոնք նպաստում էին օտար լեզուներ սովորելուն:

Հոդվածագիրը նշում է, որ Մխիթար Սեբաստացին և նրա աշակերտները դառնում են հայ նոր բառարանագրության հիմնադիրները: Թերություններից զերծ բառարաններ ստեղծելը հրամայական պահանջ էր, քանի որ կրթական գործի աշխուժացումը, արևմտահայ աշխարհաբարի կիրառության շրջանակների ընդլայնումը, գրաբարի ուսումնասիրության խորացումը նոր իրավիճակ էին ստեղծել հայկական միջավայրում: Մխիթարյանները, ըստ հոդվածագրի, հաջողությամբ են հաղթահարում այդ դժվարությունները՝ ստեղծելով մինչ օրս արդիականությունը չկորցրած բառարաններ:

**Առոյան Թ., Մխիթարյանների մանկավարժական գործունեության շուրջ** (հոդված)

Հոդվածն անդրադառնում է Մխիթարյանների առաքելութ-

յանն ու նպատակներին. հայոց մեջ ծավալել գիտամշակութային, կրթական-լուսավորչական գործունեություն, բարձրացնել հայ ժողովրդի ինքնագիտակցության մակարդակը, նպաստել տարբեր երկրներում պատմական աննպաստ իրադարձությունների հետևանքով ձևավորված գաղթօջախներում հայապահպանության խնդիրներ լուծելուն:

Մխիթարյան միաբանության գործունեության հիմնական ոլորտներից եղել և մնում է ուսումնակրթական ոլորտը: 1730-ական թվականներից մինչ օրս աշխարհի հայաբնակ տարբեր մասերում գործել 100-ից ավելի Մխիթարյան դպրոցներ: Մխիթարյանները, հիմնելով դպրոցներ, ստիպված էին նաև զբաղվել դասագրքեր ստեղծելու աշխատանքով. նրանք հեղինակում են բազմաթիվ դասագրքեր տարբեր դասընթացների համար: Մխիթարյանները «համատեղել են» գիտական և մանկավարժական գործունեությունը: Գրեթե բոլոր հայտնի Մխիթարյանները զբաղվել են նաև ուսուցչությամբ: Հոդվածում քննվում են վերոնշյալ այն հարցերը, որոնք առնչվում են Մխիթարյանների մանկավարժական գործունեությանը:

**Բարսեղյան Ա., Շարահյուսական կապակցության եղանակների (խնդրառություն) դրսևորումները արդի գեղարվեստական արձակում** (հոդված)

Հոդվածում քննվում են շարահյուսական կապակցության եղանակի (խնդրառություն) դրսևորումները արդի գեղարվեստական արձակում:

Փաստական հարուստ նյութի քննությամբ տրվում են խնդրառություն, կապակցության հոլովական լրացումների և հոլովակապային լրացումների կանոնական, ինչպես նաև որոշ դեպքերում ոչ կանոնական դրսևորումները:

**Բարսեղյան Ա., Կապակցության ներտեքստային միջոցները արդի գեղարվեստական (արձակ) խոսքում** (հոդված)

Հոդվածագիրը քննում է կապակցության ներտեքստային միջոցները արդի գեղարվեստական (արձակ) խոսքում՝ նշելով, որ արդի գեղարվեստական խոսքը կապակցված ամբողջություն է, որն իրականանում է որոշակի միջոցներով՝ պայմանավորված նյութի ու մտահղացման ամբողջությամբ: Գեղարվեստական խոսքի կառուցվածքի լեզվական առանձնահատկությունների քննությունը, ըստ հոդվածագրի, ցույց է տալիս, որ ստեղծագործողի ոճով ու արտաքին իրադրությամբ պայմանավորված՝ այդ հարաբերությունների հարաբերիչ բառերով արտահայտությունը տարբեր է: Տարբեր է նաև նախադասությունների, պարբերությունների, հատվածների, մասերի կապերի սերտության աստիճանը, որն աստիճանաբար նվազում է՝ պայմանավորված նախադասությունների առավել ինքնուրույնությամբ:

**Գալստյան Ա., Օտարալեզու բաղադրիչով նորակազմ բառերի քննություն** (հոդված)

Ժամանակի ընթացքում լեզվի բառապաշարը համալրվում է նոր բառերով և արտահայտություններով: Նոր բառեր ստեղծվում են նաև օտարալեզու բաղադրիչներով: Բառաստեղծման այս եղանակը գործել է հայոց լեզվի զարգացման վաղ փուլերից սկսած. *ռադիո-, կինո-, ֆոտո-, էլեկտրա-, էներգա-, ագրո-, տեխնո-, սոց-, ավիա-, ավտո-* բաղադրիչներով կիսապատճենումները շատ են բացատրական բառարաններում: Արդի հայերենի նորագույն շրջանի կազմություններ են *եվրա-, էկո-, էնո-, կրիպտո-, նանո-, վիքի-, մեդիա-, կիբեռ-* և բազմաթիվ այլ օտար բաղադրատարրերով բառեր:

Հոդվածում դիտարկվող նյութը վերցվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Նոր բառեր»

բառարանաշարից: Նորակազմ բառերը դասակարգվում են ըստ՝ նորաստեղծ բառի խոսքիմասային պատկանելության, բառի բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, բառաստեղծման, բառակերտման տեխնիկայի, նորաստեղծ բառի կազմության, առավել հաճախ հանդիպող սերող և բաղադրող հիմքերի, բառի բաղադրատարրերի ծագման (օտարալեզու կամ հայերեն), նորակազմ բառի բաղադրիչների շարահյուսական հարաբերության, նորակազմ բառերի թեմատիկ խմբերի և ենթախմբերի և այլն:

Բառերը դիտարկվում են նաև ըստ օտարալեզու բաղադրիչի՝ բառապաշարի իմաստագործառական որևէ շերտի պատկանելության հատկանիշի: Առանձնացվում են  արվեստի, մարզական ոլորտների բառապաշարի միավորներ, բառեր, որոնցում օտարալեզու բաղադրիչները որևէ ուտեստի, խմիչքի, որևէ փոխադրամիջոցի,  նյութի անվանումներ են, հատկանուն են:

**Գալստյան Ա., Թեյյան Լ.,  Հայերենի *անել* բայի իմաստագործառական քննություն** (հոդված)

Հոդվածում քննվում են *անել* վերացական բայի  իմաստների, նրանով կազմությունների տարբեր դրսևորումները լեզվի հասարակական և տարածական տարբեր ոլորտներում՝ գրական հայերեն, ժողովրդախոսակցական հայերեն, բարբառ (հիմնականում Արցախի բարբառի նյութը), ժարգոն, մանկական խոսք: Դիտարկվում են *անել* բայի իմաստները, ապա և նրանով կազմված հարադրությունները: Վերջինները քննվում են ըստ՝ հարադրության բաղադրիչների քանակի, հարադիր բառի խոսքիմասային պատկանելության, հարադրության՝ նույն իմաստն արտահայտող այլ բայով միաբառ դրսևորման, ինչպես նաև *անել* բայի՝ այլ բառերի փոխարկման իրակությունները, դրանց՝ լեզվի տարբեր շերտերում տարածվածության:

**Թելյան Լ., Շարահյուսական մի կառույցի գնահատության մասին** (հոդված)

Հոդվածագիրն անդրադառնում է շարահյուսագիտության մեջ հայտնի այն փաստին, որ հաճախ դժվար է լինում բարդ նախադասության կազմում հստակորեն տարբորշել բացահայտիչ երկրորդական նախադասությունը: Այն ստուգապես ճանաչվում է մասնավորապես այն դեպքերում, երբ լրացնում է գլխավոր նախադասության մեջ կիրառված անձնական դերանուններին: Սակայն երրորդ դեմքի անձնական դերանվանը լրացնող երկրորդականների մասնագիտական գնահատումները, ըստ հոդվածագրի, այս առումով միանշանակ չեն: Որոշ հետազոտողների կարծիքով երրորդ դեմքի դերանունը գլխավոր նախադասության կազմում հանդես է գալիս միայն հարաբերյալի դերով և չի կարող ընկալվել որպես բացահայտյալ: Հոդվածում փորձ է արվում լրացուցիչ փաստարկներով հիմնավորել հակառակ տեսակետը (Գ. Գարեգինյան և այլք), ըստ որի՝ համապատասխան խոսքային համատեքստի առկայության պարագայում երրորդ դեմքի դերանունը նույնպես կարող է լրացվել բացահայտիչ երկրորդական նախադասությամբ:

**Խաչիբաբյան Ն., Բաղրամյան Ս., Գենդերային դրսևորումները հայերեն առածներում և ասացվածքներում** (հոդված)

Հոդվածում ներկայացվում են բառերի գործածության սեռային առանձնահատկությունները հայերեն առածներում և ասացվածքներում, ցույց են տրվում դրանցում առկա գենդերային երևույթները: Նշվում է, որ *գենդեր* եզրույթը վերաբերում է հասարակության մեջ տղամարդկանց և կանանց զբաղեցրած դիրքին, նրանց վարքի նորմերին, հոգեբանական և սոցիալական առանձնահատկություններին:

Հոդվածագիրները նշում են, որ առածներում և ասացվածքներում կինը և տղամարդը կարող են բնորոշվել որոշ առարկաների և երևույթների անուններով: Աղջիկներին սովորաբար տրվում են այնպիսի որակներ, ինչպիսիք են համեստությունը, համբերատարությունը, քնքշությունը, ամաչկոտությունը, ողջամտությունը, հավատարմությունը, զիջողականությունը, հոգատարությունը, ինքնազոհողությունը, առաքինությունը: Տղաներին են վերապահվում առնականությունը, ուժը, հաջողակությունը, համարձակությունը, եռանդը, իշխանության ձգտումը, վաստակելու ունակությունը, կերակրողի դերը, կոպտությունը, հանդգնությունը և այլն:

Հոդվածագիրները հանգում են այն եզրակացության, որ բառերի գործածության սեռային առանձնահատկությունները հայկական առածներում և ասացվածքներում բավական հաճախ հանդիպող երևույթներ են: Ժողովուրդը բառերի միջոցով արտահայտում է իր վերաբերմունքը կնոջ և տղամարդու նկատմամբ, ցույց տալիս տվյալ սեռի դիրքը հասարակության մեջ:

**Խպլիկեան Զ., Հայերէնէ անգլերէն զրուցատրութիւն** (յօդուած)

Յօդուածի մէջ ներկայացուած են զրուցատրութիւններ, որոնք օտար լեզուի ուսուցման համար մեծ կարեւորութիւն ունեցող գործնական դասագիրքեր են: Նշուած զրուցատրութիւններու նըպատակը թէեւ անգլերէն սորվեցնելն է, բայց յօդուածագիրը կը նըշէ, որ այն ունի մէկ այլ կարեւորութիւն. այն է՝ դիտարկել արեւմըտահայերէնի կրած փոփոխութիւնը՝ 1913 թուականէն մինչեւ 1963 թուական: Երկու տարբեր թուականներուն եւ երկու տարբեր վայրերու մէջ հրատարակուած զրուցատրութիւններու համեմատական զուգադիր քննութեամբ ցոյց է տրուած, որ ճիշդ 50 տարուան ընթացքին արեւմտահայերէնը կրած է յստակ փոփոխութիւն թէ՛ բառապաշարի, թէ՛ խօսքի կառոյցի մէջ: Այսպիսի սերտողութիւններ եւ ուսումնասիրութիւններ կրնան նպաստել լեզուի հետազօտման եւ բառապաշարի հարստացման աշխատանքներուն:

**Խպլիկեան Զ., Քիլէրճեան Պ., Առցանց հարթակներու դերը արեւմտահայերէնի գոյատեւման գործին մէջ** (յօդուած)

Յօդուածում ներկայացուած են արեւմտահայերէն ուսուցանող եւ արեւմտահայերէն ստեղծուած մշակոյթի պահպանման ուղղուած տասը առցանց հարթակներ, որոնք ստեղծուած են արդի ճարտարագիտութեան ոլորտի հայ մասնագէտներու, լեզուաբաններու, պատմաբաններու, խմբագիրներու եւ ուսուցիչներու կողմէ արեւմտահայերէնի պահպանման ջանքին միանալու միտումով:

Յօդուածագիրներու վկայութեամբ՝ թէեւ սփիւռքի մէջ գործող դպրոցները, համայնքային կեդրոնները ոչինչ կը խնայեն արեւմըտահայերէնը որպէս խօսակցական եւ գրական լեզու պահպանելու համար, սակայն արեւմտահայերէնը տակաւին կը մնայ վտանգուած լեզու եւ ըստ ԵՈՒՆԵՍՔՕ-ի յայտարարութեան՝ արեւմտահայերէնը մեռնող լեզուներու շարքին կը դասուի:

**Խպլիկեան Զ., Մարաշլեան Յ., Արեւմտահայերէն խօսքը Հայաստանի մէջ** (յօդուած)

Յօդուածագիրները կը նշեն, որ սոյն հանրալեզուաբանական հետազօտութեան առանցքը Հայաստանի մէջ արեւմտահայերէնի գործածութեան ծիրը ուրուագծելն է: Ան կարելի եղածին չափ ճշգրիտ սահմանելու համար կազմուած է հարցաշար մը՝ բաղկացած 12 հարցումներէ: Հարցումներուն պատասխանած է վերջին տասը տարիներուն Հայաստան տեղափոխուած 95 մարդ (բացառութեամբ քանի մը հոգիէ, որոնք տասը տարիէ աւելի Հայաստան կը բնակին):

Նշուած քննութեան արդիւնքներուն համաձայն ցայտուն կ՚երեւի արեւմտահայերէնի կիրարկման աստիճանի նուազումը՝ լեզուի նահանջը:

**Հակոբյան Ֆ., Հայերենի մեքենական մշակման խնդիրներ**
(հոդված)

Հոդվածը ներկայացնում է հայերենի մեքենական մշակման ուղղությամբ կատարված աշխատանքները և հայերենի համակարգչային մշակման առցանց համակարգ ստեղծելու նախադրյալները: Ըստ հոդվածագրի՝ հայերենի մեքենական մշակման ուղղությամբ կատարված աշխատանքները մասնավոր բնույթ են կրում: Դրանք հիմնականում իրականացրել են ոչ լեզվաբանները միայն այնքան, որքան անհրաժեշտ է եղել որևէ ծրագիր կամ կայք լեզվական տվյալներով ապահովելու համար: Որոշ դեպքերում էլ փորձ է արվել հայերենի քերականական համակարգը նկարագրել-ներկայացնել այլ լեզուների քերականական կարգերով և բնորոշ հատկանիշներով: Հոդվածագիրը նկատում է, որ հայերենը բնական լեզվի մշակման որևէ գործիքակազմում (NLP toolkit) ներառված չէ: Նա ներկայացնում է հայերենի մեքենական մշակման առցանց համակարգի (Armenian Language Processing) կազմության սկզբունքները, ստեղծման նպատակը, անդրադառնում այն լեզվաբանական խնդիրներին, որոնք հնարավոր կլինի լուծել տեքստի մեքենական մշակման տեխնոլոգիաների և առցանց համակարգի միջոցով:

Հոդվածագրի կարծիքով՝ հայերենի մեքենական մշակման տեխնոլոգիաների և համակարգերի ստեղծումը ամբողջապես կվերափոխի հայերենի կիրառությունը տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում, կնպաստի ինչպես հայերենի լեզվական համակարգի մակարդակային տարբեր միավորների ուսումնասիրությանը, այլև բառային և տեքստային զանազան աշխատանքներ մեքենայացնելուն:

**Հակոբյան Ֆ., Նոր բառերի ներկայացման եղանակները հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարանում** (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ հայ բառարանագրության առջև

ծառացած խնդիրներից հարկ է էապես կարևորել ինչպես հայերենի բառապաշարի համաժամանակյա և տարաժամանակյա ուսումնասիրությունը, բառերի իմաստային և հասկացական կողմերի բացահայտումն ու քննությունը, այնպես էլ լեզվի բառապաշարի էլեկտրոնային շտեմարաններ, բառային հենքեր ստեղծելը: Նա հոդվածում ներկայացնում է իր ստեղծած բառապաշարի էլեկտրոնային շտեմարանը, բառահոդվածի կառուցվածքը, իմաստային-հասկացական հարաբերություններ ներկայացնելու եղանակը: Նշում է, որ առաջիկայում շտեմարանը կներկայացվի առանձին համացանցային կայքում, որի շնորհիվ հասանելի կդառնա լեզվակիր հանրության առավել լայն շրջանակներին: Հոդվածագրի կարծիքով՝ նման հսկայածավալ նախագիծը հնարավոր է իրականացնել բացառապես փուլային եղանակով, քանի որ ընդամենը մեկ բառարանի թվայնացումը, տեխնիկական սխալները և վրիպակները վերացնելը, բառարանային նյութը շտեմարանում ավելացնելը բավական ժամանակատար է: Այս փուլում կայքում ներկայացվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի լեզվի ինստիտուտում պարբերաբար հրատարակվող «Նոր բառեր» պրակների բառարանային նյութը: Տվյալ դեպքում, ըստ հոդվածագրի, էլեկտրոնային շտեմարանը կարող է համարվել նոր բառերի էլեկտրոնային բառարան, որում ներկայացվում են «Նոր բառեր» պրակաշարի (Ա-Ը պրակներ) բառերը՝ 10.000-ից ավելի բառամիավոր: Հոդվածում նկարագրվում է շտեմարանի որոնման համակարգը. բառամիավորների նկարագրությունը ներկայացնելիս տրվում են գլխաբառի հնչյունական, բառագիտական, քերականական սպառիչ բնութագրերը համապատասխան դաշտերով:

**Հակոբյան Տ., Արհեստական բանականության համակարգերի կիրառությունը էլեկտրոնային բառարանագրության մեջ**
(հոդված/անգլերեն)

Հոդվածագիրը նշում է, որ էլեկտրոնային բառարանագրու-

թյան մեջ արհեստական բանականության համակարգեր կիրառելով՝ հնարավոր է դյուրացնել կամ ամբողջությամբ մեքենայացնել այնպիսի բառարանագրական աշխատանքներ, ինչպիսիք են էլեկտրոնային կորպուսներում եղած տեքստերի մեքենական վերլուծությունը, բառացանկ կազմելը, բառահոդված մշակելը, նոր բառերի մեքենական առանձնացումը, բազմիմաստ բառերի՝ տարբեր իմաստներով գործածության օրինակներն առանձնացնելը, բառերի միջև եղած իմաստային կապերը բացահայտելը:

**Հովսեփյան Գ., Նորակազմ ներունակ բառերը ժամանակակից հայերենում (ըստ «Նոր բառեր» բառարանաշարի)** (հոդված)

Հոդվածն անդրադառնում է «Նոր բառեր» բառարանաշարում առկա նորակազմ ներունակ բառերին, դրանց հաճախական բաղադրիչներին և կաղապարներին: Կաղապարների, բաղադրական հիմքերի բազմազանությունը հնարավորություն է ընձեռում կազմելու նորիմաստ բառեր:

Հոդվածագիրը նշում է, որ առանձնացվող բաղադրիչները, որպես արտադրողական կաղապարներ, նպաստավոր պայմաններ են ստեղծում բառի իմաստափոխության համար և նորիմաստ բառերի կազմության ժամանակ: Քննությամբ պարզվում է, որ, ըստ «Նոր բառեր» պրակների բառացանկի, գործուն են *-կենտրոն, -բնակ, -մերձ, -ձև, -տիպ, -խոս, -պատ,* վերջնաբաղադրիչներով, ինչպես նաև *էներգ(ա)-, ինքն(ա)-, կիս(ա)-, կրկն(ա)-* սկզբնաբաղադրիչներով կազմված նորաբանությունները: Դրանք առանձնացվում են ըստ խոսքիմասային պատկանելության: Ներկայացվում են նաև *-գույն* և *-ավուն* վերջածանցներով նորակազմ ներունակ գունանունները, որոնք հիմնականում բարդություններ են, և դրանցով փոխվում է գունանվան գունային երանգը:

**Ղամոյան Լ., «Անձնական զարդարանք» իմաստային (թեմատիկ) խումբը հայերենում** (հոդված)

Հոդվածում ներկայացվում են «անձնական զարդարանք» իմաստային խմբի բառերը ըստ ծագումնաբանության՝ առանձնացնելով բնիկ հայերեն և փոխառյալ (իրանական, հունական, ասորական, արաբական և թյուրքական) բառերը: Հոդվածագիրն անդրադառնում է արդի գրական հայերենում, այլև բարբառներում ինչպես հին հայերենից ժառանգած, այնպես էլ վերջին տարիներին ստեղծված և փոխառված զարդերի անվանումներին: Առանձնացվում են անհայտ ծագման բառերը: Զարդերի տեսակները տրվում են առանձին դասակարգմամբ՝ կրծքազարդ, գլխազարդ, պարանոցի, քթի, ականջի, թևի, ոտքի և այլ զարդեր, որոնք նախատեսված են զգեստի կամ այլ նպատակներով գործածելու համար: Տարբերակվում են նաև թանկարժեք մետաղներից ոսկին և արծաթը և այդ բառերով բաղադրված զարդերի անվանումները:

**Ղամոյան Լ., «Անձնական զարդարանք» իմաստային (թեմատիկ) խմբի քննություն հայերենի բարբառներում** (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ հայերենի բարբառներում գործածվող, «անձնական զարդարանք» հասկացությունն արտահայտող բառերը հիմնականում արձանագրված չեն ստուգաբանական և այլ բառարաններում, և դրանց մեծ մասի ծագումն անհայտ է: Նա առանձնացնում է թանկարժեք, կիսաթանկարժեք և անարժեք զարդերի անվանումները, առանձին խմբերով դասակարգում *ապարանջան, ականջօղ, վզնոց, մատանի, գլխազարդ* և այլ հասկացություններ արտահայտող բարբառային բազմաթիվ բառեր: Ներկայացվում են երկանդամ և բազմանդամ համանունական այնպիսի շարքեր, որոնց մի եզրն է միայն զարդի անվանում: Նշվում է, որ հայերենի բարբառներում առկա են այնպիսի զարդերի անվանումներ, որոնք հայտնի են որպես կախարդանքի (չարից

պաշտպանվելու) միջոց: Ներկայացվում են նաև զարդերի անվանումներով ձևավորված բազմաթիվ առածներ ու դարձվածային միավորներ, որոնք այսօր էլ գործածվում են մեզանում:

**Ղամոյան Լ., Հայերենի ստուգաբանական բառարաններում արձանագրված «հագուստ» իմաստային դաշտին վերաբերող անհայտ ծագման բառերի դիտարկում** (հոդված)

Հոդվածագիրը, քննելով «հագուստ» իմաստային դաշտի անհայտ ծագման բառերը, նկատում է, որ դրանց մեջ կան բառեր, որոնց ծագման վերաբերյալ ընդհանրապես ոչ մի տեղեկություն չկա, և բառեր, որոնց ծագման մասին հայտնի է, որ փոխառություն են, սակայն բուն աղբյուրը հավաստված չէ: Հոդվածում ներկայացվում են նաև լեզվաբանների՝ մի քանի բառերի ծագմանը վերաբերող ենթադրությունները: Անհայտ ծագման բառերը խմբավորվում են ըստ տարածվածության և հաճախականության, բացատրական բառարանների տվյալներով կատարվում են մոտավոր հաշվարկներ: Հոդվածագրի կարծիքով՝ անհայտ ծագման բառերի քանակը կայուն չէ. այն կարող է փոփոխվել նոր ստուգաբանություններով:

**Մարաշլեան Յ., Արեւմտահայերէնի կենսունակութեան պայմանները** (յօդուած)

Հայերէնի, մասնաւորապէս արեւմտահայերէնի «նահանջը» երկար տարիներէ ի վեր տագնապալի է, որուն գոյութիւնը թէական կը նկատուի անգամ ԵՈՒՆԵՍՔՕ-ի կողմէ: Յօդուածը կը քննէ այդ նահանջին պատճառները, մասնաւոր ուշադրութիւն դարձնելով լեզուի նահանջի պատճառներէն մէկուն՝ լեզուի հանդէպ այդ լեզուն կրողի տեսակէտին: Համոզումը, որ լեզուն անհրաժեշտութիւն մը չէ, որմէ կը բխի սաստկացող անտարբերութիւնը, բազմաթիւ պատճառներ ունի, որոնցմէ գլխաւորը մայրենիին կիրառութեան ասպարէզի սահմանափակումն է, այսինքն՝ լուսաւորութեան գործին համար անոր անօգուտ եւ ավելորդ ըլլալու թիւր տե-

սակէտը: Պատմութեան փորձը կը վկայէ, որ լեզուի մը կենսունակութեան կարեւոր սիւներէն մէկը անոր՝ լուսաւորութեան եւ զարգացման հետ կապուած ըլլալն է:

## Մարգարյան Ի., Չբառարանագրված դարձվածքներ Գորիսի բարբառում (հոդված)

Հոդվածում քննվում են Գորիսի բարբառախոս միջավայրում տարածված, բարբառային բառարաններում չվկայված բարբառային դարձվածքներ: Ըստ հոդվածագրի՝ առավել տարածված են *անել* բայի հարակատարով կայունացած և իմաստային յուրահատուկ նրբիմաստներ արտահայտող բայական դարձվածքները: Հոդվածագիրը նշում է, որ նյութի ուսումնասիրությունը համեմատական քննությամբ հնարավոր է դարձրել զուգադրել և վերլուծել Գորիսի բարբառում և Արցախի բարբառ-խոսվածքներում վկայվող դարձվածային միավորների ընդհանրությունները՝ միևնույն ժամանակ ընդգծելով Գորիսի՝ որպես առանձին բարբառում կայունացած դարձվածքների իմաստաբանական ու ձևակազմական ինքնատիպ դրսևորումները: Հոդվածագիրը նշում է, որ Գորիսի բարբառի դարձվածքները հավաքել է կենդանի խոսքից, դիտարկել է դրանց ընկալումն ու ամրագրումը խոսքաշարում: Ուսումնասիրվել են հիմնականում մարդու արտաքին ու ներքին նկարագրությունը, բնավորության գծերն ու ընդհանրական հատկանիշները, կենցաղային իրողությունները բնորոշող դարձվածային միավորներ:

## Մարգարյան Ի., Արդի հայերենի նորակազմությունները հեռուստատեսության խոսքում (հոդված)

Հոդվածում քննվում են արդի հայերենի հեռուստատեսության խոսքի բառապաշարային յուրահատկությունները: Ըստ հոդվածագրի՝ հեռուստատեսության խոսքի ուսումնասիրությունը են-

թաղրում է հեռուստատեսության տարբեր բնագավառներում՝ լրատվական, տեղեկատվական, ժամանցային, սպորտային թողարկումների, գովազդերի, կինոթարգմանությունների ժամանակ գործածվող նորակազմությունների քննություն: Անդրադառնալով նման նորակազմ բառերի տարածումն ու հանրայնացումը պայմանավորող հանգամանքներին՝ նա նշում է, որ փոփոխություններն ավելի արագ են արտացոլվում հեռուստատեսության բառապաշարում և նպաստում, որ բազմաթիվ նոր բառեր սահուն և արագ մերվեն լեզվի բառային կազմին:

**Մարգարյան Լ., Արցախի տեղանվանական համակարգի շրջանաբաժանման փորձ** (հոդված)

Հոդվածում տեղանվանական համակարգի շրջանաբաժանման փորձի նպատակն է պատմալեզվաբանական իրողությունների վկայությամբ ու վերլուծությամբ բացահայտել Արցախի տեղանվանական համակարգին բնորոշ իրողությունները և այդ համակարգի զարգացման օրինաչափությունները: Շրջանաբաժանումը կատարվել է՝ տեղանվանական իրողությունների վերլուծությունից անցնելով պատմալեզվաբանական շերտագրումների բացահայտման, այսինքն՝ տեղանվանական փաստերի քննությունից, օրինակների վկայությունից անցնելով ընդհանրացման և հանգելով եզրակացության՝ առանձնացնելով համապատասխան փուլը:

Հոդվածագիրը շրջանաբաժանման հիմքում ընդունել է երեք սկզբունք և դրանց հաշվառմամբ տեղանվանական համակարգի զարգացման ընթացքի շրջանաբաժանումը կատարելիս առանձնացրել երկու ուղղություն: Ամեն մի շրջափուլ ունի իր տեղանվանացանկը, որոնց լեզվաբանական քննությունը, բառակազմական նկարագրությունը հաստատում են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ լեզվահարաբերությունները, և ամեն մի առանձնանշված փուլ իրապես ներկայացնում է նաև Արցախի՝ տվյալ շրջանի պատմական, քաղաքական, աշխարհագրական իրողությունները:

Ըստ հոդվածագրի՝ Արցախի տեղանվանական համակարգի շրջանաբաժանման փորձը հաստատում է այն իրողությունը, որ փուլեր սահմանելիս բոլոր դեպքերում պատմական շրջադարձերն են դառնում որոշարկող ու նախանշող:

**Ներսիսյան Վ., Բառակազմության տեսական հարցերի քննությունը Գրիգոր Ղափանցյանի աշխատություններում**
(հոդված)

Հոդվածում նշվում է, որ ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Գրիգոր Ղափանցյանի մոտեցումները հայերենի բառակազմության տեսական հարցերի մասին, որոնք հիմնականում արտացոլված են «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատության առաջին հատորում: Ըստ հոդվածագրի՝ Գր. Ղափանցյանն իր աշխատությունները գրել է մի շրջանում, երբ ժամանակակից հայերենի բառակազմության ուսմունքը որոշակիորեն ձևավորվել և քննության առարկա էր դարձել նախ Արսեն Այտընյանի և Ստեփանոս Պալասանյանի աշխատություններում, որոնցում սահմանվել և ընդհանուր գծերով ներկայացվել էին բառերի տեսակներն ըստ կազմության, առանձնացվել էին հայերենի ածանցներն ու նրանցով կազմված բառերը, իսկ ավելի ուշ դրանք մանրակրկիտ վերլուծության էր ենթարկել և գիտական լուրջ հիմքերի վրա դրել Մանուկ Աբեղյանը: Գր. Ղափանցյանն ավելի է խորացնում բառակազմությանն առնչվող հարցերի ուսումնասիրությունը:

Հոդվածագիրը նշում է, որ եթե Աբեղյանն իր ուսումնասիրությունները կատարելիս հայերենի լեզվական իրողությունները համեմատում էր հիմնականում ռուսերենի և գերմաներենի հետ, ապա Գր. Ղափանցյանը հիմնական և երկրորդական ձևույթները, դրանց առաջացումն ու փոփոխությունները դիտարկում է բազմաթիվ լեզուների համեմատությամբ՝ առաջին անգամ հայ լեզվաբանական գրականության մեջ գործածելով միջազգային *մորֆեմա*,

իսկ երբեմն էլ՝ *ձև* եզրույթները, վերջինը՝ հատուկ նշանակությամբ:

**Ներսիսյան Վ., Ավետիսյան Ա., Բառակազմության ուսումնասիրումը երկրորդ դասարանում** (հոդված)

Հոդվածագիրները փորձել են ներկայացնել բառակազմության ուսումնասիրման առանձնահատկությունները երկրորդ դասարանում՝ հիմք ընդունելով ՀՀ հանրակրթական դպրոցներում գործող և նոր ծրագրերին ու չափորոշիչներին համապատասխանող դասագրքերը՝ նկատի ունենալով նոր բառեր կազմելու եղանակներն ինչպես ձևույթային տեսանկյունից (արմատ, ածանց), այնպես էլ այլ՝ դասագրքերում առկա տարաբնույթ առաջադրանքների բնույթը՝ դրանք դասակարգելով ըստ պայմանական խմբերի: Նրանք նշում են, որ դասագրքերում ներկայացված QR կոդերով առաջադրանքները նույն սկզբունքով և նպատակներով են կազմված, ինչ որ ավանդական դասագրքային առաջադրանքները՝ այն տարբերությամբ, որ դրանք թերևս ավելի հետաքրքիր են և գրավիչ կրտսեր դպրոցականների համար:

**Ներսիսյան Վ., Նոր բառերի թարգմանական (հայերեն-ռուսերեն-անգլերեն) առցանց բառարանի ստեղծում. անհրաժեշտությունն ու խնդիրները** (հոդված)

Հոդվածում ընդգծվում է բառարանների անգնահատելի դերն ինչպես լեզվական որևէ քննություն կատարելու տեսանկյունից, այնպես էլ հաղորդակցական գործընթացներում առհասարակ: Կարևորվում են ինչպես միալեզվյան տարաբնույթ և տարատեսակ բառարանները, այնպես էլ թարգմանական՝ երկլեզվյան կամ բազմալեզվյան բառարանները: Հոդվածում ներկայացվում են հայերեն նոր բառերի թարգմանական առցանց բառարանի ստեղծման անհրաժեշտությունն ու խնդիրները:

Մասնավորապես նշվում է, որ անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել ոչ միայն թղթային բոլոր աղբյուրները թվայ-

նացնելու ուղղությամբ, այլև ստեղծելու հայերեն նորակազմ և նորիմաստային՝ ոչ մեկանգամյա գործածություն ունեցող, գեղարվեստական գրականությունից քաղված, այլ գոնե համագործածական բառերի առնվազն եռալեզու թարգմանական նս մեկ բառարան, որը պետք է ձևավորվի նախապես մշակված համացանցային ծրագրով, որն էլ հնարավորություն կտա ինչպես կազմելու, այնպես էլ հընթացս այն լրացնելու, կատարելագործելու: Ըստ հոդվածագրի՝ բառարանում բառահոդվածները կպարունակեն հայերեն բառերի բացատրական, ձևաբանական և ձևակազմական հիմնական նկարագրերը, ինչպես սովորաբար լինում է, և երկլեզու թարգմանությունը:

**Պապիկյան Ս., Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» պոեմի հայերեն թարգմանության հատկական փոխառությունների քննություն**
(հոդված)

Հոդվածագրի նպատակն է եղել քննել Արևելքի պոեզիայի լավագույն նմուշներից մեկի՝ Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» պոեմի հայերեն թարգմանության հատկական փոխառությունները (տարաշխարհիկ բառեր, էկզոտիզմներ): Պոեմում գործածված հատկական փոխառությունները, որոնք օտար երկրի մշակույթին, հոգեկերտվածքին վերաբերող բառեր են, իրենց համարժեքը չունեն հայերենում, բնորոշում են օտար իրույթներ (ռեալիաներ), չունեն հոմանիշներ և հականիշներ:

Պոեմում առկա հատկական փոխառությունները հոդվածագիրը դասակարգել է հետևյալ խմբերում՝ գրական ժանրեր, պետական-կառավարման մարմիններ, կոչումներ, հագուստ, զարդ, երգ, երաժշտական գործիք, կրոնական բառեր, ընդհանուր բառեր: Քննությունից պարզվում է, որ Նիզամիի «Լեյլի և Մեջնուն» պոեմի թարգմանության հատկական փոխառությունների մի մասը արաբական ծագում ունի, մի մասը՝ իրանական, մի մասն էլ յուրացվել և մերվել է հայերենի բառապաշարին:

**Պապիկյան Ս., Հունալատինական ծագման հատկական փոխառությունների քննություն** (հոդված)

Հոդվածում նշվում է, որ ընդհանուր փոխառությունների մեջ առանձնացող հատկական փոխառությունները վերաբերում են ո-րևէ ժողովրդի նիստուկացին, սովորություններին, հոգեկերտվածքին, իրերին: Սովորաբար դրանք գործածվում են, երբ խոսքը տըվյալ ժողովրդին բնորոշ իրույթների (ռեալիաներ) մասին է: Դրանք անթարգմանելի են:

Հոդվածագիրը դիտարկում է հունալատինական ծագման ո-րոշ հատկական փոխառություններ, որոնց մի մասը անմիջական, մի մասն էլ միջնորդավորված փոխառություններ են: Սկզբնապես մեկ-երկու լեզվում գործածվող հատկական փոխառությունները տարածվելով կարող են համալրել տերմինների շարքերը: Որոշ դեպքերում դժվար է որոշել հատկական փոխառությունների և տերմինների սահմանները: Քննվող հունական ծագման հատկական փոխառությունների մի մասը հատկական փոխառություն համարելը, ըստ հոդվածագրի, որոշ չափով պայմանական է. դրանց մի մասը վերաբերում է տարբեր տերմինահամակարգերի՝ կրոն, գիտություն, արվեստ: Այդ փոխառությունները հիմնականում գրական ճանապարհով են անցել հայերենին:

Դիտարկվող հունալատինական ծագման հատկական փոխառությունների քննությունից պարզվում է, որ դրանց մեծ մասը հաճախադեպ չէ: Մի մասն էլ, ենթարկվելով տարբեր հիմունքներով իմաստափոխության, ձեռք է բերել փոխաբերական իմաստ:

**Սարգսյան Ն., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները հրամայական եղանակի համակարգում. բուն հրամայական (եզակի թիվ)** (հոդված)

Հոդվածում նշվում է, որ միջին հայերենի և արևմտահայերենի լեզվական համակարգերի քննությունը ցույց է տալիս, որ արևմտահայերենը լեզվական իրողությունները մեծ մասամբ ժառան-

գել է միջին հայերենից: Հրամայական եղանակի ուսումնասիրությունը ևս փաստում է, որ միջին հայերենի նույն եղանակի ձևաիմաստային հատկանիշները ամբողջությամբ վկայվում են արևմըտահայերենում:

Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ արևմտահայերենի բուն հրամայականի եզակի թվի *ե* լծորդության *է*, *ի* լծորդության *է, իր*, *ա* լծորդության *ա* վերջավորությունները ձևավորվել են միջին հայերենում գրաբարի հիմքի վրա:

**Սուքիասյան Հ., Ավետիսյան Ա., Հայերեն բժշկական տերմինաբանության աղբյուրները** (հոդված)

Հոդվածում քննվում է հայերեն բժշկական տերմինաբանության աղբյուրների հարցը, որն էական նշանակություն ունի հայերենի պատմական և համաժամանակյա բառագիտության առումներով: Առանձնացվում են հայերեն տերմինային համակարգի ժամանակագրական շերտերը և փոխառությունների աղբյուրները: Նշվում է, որ հայերեն բժշկական տերմինների զգալի մասը ստեղծվել է լեզվի ընդհանուր գործածական բառապաշարի մեջ մտնող սովորական բառերի տերմինացմամբ (տերմինացման աղբյուրներ են գրաբարը, միջին հայերենը և բարբառները): Բժշկական տերմինների գերակշռող մասը փոխառություններն են, որոնք, ըստ ժամանակագրական գործոնի, բաժանվում են երկու մասի՝ հին և հնագույն և նոր ու նորագույն փոխառություններ:

Հոդվածագիրները նշում են, որ ժամանակակից հայերեն բժշկական տերմինաբանությունը բաղկացած է առավելապես հունալատինական ծագում ունեցող և հունա-լատիներեն բառակազմիչ տարրերով կազմված բառերից: Վերջիններս այսօր էլ միջազգային տերմինաբանության համալրող աղբյուրն են, և որի հիման վրա շարունակում է զարգանալ բժշկական տերմինաբանությունը:

**Սուքիասյան Հ., Զաքարյան Հ., Բժշկական եզրույթների հայերենացման անհրաժեշտությունը** (հոդված)

Հոդվածը վերաբերում է լեզվական համակարգի համասեռության մի մասնավոր դրսևորման՝ բառապաշարի մաքրությանը (բժշկագիտության լեզվի օրինակով) և այն ապահովելու նպատակով փոխառությունների հետևողական հայերենացման անհրաժեշտության խնդրին: Հետազոտությունը կատարվել է բժշկության ոլորտից վերցված հայերեն, անգլերեն և ռուսերեն համարժեք բառակազմական հարացույցների զուգադրական քննությամբ: Նյութը քաղվել է բժշկագիտական բացատրական երկլեզու և բազմալեզու բառարաններից: Տարալեզու բառակազմական հարացույցների քննությունը ցույց է տալիս, որ հայերենը իր լեզվական համասեռության շնորհիվ կատարյալ է, ամբողջական, ինքնաբավ և ապահովում է հասկացական ու լեզվական համակարգերի համաձայնություն: Այս համեմատական քննությունը ցույց է տալիս, որ բըժըշկության, ինչպես ցանկացած այլ բնագավառի եզրույթաբանություն, անհրաժեշտ է առավելագույնս հայերենացնել:

**Տիրյան Ս., Խաչիբաբյան Ն., Օտարաբանությունների խնդիրը արդի արևմտահայերենում** (հոդված)

Հոդվածագիրներն անդրադարձել են շատ «զգայուն» մի հարցի՝ արևմտահայերենի օտարաբանություններին կամ փոխառություններին, որոնց նկատմամբ արևմտահայերենի որդեգրած մոտեցումը պայմանավորված է ոչ թե կանոնարկվածությամբ, այլ ձուլման որոշակի վտանգով: Պատճառն այն է, որ կեցության երկըրներում սփյուռքահայերը զուրկ են լեզվական հարցերը համակարգող, կարգավորող պետական որևէ պատկան մարմնից: Արևմտահայերենում օտար բառերը շարունակաբար և սկզբունքորեն թարգմանվում են, սակայն խնդիրն այն է, թե որքանով է հայերեն թարգմանված տերմինը արտացոլում կամ փոխանցում օտար բառի իմաստային դաշտը. ծածկում է այն լիովին, լիարժեք, թե՞ մա-

սամբ: Հարցն այն է, թե թարգմանված և թարգմանվող օտարաբանությունները որքանով են կիրառելի արևմտահայերենում, և դրանք արդյոք հասանելի են նաև արևելահայերենում՝ որպես երկու տարբերակների բառապաշարների փոխհարստացման աղբյուր:

**Տիոյեան Ս., Խպլիկեան Զ., «Հակադիր» իմաստներ՝ արեւմտահայերէն-արեւելահայերէն բառապաշարին մէջ**
(յօդուած)

Յօդուածի մէջ կատարուած է արեւմտահայերէն եւ արեւելահայերէն բառապաշարի զուգադիր քննութիւն: Գրական հայերէնի բառապաշարի զուգադիր քննութիւնը նախ եւ առաջ ունի կիրառական, գործնական նշանակութիւն: Ան կը նպաստէ մեր ժողովուրդի երկու հատուածներու փոխհասկացողութեան, փոխյարաբերութեան եւ ընդհանուր հայերէնի բառապաշարի երկու դրսեւորումներու փոխհարստացման: Բացի այդ՝ բառիմաստներու գիտական, մանրամասն ստուգաբանութիւնը առաւել կը նպաստէ համապատասխան բառաշարքերու ցանկեր, բառարաններ կազմելուն. բան մը, որ կը բացակայի արդի արեւմտահայերէնին մէջ: Հոն կը բացակային հոմանիշներու, հականիշներու, համանուններու եւ այլ ժամանակակից բառարանները: Նմանօրինակ ուսումնասիրութիւններ կրնան խթանել եւ նպաստել այդպիսի աշխատանքներուն կազմութեան:

**Տիոյան Ս., Խաչատրյան Օ., Կիրառական արվեստի մի քանի տերմինների շուրջ** (հոդված)

Հոդվածում ներկայացվում է տերմինների յուրահատուկ ու բազմաբնույթ մի բնագավառ՝ կիրառական արվեստի ոլորտը. այն ընդգրկում է առօրյա կիրառական, մասնագիտական, արվեստագիտական, արհեստագործական բազմաթիվ տերմիններ: Տրվում

են նաև դրանց համարժեքները՝ օտար լեզուներով, եթե այդպիսիք առկա են:

**Ֆելեքյան Մ., Անձնական դերանունների բառարանագրումը** (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ դերանուններն ըստ բառարանների ներկայացնելը մեծապես կախված է դերանվան ըմբռնումից: Դերանունները չունեն ո՛չ իմաստային և ո՛չ էլ քերականական հատկանիշների ընդհանրություն և միասնություն: Մյուս կարևոր պատճառը դերանունների բառային իմաստի խիստ հարաբերական լինելն է: Դրանց իմաստը իրավիճակային է և որոշվում է համատեքստից: Սա դերանունների բառարանագրման նկատելի հակասականության գլխավոր պատճառներից է:

Հոդվածում նշվում է, որ անձնական դերանունների՝ տարարմատ և տարահիմք կազմությամբ բառաձևերը (այդ թվում նաև հոգնակիի ձևերը) պետք է բառարաններում ներկայացվեն իբրև գլխաբառեր, այլապես լեզվին լավ չտիրապետողը կդժվարանա դրանք գտնել բառարանում: Սա առանձնապես կարևոր է արևմտահայերենի բառարանների համար, քանի որ դրանք մեծապես ունեն նաև ուսուցողական դեր: Անձնական դերանունների բառարանագրման միօրինակացման գործում կարևոր է բառարանագիրների՝ ոչ թե բառերի այբբենական ցուցակով, այլ խոսքի առանձին մասերի ներսում դրանց որոշակի բառապաշարային խմբավորումներով աշխատելը:

**Ֆելեքյան Մ., Ածանցների համանունության մասին կամ քանի՞ *-ոց* ածանց կա հայերենում** (հոդված)

Հոդվածում քննվում են բառակազմական ձևույթների բազմիմաստության և համանունության տարանջատման հարցեր: Առաջարկվում են մի շարք չափանիշներ, որոնց հիման վրա ժամանակակից հայերենի համար հնարավոր է տարբերակել ածանցների

բազմիմաստությունը համանունությունից: Գլխավոր չափանիշը, ըստ հոդվածագրի, իմաստաբանականն է: Համանուն ածանցները խոսքային իրացման մեջ չունեն իմաստային առնչակցության որևէ եզր: Կարևոր է նաև ածանցների ձևաբանական նշանակությունը, այսինքն՝ տվյալ ածանցի՝ այս կամ այն խոսքի մաս կերտելու բառակազմական կարողությունը: Տարբեր հիմքերի հետ զուգորդվելու ունակությունը ևս կարևոր է ածանցների համանունությունը և բազմիմաստությունը տարբերակելու համար:

Այս չափանիշները հաշվի առնելով՝ հոդվածագիրն առաջարկում է արդի հայերենում առանձնացնել *-ոց (-նոց //-անոց*) հնչյունական կազմն ունեցող երեք համանուն վերջածանց՝ «տեղ» բառակազմական ընդհանուր նշանակությամբ, «կոնկրետ առարկա», «գործողության՝ որպես երևույթի անուն» բառակազմական նշանակություններով և մի քանի գրաբարյան քարացած կազմություններում պահպանված վերջածանց:

**Ֆիշենկճեան Ա., Գրական արեւմտահայերէնի քերականական համակարգի տեղաշարժերը՝ ըստ արեւմտահայերէնի առկայ դասագիրքերու (Բայ)** (յօդուած)

Յօդուածը կ՚ուսումնասիրէ արեւմտահայերէնի ձեւաբանութեան քերականական կարգի մէջ արտացոլուած տեղաշարժերը, որոնք կը վերաբերին արեւմտահայերէնի բայի՝ լծորդութեան, բայածանցի, կամ ինչպէս ընդունուած է արդի արեւմտահայերէնի քերականութեան մէջ անուանել, սոսկածանցի: Թեման քիչ ուսումնասիրուած է, եւ անոր քննումն ու եզրակացութիւնը կրնան հիմք ըլլալ արեւմտահայերէնի գիտական քերականութեամբ զբաղողներուն եւ դասագիրքերու հեղինակներուն: Ուսումնասիրուած են արեւմտահայերէնի դասագիրքերը եւ փորձ կատարուած է քննելու եւ համեմատելու զանոնք եւ Արմենակ Եղիայեանի ուղղախօսական աշխատութիւնը:

Կը քննուին բայի լծորդութեան առնչուող հիմնահարցեր, իմաստակիր եւ իմաստազուրկ բայերու բնութագրումներ, պարզաբանումներ, բայահիմքի եւ լծորդութեան միջեւ առկայ ածանցներուն համաձայն, զարտուղի, կէս զարտուղի բայեր կամ զարտուղի խոնարհում արտայայտութիւնը, զարտուղի եւ անկանոն բայ կամ խոնարհում հասկացութիւնները եւ անոնց խոնարհաձեւերը:

Եզրակացութիւնն այն է, որ զարտուղի եւ անկանոն համարուող բոլոր բայերը խոնարհելու ընթացքին իրենց ձեւակազմական առանձնայատկութիւններով կը տարբերէին բայի խոնարհման ընդհանուր օրինաչափութենէն, սակայն անոնցմէ ոչ բոլորը զարտուղի են. անոնցմէ ոմանք պարզ բայեր են, ոմանք ալ՝ անկանոն:

## **Ֆիշենկճեան Ա., Կապերու շարահիւսական կիրառութիւնը արեւմտահայերէնի մէջ** (յօդուած)

Յօդուածը կ՚անդրադառնայ ժամանակակից հայերէնի շարահիւսական համակարգի, շարահիւսական կապակցութիւններու մէջ կարեւորագոյն նշանակութիւն ունեցող *կապ* խօսքի մասին. կը նշուին չթեքուող *կապ* խօսքի մասի՝ քերականութեան դասագիրքերու մէջ հեղինակներու կողմէ գործածուած տարբեր եզրոյթները: Կը խօսուի կապերու տեսակներու մասին: Յօդուածը կը քննէ կապերու բառիմաստային խնդիրները, որովհետեւ բացի խնդրառութենէն, կապերը, ի մասնաւորի տարածականները եւ ժամանակայինները մէկ քանին, բանաւոր եւ գրաւոր դրսեւորումներուն մէջ ազդուելով արեւելահայերէնի եւ օտար լեզուներու ազդեցութենէն սխալ գործածութեամբ հանդէս կու գան:

Յօդուածագիրն առաւելապէս *մօտ* եւ *քով* կապերու կիրառութեամբ՝ բազմաթիւ օրինակներով հետեւեալ հաստատումը կը կատարէ, որ յաճախ *մօտ* կապը նախադասութեանց մէջ գործածուած է *կողմէ, մէջ, համար* եւ այլ իմաստներով, որոնք ուղղախօսական սխալներ են, բայց եւ այնպէս ե՛ւ բանաւոր, ե՛ւ գրաւոր լե-

զուի մէջ մեծ տարածում գտած են: Յօդուածագիրը կ՝եզրակացնէ, որ *մօտ* կապը գործածելի է ոչ անձնանիշ գոյականներու, իսկ *քով*-ը՝ անձնանիշ գոյականներու հետ:

## Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

2024 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Ավետյան Ս. Ռ., Արևելահայերենի բայի եղանակների աբեղյանական մեկնաբանությունը՝ դիտարկված արդի լեզվաբանության տեսանկյունից, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», N 3 (45), Ե., 2024, էջ 34-44:
2. Ավետյան Ս. Ռ., Some Diachronic Observations on Forms of The Aorist with a Vocalic Augment in the Dialect of Šatax, «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 3-9:
3. Գրիգորյան Գ. Գ., Փորձառական տվյալներ հայերեն խոսքում դադարների դրսևորման վերաբերյալ, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (21), Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 124-141:
4. Գրիգորյան Գ.Գ., Դիմակի ազդեցությունը խոսքի ընկալման վրա, «Լեզու և լեզվաբանություն», 2 (31), Ե., 2024, էջ 44 -57:
5. Դալալյան Տ.Ս., Վերժինե Սվազլյան. անխոնջ բանահավաք-բանագետը (ծննդյան 90-ամյակի առթիվ), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1 (670), Ե., 2024, էջ 400-405:
6. Դալալյան Տ.Ս., Կայծակնահար մահացածի շուրջ կատարվող պարը օսական ավանդույթում. сорраy-հայ. ցոփ, «Պարի ծիսական և բանահյուսական ենթատեքստը» հանրապետական գի-

տաժողով՝ նվիրված Գ. Գինոսյանի հիշատակին, Ե., 2024, էջ 24-27:
7. Դալալյան Տ.Ս., Արեւմտահայերէնի կանոնարկման եւ զարգացման հարցերը «Յառաջ»-ի էջերուն մէջ. շարք մը դիտարկումներ, "Ètudes arméniennes contemporaines", N 15, Paris, 2024, p. 191-200:
8. Դալալյան Տ.Ս., Առասպելաբանական վիշապը և ոռոգման համակարգերի առաջացումը // The Culture of Water Use in Armenia from Ancient Times to Our Days, Yerevan, AICA-Armenia, 2024, p. 116-123.
9. Համբարձումյան Վ.Գ., Հայերեն ստուգաբանություններ, «Լեզու և լեզվաբանություն», 1 (30), Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 3-12:
10. Միքայելյան Ս.Ա., Հայերենի արաբերեն միջնորդավորված փոխառությունների շուրջ (թուրքերենով միջնորդավորված բառաշերտ), «Լեզու և լեզվաբանություն», 1 (30), Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 38-51:
11. Միքայելյան Ս.Ա., Հայերենում և ռուսերենում գործածվող արաբերեն փոխառյալ բառերի շուրջ, «Հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., «Ալվարդ Օհանջանյան Վառլենի» ԱՁ հրատ., 2024, էջ 91-96:
12. Սարգսյան Մ.Ա., Բաղրամյան Ս.Ե., Հայերենը որպես սփյուռքի լեզու. մարտահրավերներ և խնդիրներ, «Լեզու և լեզվաբանություն», 1 (30), Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 81-92:
13. Սիմոնյան Ն.Մ., Մկրտչյան Մ.Ս., Փոխաբերություն երևույթը և նրա բնորոշումը լեզվաբանության մեջ, «Լեզու և լեզվաբանություն» , 1 (30), Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 13-25:
14. Avetyan S.R., On Certain Disputable and/or Unexplained Forms of the Imperative in Modern Armenian Dialects, "Bulletin of Yerevan Yniversity. Phililogy", N 3 (45), Yerevan, 2024, p. 88-98.
15. Dalalyan T.S., Verzhine Svazlyan: the Tireless Ethnographer and Folklorist (on Her 90th Anniversary) // Review of Armenian Studies (Բանբեր հայագիտության), Yerevan, «Gitutyun», 2024, № 1 (34), 226-231.

16. Dalalyan T.S., La standardisation et le développement de l’arménien occidental dans le journal *Haratch*: quelques observations // Études arméniennes contemporaines, № 15: La presse de langues arménienne en France et la création d’un espace transnational (sous la direction de Talar Chahinian et Stéphanie Prévost), Paris: Bibliothèque Nubar de l’UGAB, 2024, p. 201-210.
17. Андреева Ю.О., Гуляева Е.Ю., **Далалян Т.С.,** Религиозные практики армян Ордубадского района Нахичеванской АССР в 1950-1980-е гг., "История, археология и этнография Кавказа", т. 20, N 1, Махачкала, 2024, с. 154-168.
18. Симонян Н.М., Этимологические заметки, "Language and Culture", N 31, Кутаиси, 2024, с. 67-71.
19. Симонян Н.М., Этимологические заметки, "Language and Culture", N 32, Кутаиси, 2024, с. 72-77.

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

### Ավետյան Ս., Որոշ տարաժամանակյա դիտարկումներ Շատախի բարբառում ձայնավոր նախահավելվածով աորիստի ձևերի շուրջ

(հոդված/անգլերեն)

Հոդվածում փաստարկվում է, որ Շատախի բարբառում *իտի* «դրեց» և *իտու* «տվեց» աորիստի ձևերի վերջահանգ ձայնավորները, հակառակ Մ. Մուրադյանի պնդման, չեն կարող դիտվել նախնական արմատավերջյան ձայնավորներ, այլ այդ ձևերը երկրորդաբար առաջացած համաբանական կազմություններ են: Բանն այն է, որ նախագրային հայերենում շեշտահաջորդ վերջնավանկերի թուլացումը և/կամ անկումը ընդհանուր է եղել հայերենի տարածական բոլոր տարբերակների համար, և այդ առումով բացառություններ չկան: Մյուս կողմից՝ հայերենի ժամանակակից այլ բարբառների համապատասխան տվյալները ակնհայտորեն ցույց են տալիս, որ նրանցում ևս ձայնավոր նախահավելվածով աորիստի եզակի 3-րդ դ. համաբանական նոր ձևեր են կազմվել երկրորդաբար:

**Ավետյան Ս., Հայերենի ժամանակակից բարբառներում հրամայականի որոշ վիճահարույց և/կամ չբացատրված ձևերի շուրջ** (հոդված/անգլերեն)

Հոդվածագիրը փորձում է ցույց տալ, որ հրամայականի ձևերի պատմական զարգացումը հայերենի բարբառներում եղել է համաբանական և հնչյունական փոփոխություններով պայմանավորված բավականին բարդ գործընթաց, որի հետևանքով հաճախ մթագնվել են սկզբնական դրությունը և հրամայականի կազմության տարբեր տիպերի, ինչպես նաև հրամայականի և աորիստի համաժամանակյա ձևաբանական փոխհարաբերությունը: Մյուս կողմից, քանի որ բարբառագետները այս կամ այն կոնկրետ բարբառը նկարագրելիս հաճախ անտեսել են մյուս բարբառների ընձեռած համապատասխան փաստերը, դա մեծապես խանգարել է նրանց պատշաճ խորանալու դիտարկվող հարցերի մեջ և համապարփակ ու ճշգրիտ քննելու լեզվական նյութը: Ըստ հոդվածագրի՝ հարկ է նշել նաև, որ հայերենի ժամանակակից բարբառների ուսումնասիրությունը հիմնականում եղել է համաժամանակյա-նկարագրական բնույթի: Հետևաբար վերոնշյալ հանգամանքները հաճախ թյուրըմբռնումների և սխալ մեկնաբանությունների տեղիք են տվել: Հոդվածագիրը նշում է, որ, իհարկե, այս կարգի բոլոր վիճահարույց հարցերի քննությունը շատ հեռուն կտաներ: Ուստի հոդվածում դիտարկվում են ցայսօր առաջարկված առավել խնդրահարույց մեկնաբանություններից և/կամ չբացատրված երևույթներից միայն մի քանիսը:

**Ավետյան Ս., Արևելահայերենի բայի եղանակների աբեղյանական մեկնաբանությունը՝ դիտարկված արդի լեզվաբանության տեսանկյունից** (հոդված)

Հոդվածում փաստարկվում է, որ արդի արևելահայերենի այսպես կոչված ըղձական եղանակի և ենթադրական/պայմանական եղանակի ավանդական մեկնաբանությունը (որն առաջարկել

է Մ. Աբեղյանը) առարկություն է հարուցում ընդհանուր լեզվաբանության և լեզվաբանական տիպաբանության տեսանկյունից: Բանն այն է, որ արդի արևելահայերենի ըղձականը համատեղում է տիպաբանորեն հայտնի ստորադասականի և ըղձականի իմաստային գործառույթների մեծ մասը, հետևաբար բառիս բուն իմաստով ըղձական (optativus) չէ: Ավելի տեղին կլիներ այն բնորոշել որպես ստորադասաըղձական: Ինչ վերաբերում է արդի արևելահայերենի *կ(ը)*- ապառնիին (այն ավանդաբար ոչ ճիշտ մեկնաբանվում է որպես ենթադրական/պայմանական եղանակ), իրականում այն չի տարբերվում այլ լեզուների սահմանական ապառնիից իմաստագործառութային տեսնակյունից: Ինչպես ցույց են տվել մի շարք հետազոտողներ, ապառնի ժամանակը երբեք մաքուր ժամանակային կարգ չէ. ապառնիությունն անհրաժեշտաբար ներառում է կանխատեսման տարր կամ դրան առնչակից որևէ եղանակային հասկացություն: Ըստ այդմ՝ արդի արևելահայերենի *կ(ը)*- ապառնին նույնպես, ըստ հոդվածագրի, ներառում է և՛ ժամանակային, և՛ եղանակային իմաստային բաղադրիչներ, որոնց հարաբերակցությունը կարող է տարբեր լինել՝ կոնկրետ համատեքստից և բայաձևի դեմքից կախված: Սակայն *կ(ը)*- ապառնիի համապատասխան անցյալի ձևերը արդի արևելահայերենում հիմնականում գործածվում են որպես պայմանական եղանակ (conditionalis):

**Գրիգորյան Գ., Փորձառական տվյալներ հայերեն խոսքում դադարների դրսևորման վերաբերյալ** (հոդված)

Հոդվածում առաջին անգամ փորձառական եղանակով ուսումնասիրվել են հնչող խոսքի դադարները, բերվել են օրինակներ և դրանց հնչապատկերները: Քննվել են բանավոր խոսքում դադարների տեսակները, գործառույթները, տևողությունը, հոգեբանական նշանակությունը, կարևորությունը և այլն: Մասնավորապես հաշվարկվել են դադարների տևողություններն ըստ տեսակների, դադարները դասակարգվել են ըստ տարբեր չափանիշ-

ների: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հանրային հրնչող խոսքում, մասնավորապես՝ ելույթներում, դադարների դրսևվորմանը, քանի որ արդի հասարակական-քաղաքական դաշտում դրանք մեծ տարածում ունեն:

Դադարներն ուսումնասիրելիս հոդվածագիրը դրանք դասակարգել է՝ բաշխելով 2 խմբում՝ սովորական կամ անհրաժեշտ և միտումնավոր կամ մտածված: Առաջին խմբի դադարները շնչառական կամ քերականական դադարներն են (տրոհության նշաններով պայմանավորված դադար, պարբերության դադար, անհատական դադար): Երկրորդ խմբի դադարները նպատակային, միտումնավոր կամ մտածված դադարներն են (բանալի բառը շեշտելու դադար, հռետորական հարցի դադար, մակաբույծ բառերի դադար, լրացուցիչ դադար և այլն):

**Գրիգորյան Գ., Դիմակի ազդեցությունը խոսքի ընկալման վրա**
(հոդված)

Հոդվածում ուսումնասիրվում է այն երևույթը, թե ինչպես է պաշտպանիչ դիմակն ազդում մարդկանց բանավոր հաղորդակցման գործընթացի վրա: Կատարվել են գիտափորձեր՝ դիմակով և առանց դիմակի հաղորդակցման դեպքերի քննությամբ: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ դիմակով և առանց դիմակի ընկալումը նվազում է 25-30 տոկոսով: Բանախոսների՝ դիմակով խոսելիս կորչում է տեղեկության մոտ մեկ երրորդը, քանի որ տեսանելի ազդանշանները բացակայում են, իսկ ձայնային էներգիան՝ թուլանում: Գիտափորձերի արդյունքները ցույց են տալիս, որ բերանի, մասնավորապես շուրթերի, ծնոտի, երբեմն նաև քթի ծածկված լինելը մեծապես ազդում է ունկնդրի՝ տեղեկությունը ընկալելու վրա: Այս ուսումնասիրությամբ հնարավոր է նման համաճարակների ժամանակ մշակել հաղորդակցման ռազմավարություն և միջոցներ, որ տեղեկության որոշակի քանակ չկորչի դիմակի պատճառով: Դիմակներ կրելիս խոսքի հասկանալիությանը և ըմբռնելիությանը օգնում են ավելի դանդաղ, հըս-

տակ ու բարձրաձայն խոսելը և ավելի պարզ արտասանությունը: Այնուամենայնիվ, բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ մարդիկ ժամանակի ընթացքում հարմարվում են դիմակ կրելուն, դիմակի պատճառով առաջացած ձայնաբանական փոփոխություններին և ընկալում են արտաբերված խոսքը լսողական այնպիսի ազդանշաններով, ինչպիսիք են հնչերանգը, ձայնի տոնայնությունը. իմաստային առումով կարևորվում է նաև խոսքաշարը:

**Դալալյան Տ., Արեւմտահայերէնի կանոնարկման եւ զարգացման հարցերը «Յառաջ»ի էջերուն մէջ. շարք մը դիտարկումներ**
(հոդված)

20-րդ դարասկզբին, ժամանակակից արդիական ճարտարագիտութիւններու բացակայութեան պայմաններուն, ըստ յօդուածագրի, տպագիր մամուլին դերը՝ ազգի ինքնութեան պահպանման եւ համախմբումի հարցին մէջ շատ աւելի նշանակալից եղած է, քան ներկայիս: Սա յատկապէս կը վերաբերի հայրենիքէն դուրս բնակող ազգային հաւաքականութիւններու, որ գոյաբանական խնդրոյ առջեւ կը գտնուին՝ ազգապահպանումի եւ ուծացումէ խուսափելու համար: 1915-ի Ցեղասպանութենէն յետոյ Ֆրանսան դարձած էր Եւրոպահայութեան կեդրոնը՝ անոր շնորհիւ, որ այստեղ կը ձեւաւորուէր Եւրոպայի ամենէն մեծ եւ աշխոյժ հայկական համայնքը: Այս հանգամանքը, իր կարգին, հետեւանք էր արտաքին աշխարհաքաղաքական ասպարէզին վրայ եւ մասնաւորաբար իր մերձաւորարեւելեան քաղաքականութեան մէջ Ֆրանսայի դիրքաւորման՝ որպէս Արեւելքի քրիստոնեաներու պաշտպան եւ հովանաւոր: Նշուած երկու գործօնները հաշուի առնելով՝ անշուշտ պատահական չէ, որ ֆրանսահայութեան կողմէ հիմնուած հաստատութիւնները, ի շարս որոնց եւ մամուլը, տարիներ շարունակ առաջատար դեր կը խաղային Եւրոպայի զանազան երկիրներու մէջ բնակութիւն հաստատած հայերուն համար: Աւանդաբար

արեւմտահայերէնը Ֆրանսայի մէջ կը սեպուի իբրեւ հայութեան «պաշտօնական» լեզուական տարբերակ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ֆրանսահայ Սփիւռքի հնաբնակներուն կորիզը կազմած են երբեմնի Օսմանեան Կայսրութեան տարածքէն 1915-ի Ցեղասպանութեան հետեւանքով բռնագաղթած հայերը, որոնց մայրենի լեզուն արդի հայերէնի՝ աշխարհաբարի արեւմտահայ գրական տարբերակն էր։ «Յառաջ»-ը տասնամեակներու ընթացքին դարձաւ ոչ միայն արեւմտահայերէն գրական տարբերակի պահպանման եւ զարգացման դարբնոց, այլեւ Սփիւռքի մէջ (արեւմտա)հայ ինքնութեան խորհրդանիշ։ Յօդուածին մէջ առանձնայատուկ ուսպնեակի տակ կ'առնուեն Շ. Միսաքեանի եւ Շ. Նարդունիի հայեացքները, իբրեւ «Յառաջ»-ի երկու գաղափարախօսական հսկաներու, որոնք զուրկ չէին նաեւ քաղաքագիտական հոտառութենէ եւ գրական-գեղարուեստական ճաշակէ։

**Դալալյան Տ., «Թաքուն, քողարկված» հասկացության բայանվանական և գոյականական դրսևորումները վաղնջահայերենից եկող մի արմատի հայ-իրանական ստուգաբանական քննության լույսի ներքո**
(հոդված)

Հոդվածի նպատակն է համակողմանի պատմահամեմատական քննությամբ ստուգաբանել հայ. *կուզ* բառը, որը գրաբարում նշանակել է «կատու»։ Ավանդաբար համարվելով իրանական ծագման բառ (սակայն ո՛չ նոր պարսկերենում, ո՛չ միջին պարսկերենում՝ պահլավերենում, ո՛չ էլ, առավել ևս, հին պարսկերենում այն գոյություն չունի՝ գոնե հոդվածագրին հայտնի գրավոր աղբյուրներում)՝ այն չի ենթարկվել առավել խորին բառաքննական հետազոտության, որի հետևանքով մի կողմից ստվերում են մնացել դրան առնչվող ցեղակից բառաձևերն ու արմատային հնարավոր տարբերակները, մյուս կողմից էլ դրան վերաբերող լեզվաբանական որոշ տվյալներ մնացել են անհայտ։ Հոդվածագրի կարծիքով՝ սկզբնապես վաղնջահայերենում *կուզ*-ը պետք է լիներ բայ-

արմատ և նշանակեր «թաքնվել» կամ «դարանակալել», այսինքն՝ նշված կենդանիների անունները, այդպիսով, կարող էին լինել բայանուններ, որոնք հետագայում վերածվեին գոյականների, իսկ արմատի բայական իմաստը մթագնվեր ու ի վերջո կորսվեր: Առկա լեզվաբանական տվյալները և պատմահամեմատական «հընգահատկանիշ» քննությունը, ըստ հոդվածագրի, հանգեցնում են այն մտքին, որ հանձին *կուզ- (*guz-, *ğuz-)* բայարմատի՝ վաղնջահայերենում, ալաներենում, մարերենում և աքքադերենում (այսինքըն՝ պատմական Ասորեստանի պետական լեզվում) առկա է ենթաշերտային մի ձևույթ, որը պատկանել է նշված տարածաշրջանի ժողովուրդների որսորդական բառոլորտին և ավելի ուշ վկայվել է գրաբարում, քրդերենում, օսերենում և ասորերենում: Նշված լեզուները խոսվել կամ խոսվում են հենց այն կոնտակտային գոտում, որը հոդվածում առաջարկվում է ձևակերպել որպես «հայ-ատրպատականա-մարական»:

**Դալալյան Տ., Կայծակնահար մահացածի շուրջ կատարվող պարը օսական ավանդույթում. *ցոփփայ* - հայ. *ցոփ*** (հոդված)

Հոդվածում նշվում է, որ 19-րդ դարում գերմանացի ճանապարհորդ Շտյոդերը, լինելով Հյուսիսային Կովկասում, մանրամասնորեն նկարագրում է օսական «ցոփփայ» կոչվող ծեսը, որ կատարվում էր կայծակից մահացածի շուրջ:

Լեզվաբանական քննությունը ցույց է տալիս, որ ամենայն հավանականությամբ՝ *ցոփ* բառը սկզբնապես վերաբերել է հենց թեթևաքայլ պարային շարժումներին, հետագայում՝ քրիստոնեության օրոք, դիվականացվելով՝ բացասական երանգ է ձեռք բերել և ընդհանրացվել: Բառը բազմիցս օգտագործում են հայ միջնադարյան հեղինակները՝ բնորոշելու համար հեթանոսական բարքերը:

Հոդվածում առաջարկվում է օս. *ցոփփայ* - հայ. *ցոփ* բառային զուգաբանության մասին վարկած, որն աննկատ է մնացել հայերենին և օսերենին վերաբերող ստուգաբանական աշխատանքնե-

րում, այս զուգաբանությունը վերլուծվում է մշակութաբանական և լեզվաբանական համատեքստում:

**Դալալյան Տ., Առասպելաբանական վիշապը և ոռոգման համակարգերի առաջացումը** (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ աշխարհի տարբեր ժողովուրդների առասպելական պատկերացումներում և հավատալիքներում վիշապն ի սկզբանե բնության խթոնիկ՝ տարերային և անկառավարելի, ավերիչ ուժերի մարմնավորումն է: Ըստ էության՝ իր բընույթով վիշապը հակահամակարգ է և դեմ է տիեզերական կարգ ու կանոնին, սակայն շատ առասպելներ ոռոգման համակարգերի առաջացումը կապում են առասպելաբանական վիշապին: Հայերեն *վիշապ* բառի ծագմանն անդրադարձել են գրեթե բոլոր նշանավոր հայագետ-լեզվաբանները, սակայն մինչ օրս չկա բառի՝ համընդհանուր ընդունված ստուգաբանություն: Իրանագետներն ավեստ. *višāpa-* բառը սկզբնապես համարում էին հասարակ ածական, որին վերագրվում էր "des säfte gift sind" («թունավոր հյութեր ունեցող», "whose juices are poison") նշանակությունը, և ավեստերենի հետ համեմատում հայ. *վիշապ* փոխառությունը: Հոդվածագրի կարծիքով՝ գրաբարում վկայված *յուշապ* ձևը հուշում է, որ *վիշապ* բառի մեջ *վ*-ն նախահավելված շփական է: Հետևաբար եթե բառը հայերենում փոխառյալ է իրանական որևէ լեզվից, ապա դրա նախաձևը պետք է լիներ **(v)i-šāp-*, որում *(v)i*-ն բայական նախածանց է, իսկ արմատը՝ *šāp-*: Այս արմատի զուգահեռն առկա է հին հնդկերենում՝ *kšap-*, *kšapayati-*, որ նշանակում էր «կործանել, ոչնչացնել»: Ըստ հոդվածագրի՝ հայ. *վիշապ* բառի՝ առաջարկված ստուգաբանությունը ներդաշնակորեն շաղկապվում է նրա դիցաբանական լիցքին:

**Համբարձումյան Վ., Հայերեն ստուգաբանություններ**
(հոդված/ռուսերեն)

Հոդվածում սեղմ վերլուծությամբ տրվում է հայ. *հազ-* «շունչ» *//հեզ-* «վանկ. արտաբերություն», *Հայկ (այգ)* «լույս», «դիցանուն, անվանադիր (էպոնիմ)» և *ոգորիլ* «կռվել, հակառակվել» բառերի ծագումը: Վերլուծությունը կատարվում է մինչև այժմ հայերենի բառաքննության և ստուգաբանության բնագավառում կատարվածի և վերջին տարիներին գրված նման աշխատանքների տվյալների հիման վրա, նոր մոտեցումով: Պարզվում է՝ այդ բառերը բնիկ են, քանի որ ունեն վստահելի զուգահեռներ ինչպես հիմնականում հնդեվրոպական, այնպես և մասամբ այլ ցեղակցության լեզուներում:

**Համբարձումյան Վ., Քերովբե Պատկանյանը և հայերենի հնդեվրոպական բնույթի ու հայ բարբառների տեսության հարցերը** (հոդված)

Հոդվածում քննության առարկա է XIX դ. ռուսական լեզվաբանական դպրոցի անվանի ներկայացուցիչ Քերովբե Պատկանյանի հիմնարար ներդրումը հայերենի հնդեվրոպական բնույթի և հայ բարբառների տեսության ուսումնասիրության հարցերում, որոնք արդի հայագիտության մեջ մնում են ստվերում: Հոդվածագիրը նշում է, որ Քերովբե Պատկանյանը XIX դ. 2-րդ կեսի Ռուսաստանի ամենանշանավոր հայագետ-արևելագետն է, որ ներկայացնում էր այդ բնագավառի Պետերբուրգյան հռչակավոր դպրոցը: Հոդվածագիրն անդրադառնում է Քերովբե Պատկանյանի տարբեր բնույթի հիմնարար աշխատությունների, հրատարակած հին հայերեն (գրաբար) բնագրերի, հայ պատմիչների երկերի ռուսերեն թարգմանությունների՝ բնագրային ծանոթագրություններով:

Քերովբե Պատկանյանը նաև հայ բարբառագիտության ռուսական դպրոցի հիմնադիրն է և սկզբնավորողը, որի աշխատությունները, ըստ հոդվածագրի, այսօր առավել ևս ուշագրավ են և անհրաժեշտ տեսական ավելի լայն ուսումնասիրության համար: Հոդվածագիրը նշում է, որ հայ բարբառներին վերաբերող նրա տեսական և գործնական բնույթի գիտական ժառանգությունը լայն դիտանկյունից նայելիս ունի առանցքային նշանակություն լեզվի ընդհանուր պատմության տեսանկյունից:

**Միքայելյան Ս., Հայերենի արաբերեն միջնորդավորված փոխառությունների շուրջ (թուրքերենով միջնորդավորված բառաշերտ)** (հոդված)

Հոդվածում ուսումնասիրվում են հայերենում (բարբառներում) թուրքերենի միջնորդությամբ փոխառված արաբերեն բառերի հնչյունական առանձնահատկությունները՝ ըստ փոխատու, միջնորդ և փոխառու լեզուներում դրանց դրսևորման եղանակների:

Հոդվածագիրը դիտարկում է միջնորդավորված փոխառությունների հնչյունափոխական այնպիսի երևույթներ, որոնք հիմնականում պայմանավորված են միջնորդ լեզվի ազդեցություններով: Զուգադրական-համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արաբերեն ծագման փոխառյալ բառերը միջնորդ և փոխառու լեզուների հնչյունական համակարգերին համապատասխանելու նպատակով կրել են զանազան փոփոխություններ:
Ներկայացնելով մի շարք օրինաչափություններ և հիմնավորումներ՝ նա նշում է, որ երբեմն բարդ է հստակ որոշել, թե այս կամ այն հնչյունափոխական երևույթն ի սկզբանե որ լեզվում կամ հայերենի որ բարբառային միավորում է առաջացել, և հարյուրամյակներ շարունակ նույն միջավայրում գոյատևած լեզվական ենթահամակարգերն առանձին դեպքերում ինչպիսի փոխազդեցություններ են կրել:

**Միքայելյան Ս., Հայերենում և ռուսերենում գործածվող արաբերեն փոխառյալ բառերի շուրջ** (հոդված/ռուսերեն)

Հոդվածում նշվում է, որ փոխառություններ առկա են բոլոր լեզուներում, նրանց պատմական զարգացման տարբեր փուլերում և պայմանավորված են լեզվական ու արտալեզվական բազմաթիվ գործոններով: Հայերենի փոխառյալ բառապաշարը ներառում է նաև արաբերենից փոխառված բառաշերտ: Արաբերեն փոխառությունները, ժամանակագրությամբ պայմանավորված, կատարվել են անմիջականորեն կամ միջնորդավորված: Հայերենի արաբական միջնորդավորված փոխառությունների միջնորդ լեզուներ են եղել պարսկերենը, թուրքերենը և ռուսերենը:

Հոդվածում դիտարկվում են ռուսերենի միջնորդությամբ 20-րդ դարում կատարված՝ արդի հայերենում և ժողովրդախոսակցական լեզվում ու բարբառներում գործածվող մի շարք փոխառություններ: Զուգադրական-համեմատական մեթոդի կիրառմամբ ցույց են տրվում հնչյունական և իմաստային մի շարք փոփոխություններ, որոնք կրել են արաբերենից փոխառյալ բառերը:

Հոդվածագիրն արձանագրում է, որ արաբերեն փոխառությունների կրած հնչյունական փոփոխությունները բնութագրվում են ոչ նշույթավորվածությամբ, քանի որ դրանք հիմնականում պահպանել են փոխատու լեզվի հնչյունական համակարգը: Առավել ակնառու են բառիմաստային զարգացումները:

**Մկրտչյան Մ., Նշանագիտական թարգմանության առանձնահատկությունները տեսողական հաղորդակցության մեջ. «իմսիրուն» գովազդային արշավի օրինակով** (հոդված)

Հոդվածում նշվում է, որ գովազդային պաստառը տեսողական փոխաբերություններով հարուստ նշանային համակարգ է: Երկիմաստ ուղերձներով հարուստ տեսողական պատկերը երբեմըն ուղեկցվում է լեզվական նկարագրությամբ, իսկ լեզվական

նկարագրությունը, որը կոչվում է նաև խոսքային հաղորդում, ամբագրում է տեսողական փոխաբերության կամ ոչ խոսքային հաղորդման իմաստը: Ըստ հոդվածագրի՝ կան, սակայն, դեպքեր, երբ խոսքային և ոչ խոսքային հաղորդումները ոչ թե փոխլրացնում, այլ հակադրվում են: Հոդվածը փորձ է նկարագրելու Ավանտայի «իմսիրուն» գովազդային արշավի երկու պաստառները, որոնք հակասական արձագանքների են արժանացել: Այդ հակադրության պատճառը պարզելու համար նշանագիտական թարգմանությունը որպես վերանշանավորում ըմբռնելով՝ հոդվածագիրը վերծանում է այդ երկու պաստառներում առկա տեսողական փոխաբերությունը, լեզվական նկարագրությունն ու պարունակվող հարանշանակությունները: Նշանագիտական վերլուծությամբ պարզվում է, որ խոսքային և ոչ խոսքային հաղորդումները հակադրվում են, որն էլ առիթ է տվել, որ հասարակության լայն զանգվածներ այդ պաստառները ոչ միանշանակորեն ընկալեն:

**Սարգսյան Մ., Մոլոդիչենկո Եվ., Հայերենի ուսուցումը միջմշակութային հաղորդակցության միջոցով.պատկերացումներ և հեռանկարներ** (հոդված)

Հոդվածագիրները նշում են, որ հոդվածի շրջանակում ներկայացվում են հայերենը միջմշակութային հաղորդակցության համատեքստում ուսուցանելու առանձնահատկությունները: Հայերենի ուսուցումը կազմակերպելիս կարևորվում է ոչ միայն սովորողների խոսքային հիմնական ունակությունները (լսել, խոսել, գրել, կարդալ), այլև սոցիալական տարաբնույթ իրավիճակներում հաղորդակցման համար անհրաժեշտ կարողությունները զարգացնելը: Հոդվածագիրներն անդրադառնում են այդ կարողությունները ձևավորելու գործոններին և առաջարկում կարողությունները զարգացնող որոշ լուծումներ:

**Սարգսյան Մ., Բաղրամյան Ս., Հայերենը որպես սփյուռքի լեզու. մարտահրավերներ և խնդիրներ** (հոդված)

Հոդվածագիրները նշում են, որ օտարալեզու միջավայրում հայերենի ուսուցումը լի է բազմաթիվ մարտահրավերներով ինչպես սովորողների, այնպես էլ դասավանդողների համար: Ներկայացվում են մի քանի հիմնական մարտահրավերներ, որոնք արձանագրվել են սփյուռքի տարբեր համայնքներում դաշտային աշխատանքների արդյունքները վերլուծելիս: Նշվում է նաև, որ հետազոտության ընթացքում կիրառվել է որակական և քանակական մեթոդաբանության մեխանիզմը՝ խորքային հարցազրույցներ, փորձնական հարցումներ, փաստաթղթերի վերլուծություն, դիտարկում և հարցաթերթի լրացում:

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, այժմ Սփյուռքում ապրող հայերի մեծ մասը չի խոսում կամ մասամբ է խոսում հայերեն: Նրանց մեծ մասի համար հայերենը օտար կամ լավագույն դեպքում՝ երկրորդ լեզու է: Ուսումնական ռեսուրսների սակավությունը, հաղորդակցման միջավայրի պակասը, լեզվական իմացության և մշակութային տարբերությունները լուրջ մարտահրավերներ են դասավանդողների համար:

**Սիմոնյան Ն., Ստուգաբանական դիտարկումներ**
(հոդված/ռուսերեն)

Հոդվածում քննվում են հայերեն *աղանձ, աղանձնիլ* և *հասանել/հանել* բառերի ծագման և դրանց՝ հնդեվրոպական մյուս լեզուներում առկա համապատասխանությունների հարցերը, մասնավորապես հայերեն բառերի և գերմանական լեզուների՝ հ.-ե. նույն նախաձևերին հանգող բառերի իմաստային տարբերությունները: *Աղանձ* բառի համար կանխադրվում է հ.-ե. *lṇdh- նախաձևը, իսկ *հասանել/ հանել* բայի համար՝ *enek-, *nek-, enk-. *nk-: Այս նախաձևերը արտացոլված են նաև հնդեվրոպական մյուս լե-

զուներում. բերվում են գերմանական լեզուների՝ այս նախաձևերին հանգող արմատները, որոնք իմաստային որոշակի տարբերություններ ունեն հայերենից:

**Սիմոնյան Ն., Ստուգաբանական դիտարկումներ**
(հոդված/ռուսերեն)

Հոդվածում քննվում են հայերեն *խալ* բառի («բիծ, նշան մարդկանց և կենդանիների մաշկի վրա») ծագման հարցերը: *Խալ* բառը համարվել է փոխառություն պարսկերենից: Նկատի ունենալով հնդեվրոպական լեզուների ստուգաբանական բառարաններում վկայվող *kel-, *kāl- նախաձևերի իմաստները և համեմատելով հնդեվրոպական մյուս լեզուներում այդ նախաձևերին հանգող արմատների հնչյունական և իմաստային համապատասխանությունները՝ առաջարկվում է հայերենի *խալ* բառին վերագրել հ.-ե. ծագում՝ հանգեցնելով հ.-ե. *kāl- նախաձևին:

**Սիմոնյան Ն., Մկրտչյան Մ., Փոխաբերություն երևույթը և նրա բնորոշումը լեզվաբանության մեջ**
(հոդված)

Հոդվածագիրներն անդրադառնում են լեզվաբանության մեջ փոխաբերության կարևոր դերին՝ համադրելու միջոցով ներկայացնելով փոխաբերությանը վերաբերող նշանակալի ուսումնասիրություններն արդի լեզվաբանության մեջ՝ առանձնակի ուշադրություն հատկացնելով ճանաչողական լեզվաբանության տեսաբանների ու հայ լեզվաբանների տեսակետներին:

## Գ. ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2024 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները։

### ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արցախի ժողովրդագիտությունը. Ղարաբաղի բարբառը (Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Ա. Յու. Սարգսյանի), հ. 14 (14), Ե., «Արմավ» հրատ., 2024, 684 էջ։

Արցախի ժողովրդագիտությունը. Ղարաբաղի բարբառը (Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Ա. Յու. Սարգսյանի), հ. հ. 15(15), Ե., «Արմավ» հրատ.,2024, 684 էջ։

### ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

«Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2024, 145 էջ։

Վարդանյան Ա.Վ., Դիտարկումներ մայրենիի շուրջ։ Հոդվածների ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, 76 էջ։

### ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Բառնասյան Ջ. Ա., Երկբարբառացումը որպես քերականական միջոց հայերենի որոշ բարբառներում, «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 20-28։
2. Գևորգյան Գ. Գ., Դիտարկումներ Սևերեկի, Տիգրանակերտի և Եղեսիայի հնչյունական առնչությունների շուրջ, «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 29-42։

3. Գևորգյան Գ. Գ., Նկատառումներ արդի արևելահայերենի բայի ձևակազմական տարբերակների ուսուցման շուրջ, «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը և լեզուների դասավանդման արդի հիմնահարցերը» հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., 2024, էջ 51-56:
4. Խաչատրյան Հ. Ռ., Բասենի խոսվածքը Շիրակի մարզում (քերականական առանձնահատկություններ), «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (21), Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 61-75:
5. Խաչատրյան Հ. Ռ., Դիտարկումներ Համշենի բարբառի հնչյունական առանձնահատկությունների շուրջ, «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 62-83:
6. Կատվալյան Վ. Լ., Խառատյան Մ. Հ., Սահակյան Ն. Գ., Շարահյուսական որոշ զուգաբանությունների արտահայտությունը բարբառային հայերենում, «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 114-130:
7. Կատվալյան Վ. Լ., Շիրակի մարզի խոսվածքներին բնորոշ մի քանի բառերի մասին, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (21), Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 76-88:
8. Կատվալյան Վ. Լ., Բարբառային հայերենը Հայաստանի Հանրապետությունում, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա, Զեկույցներ, Ե., 2024, 1 (124), էջ 67-86:
9. Մեսրոպյան Հ. Հ., Գրաբարի հնչյունական եւ բառապաշարային որոշ իրողություններ հայերենի բարբառներում, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N 2 (44), Ե., 2024, էջ 61-69:
10. Մեսրոպյան Հ. Հ., Կոմիտաս վարդապետի և Մանուկ Աբեղյանի գրառած խաղիկներում գործածված բուսանունների իմաստային-գործառական առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N 3 (45), Ե., 2024, էջ 54-66:
11. Մեսրոպեան Հ. Հ., Պօղոսյան Ա. Կ., Հայոց դիւցազնավէպի լեզուի և գրառման առանձնայատկութիւնների մասին, «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-12, Վիեննա, 2024, էջ 115-132:

12. Մեսրոպյան Հ. Հ., Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի բարբառային հրատարակությունները, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի հիմնադրման 10-ամյակին նվիրված գիտաժողովի զեկույցների ժողովածու, Ս. Էջմիածին, 2024, էջ 17-29:
13. Մեսրոպյան Հ. Հ., Ռշտունիքի ժողովրդական հեքիաթներում գործածված բուսանունների իմաստային-գործառական առանձնահատկությունները, «Հեքիաթի բանագիտական քննություն. Ժանրային խաչաձևումներ և փոխակերպումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2024, էջ 69-71:
15. Մեսրոպյան Հ. Հ., Լեզվի հարցերը «Մշակ» լրագրում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., Ե., 2024, էջ 395-410:
16. Մեսրոպյան Հ. Հ., Համբարձումյան Ս.Վ., Տայքի հայերի տեղաշարժերի և լեզվատարածքային առանձնահատկությունների մասին, «Տայքը պատմության խաչուղիներում» գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2024, էջ 192- 205:
18. Մեսրոպեան Հ.Հ., Սիւնիքի տարածաշրջանի բուսանուններն ըստ «Ազգագրական հանդէսի», «Էջմիածին» ամսագիր, Վաղարշապատ, № Է, 2024, էջ 79-93:
19. Սարգսյան Ա. Յու., Մինասյան Շ. Մ., Ղարաբաղի բարբառը Լավրենտի Հովհաննիսյանի ուսումնասիրություններում, «Պատմաբանասիրական հանդես», N 3 (227), Ե., 2024, էջ 89-92:
20. Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի առաջին ուսումնասիրությունները, «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 176-188:
21. Վարդանյան Ա. Վ., Դիտարկումներ Ջուղայի բարբառի վերաբերյալ տարաժամանակյա հայեցակետով, «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 189-200:

22. Վարդանյան Ա. Վ., Պաշտոնական հայերենի մի քանի եզրույթների գործածության սխալների մասին, Գավառի պետական համալսարանի 27-րդ գիտաժողովի նյութեր, Ե., 2024, էջ 409-417:
23. Վարդանյան Ա. Վ., Օծուփ-Հորսի խոսվածքի առնչությունները շրջակա բարբառների հետ, «Պատմաբանասիրական հանդես», N 2 (226), Ե., 2024, էջ 107-112:
24. Վարդանյան Ա. Վ., Մարաղայի բարբառի խոսվածքներ Նախիջևանի տարածքում, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հանդեսում, 1 (21), Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 89-100:
25. Վարդանյան Ա. Վ., Բառագործածության մի շարք սխալների մասին, «Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 170-176:
26. Քումունց Մ.Ս., Բաբայան Ա.,Ածանցումը Գորիսի բարբառում, «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 201-228:
27. Քումունց Մ. Ս., Բակունց Ա., Դարձվածքները Ա. Բակունցի «Կյորես» վիպակում (համեմատական քննություն), «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 229-248:
28. Քումունց Մ. Ս., Բաղդասարյան Մ., Կապի հնչյունական, բառային և քերականական դրսևորումները Գորիսի բարբառում, «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 230-249:
29. Քումունց Մ.Ս., Մարգարյան Մ., Արևելյան լեզուներից անցած փոխառությունները Գորիսի բարբառում (ըստ Ս. Խանզադյանի «Մատյան եղելության» վիպակի), «Բարբառագիտական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 250-269:
30. Gevorgyan G.G., Armenian Dialects of mixed mode of formation, N 8, "Philological Researches", Gori, 2024, p. 22-29.
31. Kumunts M. S., Margaryn I., Khachatryan H. R., Mkhitaryan G. M., Gevorgyan G.G., Nersisyan L., Katvalyan V. L., The Historical Deve-

lopment of the Place Name in Armenian (Etymology of "Harzhis" Sacred Area), "Forum for Liguistic Studies", vol. 6, Singapore, 2024, p. 43-53.

32. Месропян А., Влияние христианской религии на лексический запас армянского языка, «Золотой V век армянской культуры: достижения. мировое значение», Сб. статей, Институт мировой литературы им. А.М. Горького РАН, Российская и Ново-нахичеванская епархия ААЦ, Ассоциация арменоведов, Издательство «Ключ-С», Москва, 2024, с. 270-278.

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

### Արցախի ժողովրդագիտությունը. Ղարաբաղի բարբառը

(մատենաշար. հատոր 14. աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Ա. Յու. Սարգսյանի)

«Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը ներառում է Արցախի ոչ նյութական մշակույթի երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանն ու բարբառին, վերաբերող և առնչվող հիմնական այն աշխատությունները, ժողովածուները, հոդվածները, գիտական զեկուցումները, այլ նյութեր, որոնք գրառել ու հրատարակել են հայ և օտարազգի տարբեր ազգագրագետներ, բանահավաքներ, բանագետներ, բարբառագետներ, այլ մտավորականներ 19-րդ դարի կեսերից առ այսօր կամ դեռևս ձեռագիր վիճակում պահվում են տարբեր արխիվներում ու թանգարաններում: Մատենաշարի սույն հատորում ընդգրկվել են Քերովբե Պատկանյանի, Հրաչյա Աճառյանի, Արարատ Ղարիբյանի, Ահարոն Գրիգորյանի, Կարո Դավթյանի՝ Ղարաբաղի բարբառին ու նրա առանձին խոսվածքներին նվիրված ուսումնասիրությունները, որոնք հրատարակվել են 19-20-րդ դարերում: Նյութերը ներկայացվում են որոշակի խմբագրությամբ ու սրբագրությամբ՝ ընդհանուր առմամբ պահպանելով հեղինակների տառադարձությունները: Ընդարձակ առաջաբանում տրվում է բարբառի ուսում-

նասիրության պատմությունը, իսկ վերջում՝ սույն և մատենաշարի նախորդ հատորների բովանդակությունը:

**Արցախի ժողովրդագիտությունը. Ղարաբաղի բարբառը**
(մատենաշար. հատոր 15. աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Ա. Յու. Սարգսյանի)

«Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը ներառում է Արցախի ոչ նյութական մշակույթի երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանն ու բարբառին, վերաբերող և առնչվող հիմնական այն աշխատությունները, ժողովածուները, հոդվածները, գիտական զեկուցումները, այլ նյութեր, որոնք գրառել ու հրատարակել են հայ և օտարազգի տարբեր ազգագրագետներ, բանահավաքներ, բանագետներ, բարբառագետներ, այլ մտավորականներ 19-րդ դարի կեսերից առ այսօր կամ դեռևս ձեռագիր վիճակում պահվում են տարբեր արխիվներում ու թանգարաններում: Մատենաշարի սույն հատորում ընդգրկվել են Արմենակ Պողոսյանի «Հադրութի բարբառը» և Ալեքսանդր Մարգարյանի «Գորիսի բարբառը» ուսումնասիրությունները: Նյութերը ներկայացվում են որոշակի խմբագրությամբ ու սրբագրությամբ՝ ընդհանուր առմամբ պահպանելով հեղինակների տառադարձությունները: Հատորի վերջում տրվում է սույն և մատենաշարի նախորդ հատորների բովանդակությունը:

**Բառնասյան Զ., Երկբարբառացումը որպես քերականական միջոց հայերենի որոշ բարբառներում** (հոդված)

Հոդվածագիրը համոզմունք է հայտնում, որ հայերենի բարբառների գերակշիռ մասին առավել բնորոշ է պարզ ձայնավորներ և երկհնչյուններ գործածելը՝ վկայակոչելով ըստ հատուկ ծրագրի բարբառների հավաքչական աշխատանքներով կուտակված նյութերում առկա փաստերը և բարբառագիտական մենագրություններում եղած վկայությունները: Հոդվածում նշվում է, որ Վանի, Խոյի,

Մարաղայի, Շատախի, Դիադինի և հարակից այլ վայրերի խոսվածքներում առկա երկբարբառացման կողքին համեմատաբար թույլ է այդ իրողությունը Արարատյան բարբառի խոսվածքներում: Հոդվածում բերվում են վկայություններ, որ դրանցով հարուստ են հայերենի կենտրոնական, հարավարևմտյան և հարավարևելյան բարբառախմբերի խոսվածքները: Հոդվածագիրը ներկայացնում է Անտիոքի շրջանի Սվեդիայի բարբառին բնորոշ շատ հետաքրքիր իրողություն. Սվեդիայի բարբառում երկբարբառացումն օգտագործվում է որպես քերականական միջոց՝ այդ կերպ արտահայտելով գոյականի որոշյալության հատկանիշը: Այդպիսով՝ հայերենի որոշ բարբառներում երկբարբառացումը ծառայել է նաև որպես քերականական ինքնատիպ միջոց:

**Բառնասյան Ջ., Դերանվանական իրողություններ Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբում** (հոդված)

Քննելով արևմտյան խմբակցության բարբառների հարավկենտրոնական կամ Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի դերանունները՝ հոդվածագիրը հիմնականում անդրադառնում է առկա ինքնատիպ ձևերին ու հետաքրքիր իրողություններին: Նշելով, որ դերանուն խոսքի մասին վերաբերող ծավալուն մենագրության մեջ Հ. Աճառյանը փաստում է անձնական դերանունների՝ բառապաշարի համահայերենյան շերտին պատկանելու իրողությունը, և այն, որ հայոց լեզվի բոլոր փուլերում մշտապես գործածվող *ես*, *դու*, *մենք*, *դուք* դերանուններն առկա են հայերենի բոլոր բարբառներում, հոդվածագիրը հարկ է համարում որոշ դիտարկումներ անել այդ առիթով: Հոդվածում նշվում է, որ հետաքրքիր իրողություններ են ի հայտ գալիս անձնական դերանունների հոլովական համակարգը քննելիս:

Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի դերանվանական համակարգում առկա հետաքրքիր իրողությունների քննությամբ հոդվածագիրը եզրակացնում է, որ միանգամայն ընդունելի է նշանա-

վոր բարբառագետ Ա. Ղարիբյանի այն կարծիքը, որ շատ հաճախ դերանուններն են բարբառների հարևան լինելու հանգամանքը պարզելու հայտանիշը:

**Գևորգյան Գ., Նկատառումներ արդի արևելահայերենի բայի ձևակազմական տարբերակների ուսուցման շուրջ**
(հոդված)

Հոդվածում նշվում է, որ ամեն մի լեզու ունի լեզվական միջոցների ընտրության և գործածության պատմականորեն ձևավորված կանոններ՝ լեզվական նորմեր, որոնցով հաստատված ձևերին զուգահեռ լեզվի զարգացման որոշակի փուլում գործածվում են նաև ընդունված կանոններից շեղվող տարբերակային կազմություններ. դրանք սկզբնապես կիրառվում են բանավոր խոսքում, մինչև ավանդական կամ նորակազմ ձևերից որևէ մեկը դառնում է կանոնական: Ըստ հոդվածագրի՝ ինչպես արդի արևելահայերենի լեզվական բոլոր համակարգերում, բայականում ևս առկա են տարբերակային ձևեր, որոնք բնորոշվում են իմաստային համարժեքությամբ և ձևային տարարժեքությամբ: Փորձը ցույց է տալիս, որ ձևակազմական տարբերակների կառուցվածքային կաղապարների յուրացումն առավել դյուրին է, երբ սովորողները տիրապետում են լեզվական նորմով սահմանված կանոններին: Միևնույն ժամանակ, եթե նկատի են ունենում, որ լիարժեք և անսխալ հաղորդակցման համար հարկ է, որ խոսքի ընթացքում ճշգրտորեն կիրառվեն բայական կանոնական տարբերակները, ապա պարզ է դառնում հիշյալ խնդիրը հաղթահարելու կարևորությունը:

Հոդվածագիրը փորձել է նոր խմբավորմամբ ներկայացնել ձևակազմական տարբերակները՝ առաջարկելով հարցի ուսուցման մեկ այլ տարբերակ: Ուսուցման գործընթացը առավել դյուրին դարձնելու նպատակով հիշյալ լեզվամիավորները դասդասել է՝ նկատի ունենալով դրանց ձևակազմական առանձնահատկությունները: Ըստ այդ հատկանիշի՝ բայական տարբերակները հակադրվում են տարբեր բայահիմքերով, նույն բայահիմքի տարբե-

րակային ձևերով, ածանցավոր և ածանցազուրկ ձևերով, ածանցավոր կազմություններով, -*ել* և -*ալ* վերջավորություններով, դիմաթվանիշ թեքույթներով: Տարբերակային եզրերի այս հակադրությունները նկատի ունենալով՝ առանձնացվել է ձևակազմական տարբերակների 3 խումբ՝ տարահիմք, տարակազմ և տարաձև:

**Գևորգյան Գ., Ներկայի խառը կազմությամբ բարբառներ**
(հոդված/անգլերեն)

Հոդվածագիրը նշում է, որ հայերենի որոշ բարբառների բնորոշ է ներկայի կազմության խառը ձևը: Ներկան կազմելիս այս բարբառները գործածում են բարբառային տարբեր ճյուղերին բնորոշ ձևաբանական միջոցներ: Նմանատիպ հատկանիշներ ունեցող բարբառները սովորաբար կոչվում են միջխմբային: *Միջխմբային բարբառներ* անվանումը պայմանավորված է հայ բարբառագիտության մեջ ընդունված բարբառների դասակարգման ձևաբանական սկզբունքով, ըստ որի՝ Ում ճյուղի հիմնական հատկանիշը -ում վերջավորությամբ անկատար դերբայով ներկայի ձևեր կազմելն է, Ս ճյուղինը՝ -ս վերջավորությամբ դերբայով, իսկ Լ ճյուղինը՝ -լ վերջավորությամբ անորոշ դերբայով: Մասնիկավոր կազմությամբ բարբառներին հատուկ է գրաբարյան ներկայի ձևերին մասնիկների հավելումը:

**Գևորգյան Գ., Դիտարկումներ Սևերեկի, Տիգրանակերտի և Եղեսիայի հնչյունական առնչությունների շուրջ** (հոդված)

Հոդվածագիրը դիտարկում է Սևերեկի, Տիգրանակերտի և Եղեսիայի բարբառային միավորների հնչյունական այն առնչությունները, որոնք ներկայանում են որպես ձայնավորական, բաղաձայնական, ձայնորդային և երկբարբառային զուգաբանություններ: Հիշյալ բարբառային միավորների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 3-ն էլ գտնվում են Հայկական

Միջագետքում՝ հարևանությամբ, Սևերեկը՝ Տիգրանակերտ և Եդեսիա քաղաքների միջև:

Վերոնշյալ բարբառային միավորների հնչյունական հատկանիշների քննությամբ պարզվում է, որ հնչյունական հատկանիշներով Սևերեկի խոսվածքը հարում է Եդեսիայի և Տիգրանակերտի բարբառներին՝ երբեմն այս կամ այն հատկանիշի սահմաններում երևան հանելով բարբառային տարբեր հատկանիշների զուգակցում: Խոսվածքը դրսևորում է նաև այնպիսի հատկանիշներ, որոնք յուրահատուկ են և չեն հանդիպում նշված բարբառներում: Բաղաձայնական համակարգով Սևերեկի խոսվածքը հարում է Եդեսիայի բարբառին: Ի տարբերություն Եդեսիայի բարբառի՝ շնչեղ խուլերի ապաշնչեղացման երևույթը Սևերեկի խոսվածքում ընդլայնված դրսևորում ունի: Երկբարբառների և *է* հրնչույթի բացակայությամբ Սևերեկի խոսվածքը հարում է Տիգրանակերտի բարբառին:

**Խաչատրյան Հ., Դիտարկումներ Համշենի բարբառի հնչյունական առանձնահատկությունների շուրջ** (հոդված)

Հոդվածագիրն արձանագրում է հնագույն ժամանակներից հայկական տարրի առկայությունը Խաղտիքում և ներկայացնում է պատմական տեղեկություններ Համշենի վերաբերյալ: Փաստվում է, որ 1915 թվականին շատ համշենցիներ թողել են իրենց բնօրրանը և բնակություն հաստատել Կովկասում ու Սև ծովի արևելյան առափնյա շրջաններում: Հեղինակը հիշատակում է Հ. Աճառյանի տեսակետը, որ Համշենի բարբառում կարելի է նկատել երկու տիպ. մեկը՝ բուն լեռնայինը, որի ներկայացուցիչն է Մալա գյուղը, մյուսը՝ Տրապիզոնին մոտ գյուղերի բարբառը, որը կրել է քաղաքի խոշոր ազդեցությունը: Համշենի բարբառի ամենից հարազատ ձևը, ըստ Հ.Աճառյանի, պահպանում է Մալա գյուղը: Լեզվի ինստիտուտի արխիվի նյութերը, Համշենի բարբառի բանահյուսական նմուշներն ու բառարանները, ինչպես նաև հեղինակի

բանավոր հարցումները նրան հանգեցրել են այն համոզման, որ Հ. Աճառյանի առանձնացրած Համշենի բարբառի երկու տիպերի էական տարբերությունները այսօր չկան: Ժամանակի ընթացքում թերևս այդ խոսվածքները խառնվել են իրար, և կարելի է ասել, որ շատ չնչին տարբերություններով՝ այսօր Աբխազիայում ապրող հայերը խոսում են հիմնականում մեկ ընդհանուր խոսվածքով:

Հիմք ընդունելով Համշենի Ունիեի Բալլուղ գյուղի խոսվածքը՝ հոդվածագիրը դիտարկումներ է կատարել Համշենի բարբառի հնչյունական առանձնահատկությունների շուրջ՝ ներկայացնելով խոսվածքի ձայնավորական ու բաղաձայնական համակարգերի արտահայտության այժմյան յուրահատկությունները:

**Խաչատրյան Հ., Բասենի խոսվածքը Շիրակի մարզում (քերականական առանձնահատկություններ)** (հոդված)

Հոդվածում նշվում է, որ Շիրակի մարզում տեղաբնիկների կողքին բնակություն են հաստատել նաև 19-րդ դարում ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների, ինչպես և 1915 թվականի Հայոց ցեղասպանության հետևանքով Մուշից, Ալաշկերտից, Խնուսից, Բասենից, Կարսից, Կարինից, Բուլանուխից, Խութից, Բիթլիսից տեղահանված հայեր՝ իրենց հետ բերելով հայրենի օրրանի բարքերն ու սովորույթները, նաև մայրենի բարբառը: Շիրակի մարզի Ախուրյան, Արթիկ, Անի, Ամասիա, Աշոցք համայնքների մի շարք գյուղերում շատ են Բասենից գաղթածները: Հոդվածում քննվել է Արթիկի Մեծ Մանթաշ բնակավայրի բարբառային միավորը՝ իբրև Կարնո բարբառի Բասենի խոսվածքի մի դրսևորում: Այս գյուղի բնակիչների նախնիները գաղթել են 1830 թ. Արևմտյան Հայաստանի Ստորին Բասեն գավառակի Խորասան, Ծառս, Վերին Բասենի Գոմաձորեր գյուղերից և Մշո գավառի երկու բնակավայրերից: Հոդվածագրի վկայությամբ՝ Մեծ Մանթաշ ներգաղթածների կորիզը եղել են խորասանցիները:

Հոդվածում հեղինակի հետազոտության առարկան Մեծ Մանթաշ գյուղի խոսվածքի անվանական համակարգին բնորոշ իրողություններն են: Անդրադարձ է կատարվում ինչպես հոգնակիակազմության առանձնահատկություններին, այնպես էլ հոլովական յուրահատկություններին: Հեղինակը իրողությունները դիտարկում է գոյական, ածական, դերանուն, կապ խոսքի մասերի շրջանակում: Արձանագրվում են լեզվական տարբերություններ տարբեր սերունդների խոսքում:

**Կատվալյան Վ., Բարբառային հայերենը Հայաստանի Հանրապետությունում** (հոդված)

Անդրադառնալով հայ բարբառների ուսումնասիրության պատմությանը՝ հոդվածագիրը փաստում է, որ հայ իրականության մեջ եղեռնին նախորդող շրջանի համար ընդունվել է 44 բարբառների գոյությունը՝ դրանք ընդգրկելով արևմտյան (29 միավոր) և արևելյան (15 միավոր) խմբակցություններում: Նշվում է, որ պատմական հանգամանքների բերումով ոչ միայն Հայաստանն է տրոհվել արևմտյան և արևելյան հատվածների, այլ նաև բարբառներն են բաժանվել համապատասխան երկու մեծ խմբի՝ իբրև ժողովրդի պատմության հետ լեզվի պատմական զարգացման կապի արտահայտություն: Օսմանյան Թուրքիայի իրականացրած հայերի ցեղասպանությունը ծանր հարված է հասցրել նաև բարբառային հայերենին: Հեղինակը փաստում է, որ 19-20-րդ դդ. իրադարձությունների հետևանքով հայության տեղահանված, մազապուրծ եղած շատ զանգվածներ, ապաստան գտնելով Արևելյան Հայաստանում, բերել են բարբառային բազմազան դրսևորումներ: Ժամանակի ընթացքում, լեզվի ընդհանուր զարգացմանը զուգահեռ, տեղի են ունեցել լեզվական տարատեսակ փոխազդեցություններ: Շատ միավորներ բարբառային այլ միջավայրում ձուլվել ու կորուստի են մատնվել, շատերն էլ այս կամ այն չափով պահպանվել են ու շարունակել զարգանալ: Կարծիք է հայտնվում, որ Արցախի բնակչության բռնի տեղահանության հետևանքով ՀՀ-ում բարբա-

ռային լեզվի գործածության ոլորտում կարող են ի հայտ գալ նոր զարգացումներ: Հոդվածագիրը վկայում է, որ ներկայում ՀՀ-ում գործածվում են բարբառային 15 միավորներ: Տրվում է բարբառային այդ միավորների ընդհանուր բնութագիրը, նշվում են դրանց տարածման շրջանները: Հետաքրքրական է, որ ՀՀ գրեթե բոլոր տարածաշրջաններում կողք կողքի գործածվում են բարբառային հայերենի մի քանի տարբերակներ, և թերևս բացառություն է Տավուշի մարզը, որտեղ հաղորդակցման միջոցը Գանձակի միջբարբառի խոսվածքներն են: Արձանագրվում է, որ երկրում կան նաև շատ բնակավայրեր, որոնցում հաղորդակցման միջոցը խառը տիպի խոսվածքներ են: Պայմանավորված բնակիչների ծագման յուրահատկություններով, գրական ու խոսակցական լեզուների, այլ բարբառների ազդեցություններով՝ նման խոսվածքները զուգորդում են տարբեր բարբառների հատկանիշներ, և դժվար է անվերապահորեն դրանք վերագրել բարբառներից որևէ մեկին: Կան նաև բնակավայրեր, որոնցում հաղորդակցման միջոցը առավելապես խոսակցական հայերենն է: Հոդվածագիրը ներկայացնում է նաև բարբառային միավորների էական մի քանի հատկանիշներ, որոնք ունեն ինչպես խմբավորող, այնպես էլ տարբերակող բնույթ: Հոդվածագիրը փաստում է, որ բարբառային խոսքը ՀՀ-ում գործածվում է ընդհանուր հայերենի շրջանակում՝ լեզվի այլ տարբերակների հետ շփումներով ու փոխազդեցություններով:

**Կատվալյան Վ., Շիրակի մարզի խոսվածքներին բնորոշ մի քանի բառերի մասին** (հոդված)

Հոդվածագիրը մեկնաբանում է 2022-2023 թթ. «Շիրակի մարզի բարբառային համապատկեր» ծրագրով շուրջ ինը տասնյակ բնակավայրերում բարբառագիտական դաշտային աշխատանքների ընթացքում դիտված բառապաշարային մի շարք իրողություններ: Նշվում է, որ մարզում լեզվական մի յուրահատուկ միասնություն է ձևավորվել Կարնո բարբառի Գյումրու խոսվածքի մեծ

ազդեցության շնորհիվ, և որքան էլ ամեն մի բնակավայր ունի խոսվածքային, առանձին դեպքերում՝ նաև բարբառային յուրահատկություններ, այնուամենայնիվ զգալի են հնչյունաքերականական ու բառապաշարային ընդհանրությունները: Հոդվածում դիտարկվում է մարզի խոսվածքների համար բնութագրական և առավել գործածական բառերի երեք խումբ՝ փոխառյալ բառեր, իմաստային յուրօրինակ դրսևորումներով բառեր, մարզի խոսվածքներին բնորոշ կազմություններ: Հոդվածագիրը հանգում է այն եզրակացության, որ որևէ տարածքի բարբառային բառապաշարի բնութագրիչ հատկանիշներից է նաև առանձին հասկացություններ արտահայտելու համար այլ տարածաշրջաններից տարբերվող բառային միավորների գործածությունը, որը կարող է պայմանավորված լինել անմիջական ու միջնորդավորված յուրօրինակ փոխառություններով, կարող է և արտահայտվել բառերի՝ հին իմաստների պահպանմամբ, փոփոխմամբ կամ զարգացմամբ, ինքնատիպ բաղադրությունների ձևավորմամբ: Նման հայեցակետով Շիրակի խոսվածքների բառապաշարին անդրադարձը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ հիշյալ իրողությունների դիտարկումները ոչ միայն կարևոր են բարբառախոս որոշակի հանրության բառապաշարի առանձնահատկությունները վեր հանելու առումով, այլ նաև կարող են առիթ դառնալ՝ կատարելու որոշ ճշգրտումներ և մեկնաբանություններ:

**Կատվալյան Վ., Խառատյան Մ., Սահակյան Ն., Շարահյուսական որոշ զուգաբանությունների արտահայտությունը բարբառային հայերենում** (հոդված)

Հոդվածագիրները դիտարկել են 20-րդ դարի 70-ականներից մինչև 21-րդ դ. սկիզբը ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագետների՝ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով լրացրած տետրերում շարահյուսական հատկանիշների արձանագրումները և փորձել են ըստ հնարավորին ձևավորել շարահյուսական իրողությունների տարածական բնութագրե-

րը։ Ծրագրում ընդգրկված մոտ մեկ տասնյակ շարահյուսական զուգաբանությունները վերաբերում են նախադասության անդամների շարադասությանը, համաձայնությանը, արտահայտությանն ու ձևավորմանը։ Հիշյալ զուգաբանությունները դիտարկվել են բարբառային հայերենի արևմտյան և արևելյան խմբակցությունների բոլոր 11 բարբառախմբերը ներկայացնող 130-ից ավելի բնակավայրերի խոսվածքներում։ Դիտարկված շարահյուսական զուգաբանությունները, որպես կանոն ունենալով տարբերակային դրսևորումներ և կազմելով բարբառային հատկանիշների փնջեր, երևան են հանում իրողությունների տարածական հետաքրքրական պատկեր։ Նկատելի է, որ շարահյուսական հատկանիշներով ևս կարող են տարբերվել ինչպես բարբառային խմբակցություններ ու բարբառախմբեր, այնպես էլ բարբառներ ու խոսվածքներ։ Մյուս կողմից՝ շարահյուսական զուգաբանությունների դիտարկումը ուրվագծում է երկու խմբակցությունների շփման գոտում որոշակի ընդհանրությունների գոյությունը, որն արտահայտվում է, օրինակ, արևմտյան խմբակցության հարավկենտրոնական ու հարավային բարբառախմբերում արևելյաններին հատուկ հատկանիշների զգալի առկայությամբ։ Ինչպես լեզվական մյուս հատկանիշները, շարահյուսական իրողությունները ևս տարբեր են ըստ ընդգրկման Շարահյուսական իրողությունները ևս կարող են լինել փոխբացառող ու զուգահեռ դրսևորվող և այլն։ Հոդվածագիրները եզրակացնում են, որ շարահյուսական զուգաբանությունները բարբառային լեզվի բնութագրական և էական իրողություններ են, դրանց վերհանումն ու վերլուծությունը կարևոր նշանակություն ունեն ինչպես բարբառային լեզվի, այնպես էլ ընդհանուր լեզվի ուսումնասիրությունը ամբողջացնելու առումով։

**Մեսրոպյան Հ., Գրաբարի հնչյունական և բառապաշարային իրողություններ հայերենի բարբառներում** (հոդված)

Հոդվածում ներկայացվում են հայերենի բարբառների լեզվա-

կան հարստության աղբյուրները: Հոդվածագիրը նշում է, որ հայերենի տարածքային տարբերակները հիմքում ունեն նախագրային, ապա և գրաբարի հիմնական բառաշերտը և լեզվական հատկանիշները՝ հնչյունական, բառապաշարային, քերականական համապատասխան դրսևորումներով: Գրաբարում *ւ* հնչյունագրով սկսվող բառ չի եղել, սակայն Տարոնի դաշտի, Վասպուրականի տարածքի խոսվածքներում *ւ* հնչյունը, ի հայտ գալով բառասկզբում, *ո*-ի հետ կազմում է *ւո* եռաբարբառ: Մի շարք արմատներ բարդվելիս կամ ածանցվելիս պահպանել են անհնչյունափոխ ձևը: Բարբառային օրինաչափ հնչյունափոխությունները զուգաձևությունների առաջացման պատճառ են դառնում՝ հաճախ տվյալ լեզվական միավորի փոխառյալ կամ օտարաբան լինելու պատրանք ստեղծելով: Բնիկ հայերեն մի շարք բառարմատներ, ըստ հոդվածագրի, առանձին կիրառություններ ունեն, որոնք բնորոշ չեն գրական լեզվի զարգացման մյուս փուլերին: Կան գրական լեզվին բնորոշ բառեր, որոնք ժողովրդախոսակցական լեզվի բառապաշարում գործածական չեն, սակայն բարբառներում կիրառական են: Մի շարք բառերի արմատներ դժվար է մեկնաբանել, չի բացառվում, որ ավանդված լինեն ուրարտերենից կամ հնագույն այլ լեզուներից: Քերականական տարբեր միջոցներով՝ հոլովաձևերով, ինչպես նաև գրաբարի բայի դիմավոր և անդեմ ձևերով, արտահայտվում են նոր բառիմաստներ:

**Մեսրոպյան Հ., Կոմիտաս վարդապետի և Մ. Աբեղյանի գրառած խաղիկներում գործածված բուսանունների իմաստային-գործառական առանձնահատկությունները** (հոդված)

Հոդվածում ներկայացվում են Կոմիտաս վարդապետի և Մ. Աբեղյանի գրառած մոտ քանիհինգ հազար ժողովրդական խաղիկներում առկա բուսանունները, որոնք գործածվել են Հայաստան աշխարհի մի շարք բարբառատարածքներում՝ Սուրմալու, Ջավախք, Սյունիք, Շիրակ, Ալաշկերտ, Բուլանուխ, Գանձակ, Բասեն, Բորչալու, Վարանդա, Վան, Կապան և այլն:

Հոդվածագիրը նշում է, որ երգերում շատ սիրված են վայրի ու մշակովի ծաղիկները, վարդը երգվում է վիճակի խաղերի մեջ իբրև կրկնակ: Որոշ բուսանուններ էլ չարից պաշտպանվելու խորհուրդ ունեն: Հարսանեկան երգերի մեջ բավականին հաճախադեպ են *ծառ* և *ծաղիկ* բուսաբառ-զույգերը: «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանում ամբարված է ոչ միայն բարբառային հայերենն իր լեզվական ճոխությամբ, այլև փարթամ բուսաշխարհ հատկանշող բազմանուն բուսաբառերով, որոնք ունեն գործածության տարբեր հաճախականություն:

**Մեսրոպյան Հ., Լեզվի հարցերը «Մշակի» էջերում** (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ բազմաբովանդակ «Մշակ» պարբերականի նյութերը շարադրված են երեք հիմնական լեզվաորակով՝ գրական արևելահայերեն, գրական արևմտահայերեն, բարբառային հայերեն: Գրական արևելահայերենը՝ գեղարվեստական, *գիտահանրամատչելի, հրապարակախոսական, փաստավավերագրական* ոճերով, լրագրի հիմնական լեզվաորակն է: Գրական արևմտահայերենը թերթում այդքան էլ ծավալուն չէ: Արևմտահայերեն են հիմնականում արևմտահայ հեղինակների գեղարվեստական երկերը, Պոլսից, Արևմտյան Հայաստանից ուղարկված տեղեկատվականները: Կան նաև գրաբարյան ձևերով, արևելահայերեն-արևմտահայերեն հոդվածներ, որոնք հոդվածագիրը կոչում է խառը տիպի տեքստեր: Բարբառային նյութերը հիմնականում Արդվին-Թիֆլիսի բարբառով են:

Հոդվածագիրն անդրադառնում է Արծրունու հեղինակած՝ լեզվին վերաբերող նյութերին, որոնք բավականին ծավալուն են: Ըստ Արծրունու՝ լեզվի աղբյուրը տարբեր բարբառներով խոսող ժողովուրդն է, որին հասկանալու համար անհրաժեշտ են լեզվական, պատմական և բնագիտական հմտություններ:

Հոդվածագիրը նշում է, որ «Մշակ»-ի էջերում հայերենագիտական հոդվածներով հանդես են գալիս նաև օտարազգի լեզվաբաններ Լինդսեյը, Դյուլորիեն և այլք:

**Մեսրոպյան Հ., Համբարձումյան Ս., Տայքի բարբառների լեզվատարածքային առանձնահատկությունների մասին** (հոդված)

Հոդվածագիրները ներկայացնում են Տայքում գործածված բարբառների լեզվատարածքային առանձնահատկությունները: Նշվում է, որ Էրզրումից Բաբերդով մինչև Տրապիզոն ընկած տարածքում ապրող հայերը հիմնականում հաղորդակցվում էին բարբառային երեք տարբերակներով՝ Կարնո, Համշենի և Տրապիզոնի: Հոդվածագիրներն անդրադառնում են Տայքի հայերի ժողովրդագրական պատկերի, ավանդույթների ու բանահյուսության, Ջավախքի, Թորթումի, Խոտորջուրի և այլ վայրերի մասին արժեքավոր վկայություններին:

Նշվում է, որ ներկայումս պատմական Տայքի տարածքում պահպանված է Համշենի բարբառը. չնայած բռնաձուլման քաղաքականությանը՝ համշենահայերը ներփակ կյանքի շնորհիվ կարողանում են պահպանել բարբառը:

**Մեսրոպեան Հ., Մայր աթոռ սուրբ Էջմիածնի բարբառային հրատարակութիւնները** (յօդուած)

Յօդուածագիրը նշում է, որ օտարութեան մէջ 260 տարուայ գործունէութիւնից յետոյ հայկական տպագրութիւնը Սիմէոն Երեւանցու դիւանագիտական հմտութեան շնորհիւ 1771 թ. հիմնադրւում է Ս. Էջմիածնում:

Էջմիածնի տպարանի բարբառային հրատարակութիւնները ներկայանում են երկու հիմնական ուղղութիւններով՝ բարբառային մենագրութիւններ և «Արարատ», ապա և՝ «Էջմիածին» հանդէսում կամ «Շողակաթ Ս. Էջմիածնի» հայագիտական ժողովածուում զետեղուած բարբառային նիւթեր:

Յօդուածագիրն անդրադառնում է Սարգիս Հայկունու, Մ. Աբեղեանի, Ա. Տէր-Մանուէլեանի, Սահակ վարդապետ Ամատունու աշխատասիրութիւններին: Կարեւորում է բարբառագիտութեան զարգացման համար յատկապէս «Արարատ» հանդէսի գիտահրատարակչական գործունէութիւնը:

**Մեսրոպյան Հ., Քրիստոնեության ազդեցությունը հայերենի բառապաշարի վրա** (հոդված/ռուսերեն)

Հոդվածում նշվում է, որ կրոնական հավատալիքներն ազդում են մարդկանց հոգեբանության, մտածելակերպի, ավանդույթների և հետևաբար լեզվական իրողությունների, հատկապես բանահյուսության վրա: 301 թ. քրիստոնեության պետական կրոնի հաստատումը հայոց լեզուն հարստացնում է լեզվական նոր միավորներով: Սկզբնական շրջանում քրիստոնեությունը իշխող վերնախավի կրոնն էր և քարոզվում էր գրաբար: Քրիստոնեության հետ կապված բառեր հայերենում հայտնվում են 5-րդ դարից: Նոր կրոնը տարածվում է հատկապես Աստվածաշնչի թարգմանությունների, ինչպես նաև կրոնաեկեղեցական գրականության միջոցով: Աստվածաշնչի թարգմանության ընթացքում հայերենը հարստանում է նաև աստվածապաշտական բազմաթիվ բառերով. դրանք հիմնականում եբրայերեն, ասորերեն, հունարեն փոխառություններ են կամ բարդ բառեր ու բառակապակցություններ, բառային պատճեններ և քերականական համարժեքներ, որոնք կազմվել են հայերենի բառակազմական օրենքներով: Հայերեն բառարանները ներառում են Աստծու կամ Աստվածային ոլորտին առնչվող բառերի և արտահայտությունների տարբերակներ: Այս բառերի ճնշող մեծամասնությունը գրքային է, կիրառության շատ նեղ շրջանակ ունի ժամանակակից հայերենում, հետևաբար բնորոշ չէ հայերենի բարբառներին: Ըստ հոդվածագրի՝ հատկանշական է նաև, որ բանահյուսության մեջ հստակ արտացոլվել է նոր կրոնով պայմանավորված լեզվամտածողությունը: Բանավոր խոս-

քում կան բազմաթիվ բանահյուսական միավորներ, որոնք ունեն քրիստոնեական ծագում:

**Մեսրոպեան Հ., Սիւնիքի տարածաշրջանի բուսանուններն ըստ «Ազգագրական հանդէսի»** (յօդուած)

Յօդուածագիրը նշում է, որ «Ազգագրական հանդէս»-ի հատորների «Բուսականութիւն» կամ «Բնագրութիւն» բաժիներն ընդգրկում են «բոյս» նշող եւ այդ հասկացութեանը վերաբերող բազմաթիւ տեղեկութիւններ բուսանմուշների տեղավայրի, տեսակային բաշխման, արտաքին եւ բուժական յատկանիշների, գրական, բարբառային եւ օտարալեզու անուանումների, նշանաւոր հետազօտողների վկայութիւնների եւ այլնի մասին: Ըստ նրա՝ բուսանուններ են առկա նաեւ «Ժողովրդական երգեր», «Հիւանդութիւն եւ բժշկութիւն» եւ այլ բաժիններում, դեղերի բաղադրութիւնների մասին վկայող հատուածներում, բաղադրագրերում:

«Ազգագրական հանդէս»-ը, ըստ յօդուածագրի, ներկայացնում է Սիւնեաց աշխարհին բնորոշ բնաշխարհը՝ համապատասխան բուսանուններով: Նշուած բուսանունները յատկանշում են ոչ միայն տուեալ տարածքի բուսապատկերը, այլեւ սիւնեցիների իւրօրինակ լեզուամտածողութիւնը, բանահիւսական չափածոյում դրանց գործածութիւնն ու բանաձեւումները, կենցաղային մի շարք առանձնայատկութիւններ՝ հարստացնելով հայերէնի բառապաշարի իմաստային տուեալ շերտը: Վկայաբերուած բուսանունների միջոցով հնարաւոր է պատկերացում կազմել Սիւնեաց աշխարհի՝ XIX դարավերջին բնորոշ ընդհանուր բնաշխարհի եւ բուսատեսակների առկայութեան մասին:

**Մեսրոպեան Հ., Պօղոսեան Ա., Հայոց դիւցազնավէպի լեզուի եւ գրառման առանձնայատկութիւնների մասին** (յօդուած)

Յօդուածագիրները քննում են «Սասնայ ծռեր» էպոսի լեզուական որոշ առանձնայատկութիւններ, նշում գրառման դժուարու-

թիւնների, բանասաց-բանահաւաք-բարբառ եռամիասնութեան փոխյարաբերութեան, էպոսի՝ որպէս բարբառագիտական ուսումնասիրութեան բնօրինակ և վստահելի աղբիւր լինելու մասին: Նշւում է, որ հայ և օտար մասնագէտները տարբեր դիտանկիւններից քննել են հայկական էպոսը, սակայն լեզուականը, բարբառային առանձնայատկութիւնները հիմնովին չեն բացայայտուած: Էպոսը հիմնականում ուսումնասիրել են գրականագէտ-բանագէտները, որոնց խնդրից դուրս է եղել էպոսի պատումների բարբառային յատկանիշների բացայայտումը, առանց որոնց ժողովրդական վէպի մասին ասելիքը մնում է անաւարտ:

Նշւում է նաև, որ Գարեգին Սրուանձտեանցի գրառած արձակ պատումի վերջաբանում լեզուական հետաքրքիր դիտարկումներ կան Մուշի տարածքի բարբառային յատկանիշների մասին. սա, ըստ յօդուածագիրների, կարելի է համարել էպոսի առաջին լեզուական քննութեան փաստ:

### Սարգսյան Ա., Մինասյան Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի քննությունը Լավրենտի Հովհաննիսյանի ուսումնասիրություններում (հոդված)

Հոդվածագիրները ներկայացնում են հայ լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Հովհաննիսյանի՝ Ղարաբաղի (Արցախի) բարբառին վերաբերող գիտական մի շարք աշխատանքներ, որոնցում ուսումնասիրվել են բարբառի հնչյունական, բառապաշարային և ձևաբանական հնաբանությունները՝ նպատակ ունենալով ապացուցելու Արցախում հայ բնակչության գոյությունը վաղնջական ժամանակներից: Բարբառի առավել հատկանշական հնչյունական օրինաչափություններից նա առանձնացնում է բառասկզբի դիրքում ձայնեղների խլացումն ու շնչեղ խլացումը, ձայնավորների քմայնացումը, ֆ բաղաձայնի բացակայությունը, վերջընթեր վանկի շեշտադրումը: Նշվում է, որ հնչյունական որոշ իրողութ-

յուններ Լ.Հովհաննիսյանը համարում է հնագույն բարբառային արտահայտություններ, որոնք կարող են լինել երկու տեսակի՝ գրաբարում ավանդված զուգահեռ ձևերից մեկի առկայությունը և գրաբարում չավանդված հնդեվրոպական արտահայտություններ: Որպես Ղարաբաղի բարբառի վաղնջականության ապացույց՝ նա ներկայացնում է գրաբարում չավանդված ձայնդարձը, գրաբարի արտասանությունը հարազատորեն պահած մի շարք բառեր, ստուգաբանությունների միջոցով լրացնում է հնդեվրոպական ծագում ունեցող, բայց գրաբարում չվկայված բառերն ու բարբառի իրանական փոխառությունները: Գրաբար–բարբառ համապատասխան իրողությունների զուգադրական քննությամբ բացահայտում է բարբառի մի շարք բառակազմական հնաբանություններ՝ նախդիրներով որոշ կազմություններ, վերջնահանգ *ն*-ով կազմություններ և այլն: Հաշվի առնելով, որ տարբեր լեզուների ու լեզվի տարբեր շրջանների ընդհանրությունների գոյության լավագույն փաստերը քերականական իրողություններն են՝ Լ. Հովհաննիսյանը քննում է բարբառի՝ գրաբարի հետ ունեցած քերականական ընդհանրությունները՝ անձներական թվականներ, ցուցական դերանուններ, գործիական հոլովի կազմություն, այլաձև հոլովում, անկանոն խոնարհում, դերբայական ընդհանուր վերջավորություններ և այլն: Լ. Հովհաննիսյանի՝ բարբառին վերաբերող ուսումնասիրություններն ունեն մեկ հստակ միտում՝ լեզվական փաստերի միջոցով արձանագրել, որ Արցախ-Սյունիքում հայերենը սկսել է գործածվել հայ տարրերի կազմավորման ընթացքին զուգահեռ և, կրելով զգալի փոփոխություններ, ներկայում գոյություն ունի մի վիճակով, որ կոչվում է Ղարաբաղի (Արցախի) բարբառ:

**Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի առաջին ուսումնասիրությունները** (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ Ղարաբաղի բարբառը բազում դարերի պատմություն ունի, սակայն նրա ուսումնասիրությունը սկիզբ է առնում 19-րդ դարի կեսերից: Արցախի ոչ նյութական

մշակույթի կարևոր այդ բնագավառում առաջին ուսումնասիրությունները կատարել են ժամանակի նշանավոր լեզվաբաններ, բանագետներ ու մանկավարժներ Քերովբե Պատկանյանը, Ղազարոս Աղայանը, Գալուստ Շերմազանյանը, Մակար Բարխուդարյանը, Ավետիք Բահաթրյանը, Մանուկ Աբեղյանը և Հրաչյա Աճառյանը: Նրանց գրառումների և ուսումնասիրությունների մի մասը 1860-1890-ական թվականներին հրատարակվել է առանձին գրքերով, տարբեր ժողովածուներում ու հանդեսներում, իսկ մյուսներն անտիպ են և պահվում են որոշ արխիվներում ու թանգարաններում: Չնայած նրան, որ այդ ժամանակաշրջանում դեռևս մշակված չէին բարբառային գիտական տառադարձության սկզբունքները, հետազոտողները ձգտել են հնարավորինս հստակ ներկայացնել բարբառի հնչյունախոսությունը: Բոլոր աշխատասիրությունները, ըստ հոդվածագրի, լուրջ աղբյուրներ են Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության համար և կարևոր դեր են ունեցել բարբառագիտական հետագա աշխատանքների համար:

**Վարդանյան Ա., Դիտարկումներ մայրենիի շուրջ**
(հոդվածների ժողովածու)

Ժողովածուն ամփոփում է արդի հայերենում տարածված սխալների և երկձևությունների մասին հեղինակի դիտարկումները, որոնցից մի քանիսը որպես գիտահանրամատչելի հոդվածներ ժամանակին հրատարակվել են մամուլում և ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կայքում: Ժողովածուում նշվում է, որ, նոր բառեր և եզրույթներ ստեղծվելուն զուգահեռ, արդի հայերենում ժամանակ առ ժամանակ կիրառվում են նաև սխալ ձևեր: Բառագործածության նման սխալներից զերծ չէ նաև պաշտոնական հայերենը: Երբեմն աղավաղվում, սխալ կիրառություն են գտնում նաև տնտեսագիտական, դիվանագիտական, իրավաբանական և այլ եզրույթներ: Հոդվածներում վեր են հանվում բառագործածության սխալները և կանոնարկ-

վում ոչ միայն առօրյա բառապաշարում առկա սխալ ձևերը, այլև պաշտոնական հայերենի մի շարք եզրույթներ և այլ հասկացություններ, հստակեցվում են ՀՀ մարզերի անվանումների, աշխարհի երկրների անունների ճիշտ տառադարձմանը և կիրառմանն առնչվող հարցեր, նշվում է, որ աշխարհագրական անունների դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն արդի հայերենի կանոնները, այլև պատմական ավանդույթները, հատուկ անունների տառադարձման ավանդական սկզբունքները: Լեզվաբանների ուշադրությունն է հրավիրվում պաշտոնական հայերենի եզրույթների կանոնարկման ոլորտի խնդիրներին, առաջարկվում է հետևողական լինել մայրենիի անաղարտությունը պաշտոնական հաղորդակցության ոլորտում պահպանելիս, անհրաժեշտ եզրույթներով հարստացնել պաշտոնական մայրենին, նպաստել ճշգրիտ, հանձնարարելի ձևերի արմատավորմանը՝ համագործակցելով համապատասխան մասնագետների՝ տնտեսագետների, քաղաքագետների, դիվանագետների, իրավաբանների և այլոց հետ:

**Վարդանյան Ա, Մարաղայի բարբառի խոսվածքներ Նախիջևանի տարածքում** (հոդված)

Հոդվածը վերաբերում է 19-րդ դարում Պարսկաստանի Մարաղայի շրջանից Նախիջևանի Գողթն գավառի Վերին Ագա, Ներքին Ագա, Դեր գյուղերում վերաբնակվածների սերունդների խոսվածքի և Մարաղայի բարբառի բարբառային հատկանիշների համեմատությանը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մայր բարբառը նոր միջավայրում հիմնականում պահպանվել է: Մասամբ փոփոխության է ենթարկվել հնչյունական համակարգը: Քննությամբ պարզվել է, որ խոսվածքի հոլովման և խոնարհման համակարգերը հիմնականում համապատասխանում են Մարաղայի բարբառի համապատասխան համակարգերին՝ փոքրաթիվ առանձնահատկություններով:Անաղարտորեն պահպանվել է նաև մայր բարբառի բառապաշարը՝ սակավաթիվ տարբե-

րություններով: Հոդվածագիրը եզրակացնում է, որ Նախիջևանի տարածքի ութ բարբառների շարքում մինչև անցյալ դարի երկրորդ կեսը հարազատորեն պահպանվել և գործածվել են նաև Մարաղայի բարբառի խոսվածքները՝ հնչյունաբանական, ձևաբանական և բառապաշարային ոչ մեծ առանձնահատկություններով:

**Վարդանյան Ա., Օծոփ-Հորսի խոսվածքի առնչությունները շրջակա բարբառների հետ** (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ Ճահուկ-Վայքի միջբարբառի՝ շուրջ մեկ տասնյակ գյուղերի լեզվական սերտ առնչություն ներկայացնող խոսվածքներից որոշ չափով առանձնանում է Օծոփի (Օծոփ-Հորսի) խոսվածքը: Այս խոսվածքում, ի տարբերություն միջբարբառի մյուս խոսվածքների, Աճառյանի օրենքն առավել լիարժեքորեն է գործում, ինչպես Խոյի և հարևան Արցախ-Սյունիքի բարբառներում:

Ըստ նրա՝ միջբարբառի ընդհանուր հատկանիշներից Օծոփի խոսվածքի հնչյունական, ձևաբանական, բառապաշարային շեղումները կարելի է բացատրել ոչ միայն հարևան բարբառների հետ բարբառամիջյան շփումներով (Արցախ-Սյունիքի բարբառ, Հյուսիսային Գողթնի միջբարբառ), այլև այն հանգամանքով, որ 19-րդ դարի առաջին կեսին Օծոփում վերաբնակվել և տեղացիների հետ համատեղ ապրել են Խոյից և Սալմաստից գաղթած հայեր, որոնց մայրենի բարբառը իր հետքն է թողել տեղաբնիկ բարբառի որոշ հատկանիշների վրա:

**Վարդանյան Ա., Բառագործածության մի շարք սխալների մասին** (հոդված)

Արդի հայերենում, լեզվի զարգանալուն զուգահեռ, ժամանակ առ ժամանակ ի հայտ են գալիս նաև սխալ ձևեր. առանձին սխալների կողքին՝ նաև իմաստով կամ հնչողությամբ մոտ բառերի զույգեր, որոնք, սխալ գործածվելով, պատճառ են դառնում սխալի հետզհետե առավել խորանալուն և տարածվելուն:

Հոդվածագիրը նշում է, որ չնայած լեզվաբանների և մանկավարժների երկարամյա ջանքերին, դեռևս առկա է *հնագիտություն* և *հնէաբանություն* բառերի հայտնի շփոթը: Նման շփոթ է առաջացել նաև այլ բառերի միջև. հաճախ միմյանցից չեն զանազանվում *հրավեր* և *հրավերք, ավանդություն* և *ավանդույթ, բարդություն* և *բարդույթ* և այլ բառային զույգեր: Մոռացվում են հայերենում հազարամյակներ շարունակ կիրառված հասարակ և հատուկ անուններ. *արաժան*-ի («հում սեր») փոխարեն՝ *ռեժան, լոռ*-ի («քաղցր կաթնաշոռ») փոխարեն՝ *ռիկոտտա, Տավուշ*-ի փոխարեն *Տաուշ* և այլն:

**Վարդանյան Ա., Պաշտոնական հայերենի մի քանի եզրույթների գործածության սխալների մասին** (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ բառագործածության սխալ ձևեր են ի հայտ գալիս ոչ միայն առօրյա խոսքում, այլև պաշտոնական հայերենում: Երբեմն աղավաղվում, սխալ կիրառություն են գտնում տնտեսագիտական, դիվանագիտական, իրավաբանական և այլ եզրույթներ:

Հոդվածում վեր են հանվում բառագործածության նմանօրինակ սխալները, կանոնարկվում են պաշտոնական հայերենի մի շարք եզրույթներ, որոնց թվում՝ «գազաթնաժողով», «տնտեսավարող սուբյեկտ» և այլ հասկացություններ, հստակեցվում են ՀՀ մարզերի անվանումների, երկրանունների ճիշտ տառադարձման և կիրառման հարցեր: Շեշտվում է, որ աշխարհագրական

անունների ճշգրիտ ձևերի կանոնարկման հիմքում պետք է հաշվի առնել թե՛ արդի հայերենի կանոնները, թե՛ պատմական ավանդույթները և հատուկ անունների տառադարձման ավանդական սկզբունքները:

**Վարդանյան Ա., Դիտարկումներ Ջուղայի բարբառի վերաբերյալ տարաժամանակյա հայեցակետով** (հոդված)

Ըստ հոդվածագրի՝ Ջուղայի բարբառը, թեև անաղարտորեն պահպանվել է Նոր Ջուղայում, սակայն բռնագաղթից տասնամյակներ անց Ջուղա քաղաք վերադարձած, այնուհետև տարածքից ոչ հեռու Ջուղա գյուղը հիմնադրած ջուղայեցիների խուվածքը կրել է մի շարք ուշագրավ փոփոխություններ: Բարբառի քառաշարք բաղաձայնական համակարգը դարձել է եռաշարք՝ բառասկզբի շնչեղ ձայնեղները դարձել են խուլեր, իսկ բառամիջում և բառավերջում՝ պարզ ձայնեղներ կամ խուլեր: *Ե* և *ո* երկբարբառները պահպանվել են մասամբ, առկա են Ջուղայի բարբառին ոչ բնորոշ քմային ձայնավորներ՝ ոչ միայն փոխառյալ, այլև բնիկ հայերեն բառերում: Ամենակիրառական հոգնակերտի՝ *ներ* մասնիկի դիմաց առկա է *նի* մասնիկը: *Ել* լծորդության բայերը անորոշում ունեն *իլ* վերջավորություն: Միավանկ բայերի սահմանական եղանակի *ման* վերջավորությամբ կազմությունները վերացել են անցյալ դարի կեսերին՝ փոխարինվելով *ըմ*-ով ձևերով: Բառապաշարային ակնհայտ ընդհանրությունների կողքին առկա են նաև որոշակի տարբերություններ:

Հոդվածագիրը նշում է, որ բարբառային հատկանիշների վերոհիշյալ շեղումները, անկասկած, արդյունք են Ջուղայի բարբառի՝ Արարատյան, Խոյի և մերձակա այլ բարբառների հետ տեղի ունեցած շփումների:

**Քումունց Մ., Մարգարյան Մ., Արևելյան լեզուներից անցած փոխառությունները Գորիսի բարբառում (ըստ Ս. Խանզադյանի «Մատյան եղելության» վիպակի)** (հոդված)

Հոդվածագիրները փորձել են պարզել արաբական, պարսկական և թյուրքական ծագման բառերի գործածականությունը Գորիսի բարբառում։ Հոդվածում կատարվում է փոխառությունների հանգամանալից վերլուծություն. դրանք դիտարկվում են ըստ ծագման և գործածության ոլորտների։ Ըստ հոդվածագիրների՝ փոխառությունները դարձել են Գորիսի բարբառի անբաժանելի մասը, հարստացրել նրա բառապաշարը։ Անդրադարձ է կատարվում նաև փոխառությունների լեզվական ու ոճական արժեքին, մեկնաբանվում է դրանց դերը գրականության մեջ, մասնավորապես՝ Խանզադյանի գեղարվեստական խոսքում։

**Քումունց Մ., Բակունց Ա., Դարձվածքները Ա. Բակունցի «Կյորես» վիպակում (համեմատական քննություն)** (հոդված)

Հոդվածում Բակունցի «Կյորես» վիպակում գործածված դարձվածքները դիտարկվում են Գորիսի բարբառում գործածական համարժեքների համեմատությամբ։ Ներկայացվում են վիպակի դարձվածքների ու դրանց բարբառային տարբերակների կառուցվածքային և իմաստային յուրահատկությունները։ Ընդգծվում է, որ Բակունցի լեզվի հիմքը ժողովրդական խոսքն է. նրա գրականությունը հարուստ է բարբառային դարձվածային միավորներով, որոնք արտացոլում են հերոսների սոցիալական դիրքը, մտածելակերպը և իրականության ընկալումը։

**Քումունց Մ., Բաղդասարյան Մ., Կապի հնչյունական, բառային և քերականական դրսևորումները Գորիսի բարբառում**
(հոդված)

Հոդվածագիրները նշում են, որ կապ խոսքի մասը ներկայացնող բառաշերտի մի շարք հատկանիշներ բազմապիսի յուրահատկություններով են դրսևորվում Գորիսի բարբառում: Բարբառում գործածական կապերը նրանք համեմատում են գրական հայերենի և հարակից բարբառների համարժեք ձևերի հետ՝ բացահայտելով դրանց կառուցվածքային, ծագումնաբանական ընդհանրություններն ու տարբերությունները, պատմական փոփոխությունները: Ներկայացվում են նաև առանձին կապերի արտասանական տարբերակները՝ քաղված կենդանի խոսքից: Ըստ հոդվածագիրների՝ Գորիսի բարբառի կապերը հիմնականում բնիկ հայերեն բառեր են, կան նաև փոխառյալ բառեր. երկու դեպքում էլ դրանք կրում են բարբառի հնչյունական ու քերականական առանձնահատկությունների կնիքը:

**Քումունց Մ., Մարգարյան Ի., Խաչատրյան Հ., Մխիթարյան Գ., Գևորգյան Գ., Ներսիսյան Լ., Կատվալյան Վ., Տեղանվան պատմական զարգացումը հայերենում (Սրբազան տարածքի «Հարժիս» անվան ստուգաբանություն)** (հոդված/անգլերեն)

Հոդվածագիրները, պատմահամեմատական լեզվաբանության սկզբունքների կիրառմամբ, նպատակ են ունեցել բացահայտելու *Հարժիս* տեղանվան ծագումը՝ հիմք ունենալով պատմական, հնագիտական, ազգագրական և մշակութաբանական աղբյուրները:

Նշվում է, որ տեղանունները կարևոր մշակութային իրողություններ են, որոնք արտացոլում են պատմական իրադարձություններ, աշխարհագրական առանձնահատկություններ և լեզվական փոփոխություններ: *Հարժիս* անվան ուսումնասիրությունը

հնարավորություն է տալիս ծանոթանալու տարածաշրջանի մշակութային և պատմական ժառանգությանը: Հոդվածում ներկայացվում է *Հարժիս* տեղանվան ծագումն ու պատմական զարգացումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը, լինելով հնագույն քաղաքակրթության կենտրոններից մեկը, ենթարկվել է բազմաթիվ մշակութային և լեզվական ազդեցությունների: Մանրամասըն վերլուծվում են *Հարժիս* անվան հնչյունական ձևավորումն ու կառուցվածքը, փորձ է արվում վերականգնելու դրա նախնական տարբերակը: Դիտարկվում է նաև *Հարժիս* անվան մշակութային և կրոնական նշանակությունը: *Սուրբ տարածք* տերմինը ենթադրում է, որ այս վայրը ունեցել է կրոնական կամ հոգևոր կարևորություն: Հոդվածագիրները վերլուծում են պատմական աղբյուրները և տեղական ավանդույթները՝ պարզելու *Հարժիս*-ի դերը կրոնական արարողություններում, դրա կապը որոշակի աստվածությունների կամ ծեսերի հետ և դրա նշանակությունը հայկական մշակութային ժառանգության մեջ: *Հարժիս*-ը համեմատվում է տարածաշրջանի այլ տեղանունների հետ, որոնք ենթարկվել են նմանատիպ լեզվական և մշակութային զարգացումների: Այդ կերպ հնարավոր է դառնում բացահայտել տեղանունների զարգացման օրինաչափությունները և անվանափոխությունների վրա ազդող գործոնները, ինչպիսիք են քաղաքական փոփոխությունները, միգրացիաները, լեզվական շփումները:

## Դ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

2024 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

### ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհաննիսյան Լ.Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի հնաբանությունները, Ե., «Արմավ» հրատ., 2024, 70 էջ:

Grigoryan S.M., Grigor Tatevatsi (medical, grammatical and legal questions). Sayings. 1346-1409. Generis, Publishing, 2024, 47 p.

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2024, 182 էջ:

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Գրիգորյան Ս.Մ., Իրավական հասկացությունները Գ. Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորի «Նորին քարոզ վասըն տասնաբանեան օրէնս» գլուխներում, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 50-60:
2. Թադևոսյան Հ.Մ., Բառակապակցական բուսանունների կիրառությունը Ա. Ամասիացու բժշկարաններում, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 78-86:
3. Խաչատրյան Վ.Մ., Միջինհայերենյան փոխառությունների գործածությունը XIV դարի երկերում, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 87-103:
4. Խաչատրյան Վ.Մ., Հայերենի խառը հապավումները. դասակարգման, տարբերակման և գրության որոշ խնդիրներ, «Բառագիտության արդի խնդիրներ. Հ.Ամալյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու», Ե., ԼԻ հրատ, 2024, էջ 11-33:
6. Խաչատրյան Վ.Մ., Հինգերորդ դարի հայերեն բարբառների հարցը հայերենագիտության մեջ, «Բարբառագիտական ընթեր-

ցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024,էջ 84-113:
7. Սանթոյան Ա.Մ., **Հովհաննիսյան Ն.Գ.,** Զուգաբայական հարադրությունների կառուցվածքային առանձնահատկությունները, «Վէմ» համահայկական հանդէս, N 2 (86), Ե., 2024, էջ 156-176:
8. Յովհաննիսեան Ն.Գ., «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում վկայուող բառիմաստների մասին (ԺԲ.-ԺԸ. դարեր), «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-12, Վիեննա, 2024, էջ 93-114:
9. Մխիթարյան Գ.Մ., Հայերեն Աստվածաշնչում սեռական, տրական հոլովներով ենթակաների գործածության շուրջ, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 5-10:
10. Սիրունյան Տ.Ղ., Բարդուղիմեոս Բոլոնիացու «Դիալեկտիկայի» քերականական լատինաբանությունները՝ վաղ և ուշ շրջանի ձեռագրերի համեմատությամբ, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 120-127:
11. Սիրունյան Տ.Ղ., Ոսկան Երևանցու թարգմանած քերականությունը. հեղինակային միջամտությունների հարցի շուրջ, «Լեզու և լեզվաբանություն», 2 (31), Ե., ԼԻ հրատ., 2024, էջ 3-11:
12. Grigoryan S.M., Semantic and operational examination of a number of term words of Grigor Tatevats, "Language and Culture", N 9, Kutaisi, 2024, p. 51-54:

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

**Գրիգորյան Ս., Գրիգոր Տաթևացի (բժշկական, քերականական և իրավագիտական հարցեր)** (մենագրություն/անգլերեն)

Գրքում ներկայացվում են Գրիգոր Տաթևացու բժշկական, իրավաբանական և քերականական հարցերին առնչվող հարցա-

դրումներն ու դիտարկումները: Դրանց քննությունն իրականացվում է բառերի և տերմինային անվանումների վերլուծությամբ:

Գրքում ներառված են նաև համամարդկային նշանակություն ունեցող մոտ երկու տասնյակ ասույթներ:

**Գրիգորյան Ս., Իրավական հասկացությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորի «Նորին քարոզ վասն տասնաբանեան օրէնս» գլուխներում** (հոդված)

Հոդվածում քննվում են համագործածական բառապաշարում կիրառվող մի քանի տասնյակ բառեր, որոնք «Վասն տասնաբանեան օրէնս» գլխում առկա են իրավական նշանակությամբ:

Քննությունը իրականացվում է հետևյալ դասդասումներով՝ ընդհանուր իրավական հասկացություններ, հանցագործություններ, պատիժներ, անձինք: Հոդվածագիրը նշում է, որ գործածվող բառերի մեծ մասն արձանագրված է գրաբարի բառարաններում:

**Գրիգորյան Ս., Գրիգոր Տաթևացու մի շարք տերմինային բառերի իմաստաբանական և գործառական քննություն**
(հոդված/անգլերեն)

Հոդվածագիրն ուսումնասիրում է իրավական արգելք արտահայտող հասկացությունները, որոնք գրավոր աղբյուրներում գործածվում են Աստվածաշնչի տասը պատվիրանների շրջանակում: Քննությունը փաստում է, որ Տաթևացին, անդրադառնալով Հայոց Կանոնագրքում արծարծվող իրավական անվանումներին (պսակ, քահանայական ձեռնադրության և այլն), կիրառում է նոր բառեր ու տերմինային անվանումներ:

**Թադևոսյան Հ., Բառակապակցական բուսանունների կիրառությունը Ա. Ամասիացու բժշկարաններում** (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ միջնադարյան բժշկարաններում հաճախադեպ են կայուն բառակապակցություններով արտահայտվող բաղադրյալ տերմինները, որոնք կարևորվում են օտար տերմինների հայերեն համարժեքները ներկայացնելու տեսանկյունից:

Հոդվածում ներկայացվում են Ա. Ամասիացու գործածած բառակապակցական բուսանունները, որոնք առկա են «Օգուտ բժըշկութեան» բժշկարանում և «Անգիտաց անպէտ» բժշկական բառարանում: Քննությամբ պարզվում է, որ բառակապակցական բուսանունները հիմնականում երկբաղադրիչ են՝ կազմված որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությամբ: Հոդվածում դրանք ներկայացվում են համապատասխան դասակարգումներով: Բառակապակցական բուսանունների քննությունը կարևոր է նաև միջին հայերենի լեզվափուլում բժշկական տերմինաբանության զարգացումը մատնանշելու տեսանկյուններից: Ըստ հոդվածագրի՝ քննված բուսանունների մոտ 10%-ը չի վկայվում «Միջին հայերենի բառարան»-ում. առավել գործածականների մի մասն արդի հայերենի բառապաշարում ամրագրվել է որպես համադրական բարդություն:

**Խաչատրյան Վ., Բազմիմաստություն և համանունություն. ձևակազմական տարբերություններ** (հոդված)

Հոդվածում քննվում են արդի գրական արևելահայերենի բազմիմաստ բառերի իմաստային այնպիսի դրսևորումներ ու համանուն բառեր, որոնք արտահայտում են քերականական, մասնավորապես՝ հոլովման ու հոգնակիակազմության տարբերություններ: Հոդվածագիրը նշում է, որ հայ լեզվաբանության մեջ ընդունված է այս բնույթի համանունները անվանել մասնակի կամ հարաբերական համանուններ՝ ի տարբերություն բացարձակ համանունների, որոնք նույնանում են նաև քերականական ձևերով: Հոդվածի բուն նպատակը այդպիսի բառերի վերհանումը և ձևակազմական տարբերությունների քննությունն է, որը կարող է օգ-

նել՝ խուսափելու հնարավոր վրիպումներից ու քերականական սխալներից:

**Խաչատրյան Վ., Հայերենի խառը հապավումները. դասակարգման, տարբերակման և գրության որոշ խնդիրներ** (հոդված)

Հոդվածագիրը քննում է արդի գրական արևելահայերենում գործածվող խառը հապավումները, որոնք ներկայացնում է ըստ ենթատեսակների. բառախմբերով տրվում են միևնույն հապավված բաղադրիչով վանկաբառային հապավումները: Միաժամանակ որոշակիորեն վերլուծվում, ճշգրտվում են խառը հապավումների տեսակները, քանի որ, ըստ հոդվածագրի, լեզվաբանական աշխատություններում առկա են որոշ անճշտություններ և բացթողումներ: Հոդվածագիրն անդրադառնում է մասնավորապես վանկաբառային ենթատեսակը իսկական բարդություններից հաճախ չտարբերակելու, տարբեր հապավումներից ածանցմամբ և բառաբարդմամբ կազմությունները հապավում համարել-չհամարելու և վերջիններից որոշ օրինակների՝ գրավոր խոսքում տարբեր ուղղագրություն ունենալու հարցերին՝ առաջարկելով որոշակի լուծումներ:

**Խաչատրյան Վ., Գոյականի հոգնակիակազմության խնդիրները արևմտահայերենում** (հոդված)

Հոդվածում ներկայացվում են արդի գրական արևմտահայերենում գոյականի հոգնակի թվի կազմության դժվարությունները, ընդհանուր օրինաչափությունից շեղումները: Ըստ հոդվածագրի՝ տարբեր հետազոտողներ նույն գոյականների կամ նման կազմություն ունեցողների համար հաճախ ընդունելի են համարում հոգնակիակազմիչ տարբեր վերջավորություններ: Արդի ուսումնասիրություններում մասամբ նկատվում է լեզվական իրողությունների շփոթ, հետևաբար և հոգնակիակազմության ոչ ճիշտ մեկնաբանու-

թյուն: Ուսումնասիրողների մի մասը տուրք է տալիս ժողովրդախոսակցական լեզվում տեղի ունեցող փոփոխություններին և ըստ դրանց ներկայացնում գոյականների հոգնակիակազմությունը՝ նկատի առնելով, որ նույն իրողություններն արդեն գրավոր խոսքում ևս լայն տարածում են գտնում: Մյուսները փորձում են խստորեն պահպանել առկա կանոնները՝ հատկապես հետևելով գրական արևելահայերենի նորմերին: Քննելով մերօրյա տարբեր հետազոտողների՝ արևմտահայերենում գոյականների հոգնակի թվի ընդունելի կազմությանը վերաբերող օրինակներ՝ հոդվածագիրն անհրաժեշտաբար համեմատում է նաև գրական արևելահայերենի համապատասխանակները և մի շարք դեպքերում առաջարկում հնարավոր լուծումներ:

**Խաչատրյան Վ., Միջինհայերենյան փոխառությունների գործածությունը XIV դարի երկերում** (հոդված)

XIV դարի մի շարք նշանավոր երկերում վկայված միջինհայերենյան փոխառությունները հոդվածում դասակարգվում են ըստ իմաստային խմբերի և խոսքիմասային պատկանելության: Հոդվածագիրը նկատում է, որ դիտարկվող օտարամուտ բառերը, ըստ բառարանային տվյալների, գերակշիռ մասով միջինհայերենյան շրջանի համար եզակի վկայություններ են: Մի մասն էլ բառարաններում տրվում է հետագա դարերի գործերի բնագրային վկայություններով, չնայած, ինչպես պարզվում է, մինչ այդ վկայվել են XIV դարի աղբյուրներում: Հոդվածագիրն արձանագրում է, որ բառարանային եզակի վկայություններով շատ բառեր եթե ոչ նշված ժամանակաշրջանում, ապա արդի բարբառային հայերենում լայն գործածություն ունեն, ուստի և, ըստ հարկի, արձանագրված են «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում: Մի շարք օրինակներ ոչ միայն գործածվում են արդի ժողովրդախոսակցական լեզվում, այլև գրական հայերենի բառապաշարի մաս են կազմում: Նկատվում են նաև կրկնակի փոխառությունների օրինակներ, հնչյունափոխության և իմաստափոխության որոշ դրսևորումներ:

**Խաչատրյան Վ., Հինգերորդ դարի հայերեն բարբառների հարցը հայերենագիտության մեջ** (հոդված)

Հոդվածում ներկայացվում են հայերենագիտության մի շարք երախտավորների նկատառումները V դարում հայերեն բարբառների գոյության, հետևաբար դրանց ծագման, ինչպես նաև հին հայերենի և բարբառների փոխհարաբերության վերաբերյալ: Նկատվում է, որ հայ բարբառագիտության և մասնավորապես պատմական բարբառագիտության ոլորտում բավական պատկառելի աշխատանք է կատարվել: Որոշ վկայություններ առկա են նաև պատմական աղբյուրներում: Հոդվածագրի կարծիքով՝ ուշագրավ տեղեկություններ են արձանագրվում նաև քերականական մեկնություններում՝ կատարելով առանձին լեզվական միավորների բարբառային տարբերություններին վերաբերող դիտարկումներ: Այդ ամենից զատ՝ խնդրո առարկայի վառ ապացույց են հատկապես գրավոր աղբյուրներում նկատվող այն լեզվական միավորները, որոնք շեղվում են գրաբարյան օրինաչափությունից՝ մասամբ հարելով մերօրյա բարբառային իրողություններին: Ըստ հոդվածագրի, համաձայն լեզվաբան Գ. Ջահուկյանի ուշագրավ դիտարկման, հայագիտության զարգացման արդի փուլում այլևս վիճելի չհամարելով V դարում հայերենի բարբառների գոյության հարցը, պետք է հետամուտ լինել դրանց ծագման, բնույթի, քանակի և ժամանակակից բարբառների հետ ունեցած փոխհարաբերության խնդրահարույց հարցերը լուծելուն:

**Հովհաննիսյան Ն., Սանթոյան Ա., Զուգաբայական հարադրությունների կառուցվածքային առանձնահատկությունները** (հոդված)

Զուգաբայական հարադրությունների կառուցվածքային առանձնահատկություններին վերաբերող սույն հոդվածում առաջարկվում են զուգաբայական հարադրությունների նոր բնորո-

շումներ (բնութագրումներ): Առաջարկությունները հիմնավորելու համար մանրամասնորեն ներկայացվում են հայ լեզվաբանների՝ հայերենի բայական հարադրություններին, այդ թվում և զուգաբայական հարադրություններին առնչվող մոտեցումները: Նշվում է, որ լեզվաբանները դրանք ուսումնասիրել են հատկապես իմաստային տեսանկյունից՝ զուգաբայական հարադրությունները քննելով՝ ըստ բաղադրիչների իմաստային առնչակցության, և որ զուգաբայական հարադրությունները չեն ուսումնասիրվել ըստ՝ բաղադրիչների լծորդությունների, բաղադրիչների կազմության, բաղադրիչների կերպի և բաղադրիչների կանոնականության: Մինչդեռ զուգաբայական հարադրություններն ամբողջական քննելու համար սրանք կարևոր հարցեր են՝ հատկապես զուգաբայերի՝ բառային արժեքը գնահատելու տեսանկյունից:

Հոդվածում հանգամանալից դասակարգվում են զուգաբայական հարադրությունները և մանրամասնաբար առանձնացվում դրանց կաղապարները՝ ըստ՝ բաղադրիչների լծորդությունների (խոնարհիչների), բաղադրիչների կազմության (բայածանցների՝ բայակազմության մեջ ունեցած դերի), բաղադրիչների կանոնականության (կանոնավորության և անկանոնության), այլև նշվում են բացառությունները, զուգաբայական հարադրություններ չդիտված և քննության չենթարկված կազմությունները:

**Յովհաննիսեան Ն., «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում վկայուող բառիմաստների մասին (ԺԲ.-ԺԷ. դարեր)** (յօդուած)

Յօդուածագիրը նշում է, որ այս ձեռագիր բառարաններում վկայւում են բառեր, որոնց առկայութիւնը հոմանիշների համապատասխան բառաշարքերում արդի տեսանկիւնից շփոթեցնող է, քանի որ չկան բնագրային օրինակներ, և բառիմաստները զանազանելու խնդիրը բաւական բարդ է: Այդուհանդերձ, բառարանային դիտարկումներն ու պրպտումները հնարաւորութիւն են ընձեռում պարզաբանելու, հիմնաւորելու այդ բառերի գոյութիւնը

հոմանիշների համապատասխան բառաշարքերում, այլեւ ներկայացնելու դրանց իմաստային փոփոխութիւնները. այս դէպքերում օգնում են յատկապէս գրաբարի տպագիր բառարանները՝ բնագրային օրինակներով, վկայութիւններով, յղումներով:

«Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում վկայող բառիմաստների քննութիւնը հիմք է տալիս ամբագրելու, որ բառարանագիրները քաջածանօթ են եղել հայ ինքնուրոյն եւ թարգմանական գրականութեանը, բառաշարքերում այդպիսի բառեր են ներառուել ուսուցողական նպատակներով. հաւանական է, որ այդ բառիմաստները գործածել են ժամանակակիցները, առանձնացուած բառերն առկայ են գրաբարի՝ ԺԷ. դարից յետոյ հրատարակուած եւ բնագրային օրինակներով համալրված բառարաններում՝ մեծաւ մասամբ ձեռագիր բառարաններում վկայուած բառիմաստներով, բառարանների տուեալներով այդ բառիմաստները  արդի հայերէնում փոփոխուել են կամ չեն պահպանուել:

**Մխիթարյան Գ., Հայերեն Աստվածաշնչում սեռական, տրական հոլովով ենթակաների գործածության շուրջ** (հոդված)

Հոդվածում դիտարկվում են հայերեն Աստվածաշնչում թեք հոլովաձևերով ենթակայի կիրառության առանձնահատկությունները: Անցողական բայի հետ սեռական, տրական հոլովներով ենթակաների գործածությունը վկայում է, որ հին հայերենին խորթ չեն եղել էրգատիվ կառույցները: Ներկայում ընդհանրապես հաստատված է, որ աշխարհի լեզուների մոտ մեկ քառորդն ունի էրգատիվ կառույցներ, դրանց թվում կան նաև մի շարք հնդեվրոպական լեզուներ (խեթերեն, լուվերեն, իրանական շատ լեզուներ, հինդի և այլն): Ավելին, մեր տարածաշրջանի բազմաթիվ լեզուներ (դրանց թվում և ուրարտերենը), անկախ ծագումից, ունեցել են էրգատիվ բնույթ: Իսկ էրգատիվ կառուցվածքից դեպի նոմինատիվ և հակառակ տիպի անցումները արտառոց երևույթներ չեն, այլ՝ ճիշտ հա-

կառակը: Հետազոտությունը փաստում է, որ հին հայերենում նըման կառույցները լայնորեն կիրառվել են: Այդ են վկայում ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն գրականության ընձեռած նյութերը, նման կառույցները շատ տարածված են նաև արդի բարբառային հայերենում: Այս ամենը ի չիք է դարձնում հայերենի և ուրարտերենի առնվազն սերտ կապերը ժխտողների այն պընդումը, որ ուրարտերենի էրգատիվ բնույթը բացառում է հայերենի հետ նրա ծագումնաբանական առնչությունների հնարավորությունը:

Նյութերը, անշուշտ, հազարամյակների խորքերը ձգվող համադրությունների հնարավորություն են ընձեռում՝ բացահայտելով հնագույն լեզուներին բնորոշ առանձնահատկություններն ու ընդհանրությունները, մշակույթների փոխազդեցությունները, որը կարևոր է հատկապես համաշխարհայնացման արդի փուլում, երբ հաճախ կեղծվում են թե՛ պատմությունը, թե՛ մշակութային արժեքները:

## Սիրունյան Տ., Ոսկան Երևանցու թարգմանած քերականությունը. հեղինակային միջամտությունների հարցի շուրջ (հոդված)

Հոդվածում պարզաբանվում է քերական, նշանավոր հրատարակիչ Ոսկան Երևանցու՝ լատիներենից թարգմանած քերականության հեղինակային միջամտությունների հարցը: Սկզբնագրի հետ թարգմանության հարազատությունը որոշելու համար հոդվածագիրը համեմատել է Ոսկանի ձեռագիրը և սրա աղբյուրը՝ իտալացի փիլիսոփա Թոմա (Թոմասո) Կամպանելլայի «Philosophia Rationalis», աշխատության «Grammaticalium libros tres» մասի առաջին և երկրորդ գրքերը: Ցույց տալով հեղինակային միջամտությունների մի շարք օրինակներ և վերլուծելով դրանց բնույթը (հանգամանքներ, նպատակ)՝ հոդվածագիրը հանգում է հետևյալ եզրակացություններին. Ոսկան Երևանցին լատիներենի քերականությունը թարգմանելիս հիմք է ընդունել հայերենի տվյալները: Սկզբնագրի սահմանումները թարգմանել է հիմնականում ճշգր-

րիտ, բուն շարադրանքը հարմարեցրել է հայերենի իրողություններին: Հայերենի քերականությունը նկարագրել է լատիներենի քերականական ըմբռնումների համաձայն, դրա անհնարինության դեպքում՝ փորձել է ինքնուրույն շարադրանքով հարազատ մնալ հայերենի իրողություններին: Ոսկանը թարգմանիչ քերական է, որ թարգմանական տեքստի հիման վրա, նրա կաղապարներով կառուցել է հայերենի քերականությունը: Նրա երկը, ըստ հոդվածագրի, նմանվում է լատինաբանության մեկ այլ հետևորդի՝ Հովհաննես Քռնեցու երկին, որը, ինչպես հայտնի է, հայ քերականական ավանդույթը հարստացրել է նոր բովանդակությամբ՝ հիմքում ունենալով լատին քերական Պրիսցիանուսի և նրա մեկնիչների երկերը:

**Սիրունյան Տ., Բարդուղիմեոս Բոլոնիացու «Դիալեկտիկայի» քերականական լատինաբանությունները՝ վաղ և ուշ շրջանի ձեռագրերի համեմատությամբ** (հոդված)

Բարդուղիմեոս Բոլոնիացու «Դիալեկտիկա»-ն (ԺԴ դ.) բուն Հայաստանում ստեղծված առաջին երկերից է, որ կրում է լատիներենի ուղղակի ազդեցությունը, ուստի նաև ունի լեզվական արժեք: Այս երկի քերականական լատինաբանությունների վաղ և ուշ դրսևորումները ցույց տալու նպատակով հոդվածում քննվել են «Դիալեկտիկա»-ի ինը ձեռագրերի տվյալներ: Հոդվածագիրը ներկայացրել է «Դիալեկտիկա»-ի ձևաբանական և շարահյուսական լատինաբանությունները, պարզել է մի քանի ուշագրավ քերականական ձևեր, որոնք ստեղծվել են լատիներենի ազդեցությամբ կամ նրա կաղապարների ընդօրինակմամբ և հիշատակված չեն լատինաբան հայերենի նկարագրություններում: Ձեռագրերի համեմատությամբ ցույց է տրվում, որ վաղ շրջանում ի հայտ եկած անսովոր ձևերը չեն առնչվում գրաբարը «նորոգելու» խնդրին, որ ավելի ուշ երևույթ է, ուստի նաև չունեն այն համակարգային բնույ-

թը, որ հատուկ է հետագա լատինաբանություններին, մինչդեռ ուշ շրջանի բնագիրը լատինաբանության նմուշ է, որ պարունակում է այդ ուղղության հիմնական հատկանիշները:

# ENGLISH AND FRENCH SUMMARIES*

## PROBLEMS OF STUDY AND REGULATION OF MODERN EASTERN AND WESTERN ARMENIAN

**Arakelyan K., The Satirical Tale and its Stylistic Features In the Works of Nshan Peshiktashlian.-**The fairy tale is a folk work of ancient origin. Later, different authors began to develop the fairy tales, also to write new ones, and fairy tales belonging to one or another author appeared. Hovhannes Tumanyan and Ghazaros Aghayan were mainly engaged in the development of fairy tales in Armenian reality.

A separate type of tales are satirical tales, in which various vices in human society are mocked. Such a tale is "Brave Nazar" or Pushkin's "The Tale of the Priest and of His Workman Balda".

The well-known Diaspora Armenian writer Nshan Peshiktashlian, who is best known as a satirist, was also engaged in the development of fairy tales. Peshiktashlian developed the fairy tales mainly in verse, using his talent as a satirist completely to this difficult task and creating unique samples of the satirical treatment of the fairy tale.

Peshiktashlian developed several fairy tales, which were developed by Tumanyan before him, but his versions, coinciding with the main points, do not repeat Tumanyan's variants. Nshan Peshiktashlian's fairy tales are characterized by various merits: ideological, artistic, aesthetic, etc. One of them is the sumptuous language and amazing figurative speech, to achieve which the author has resorted to language and imagery means, which are numerous and diverse. Stylistically the possibilities of these units are enormous, and often with their presence are associated speech expressiveness, saturation, impressiveness, liveliness and other virtues. Comparisons, metaphors, exaggerations, contrasts, repeats, etc. enriched the speech with various nuances, endowed it with an allegorical meaning, conveyed a satirical character, which, depending on the characteristics of what was being said, was manifested in different ways, from humorous to bitterly ironic.

---

* Reprinted from relevant scientific journals.

**Arakelyan K., The satirical role of linguistic means of representations in Nshan Peshiktashlian's caricatures.-**The type of literary portrait received a unique role and interesting development in world and Armenian literature. Having passed through centuries, it has undergone various changes and found a unique reflection in the Western Armenian literature of the 19$^{th}$-20$^{th}$ centuries. Many Western Armenian writers and poets referred to this genre. Literary portrait had another direction, the satirical one, and the satirical portrait was brought to perfection by prominent Western Armenian satirists Hakob Paronian and Yervand Otian.

Armenian writers of diaspora also turned to literary portrait, including the famous French-Armenian writer Nshan Peshiktashlian, who is best known as a satirist. Peshiktashlian leased new life into literary satirical portrait, as evidenced by more than a hundred of his portraits.

Their distinguishing feature is rich language and the amazing figurative speech, which is greatly contributed by the abundance of figurative linguistic means, their correct and appropriate use. Exaggerations, litotes, metaphors, comparisons, contrasts, etc. enriched the speech with various nuances, endowed it with an allegorical meaning, conveyed a satirical character, which, depending on the characteristics of what was being said, was manifasted in different ways.

**Arakelyan K., Lingual - stylistie Means of Satire in the Poetry of Nshan Peshiktashlian.-** In the Armenian literature the genre of satire reached it’s apogee in the 19$^{th}$-20$^{th}$ centuries, in the works of such Western Armenian writers as Hagob Paronian, Yervand Otian. Being one of the most brilliant satirists in the Diaspora literature, Nshan Peshiktashlian followed the leagey of the Western Armenian writers.

In addition to satirical prose, Peshiktashlian also owns poetic works, in particular poems, fables, tales, fairy tales, etc., in which satire is manifested no less sharply and expressivenly. Poetic works stand out for various merits: ideological, artistic, ets.. One of them is rich language and the amazing figurative speech, which is greatly contributed by the abundance of linguistic of imagery, their correct and appropriate use. Comparisons, metaphors, exaggerations, contrasts, repeats, etc. enriched the speech with various nuances, endowed it with an allegorical meaning, conveyed a satirical character, which depending on the characteristics of

what was being said, was manifasted in different ways, from humorous to bitterly ironic.

Nshan Peshiktashlian's poetry teems with antonyms, which endow the text with unique stylistic coloring and expressiveness. Antonyms play a significant role in the creation of antithesis, which as figure of speech, is an integral component of satiric speech.

All kinds of satire are present in the poetic works of Nshan Peshiktashlian and for their reflection the correct lingual - stylistic means are selected.

**Arakelyan K., Lingual-stylistic means of satire in Arandzar's collection "Laughter of sorrow".-**Armenian satirical literature has rich traditions and deep roots. One of them is Arandzar, Misak Guyumdjian (1877-1913). In 1905 his collection "Laughter of Sorrow" was published, which presents the life of the Armenians in the Western Armenia during the Ottoman dictatorship, the manners and suffering of Armenians, seasoned with a satirical element. Satire was manifested in various ways: humor, gaiety, irony- bitter or spicy, etc. Metaphors, comparisons, contrasts, etc. enriched the speech with various nuances, endowed it with allegorical meaning, imparted a satirical character, which, depending on the characteristics of what was being said, was manifested in various ways – from humorous to spicy ironic. Arandzar's stories teems with antonyms, which endow the text with unique stylistic coloring and expressiveness.

**Arakelyan K., Moon in the Poetry of Misak Metsarents and it's Lingual-stylistic Features.-** Celestial bodies, luminaries and phenomena have accompanied mankind since time immemorial. Heavenly luminaries have been an inexhaustible source of inspiration for poets. Creators praised creation, marveled at the beauty of luminaries, perceived man as a part of nature and in inseparable connection with all other elements. Heavenly bodies and phenomena have often served as a way to reveal the inner world of a person, his past path, hopes and expectations for the future. In this sense, Western Armenian lyric poetry of the beginning of XX century is not an exception. The mentioned topic received remarkable comments in the work of Siamanto, Daniel Varoozhan, Ruben Sevak, especially Misak Metsarents. Celestial bodies, luminaries and phenomena are a significant number in Metsarents' poetry have a great stylistic role. One of these the

noun moon and its various synonyms, which very often become the core and body of the poetic image, endow the speech with incomparable nuances, beauty and originality, causing the reader the greatest aesthetic pleasure, transporting him to an extraterrestrial light sphere.

**Arakelyan K., Investigator and Discoverer of Linguistic art of Paruyr Sevak: Artashes Papoyan.-**Paruyr Sevak's work was examined in detail by various researchers, specialists in literature , literary critics, analyzed and evaluated according to its merits. However, Paruyr Sevak is the unique Armenian author, whose linguistic art has also been examined very thoroughly, one can say flawlessly, by the well-nowned linguist, honoured Armenologist, doctor of philological sciences, professor Artashes Papoyan, who devoted a large part of his scientific activity to study Paruyr Sevak's linguistic art.

The purpose of the article is to cover the extensive work of the famous scientist in this direction, to present the scientific value of three monographs dedicated to Sevak's linguistic art, their enduring place in the field of Armenian studies, the vitality and durability of theses highlighted in them.

Descriptive-analytical and comparative approaches are used to refer to the components and means of the poetic fabric of Sevak's work, the stylistic features of various layers of the vocabulary, in particular the elements and realities that determine the popularity of the language, as well as innovations and long-standing forms. The three-volume dictionary of the Sevak language, the general picture of the vocabulary, different semantic groups of words, their stylistic applications, the poet's metrical system are presented separately.

It is proven that Papoyan not only recorded and thoroughly examined the various realities characteristic of Paruyr Sevak's language, but also revealed the connection of many of them with the works of the great ancestors, their various stylistic features and nuances. His works have been a reference point for many students and young professionals, and have become the basis for new works and researches.

**Asoyan T., On lexicographical activity of the Mkhitarians.-**The role of the Mkhitarians in the development of Armenian culture is great. They have done many studies in the fields of Armenian and World history,

Geography, Botany, Medicine, languages and other sciences, they have made translations of the works of European writers. They opened schools and taught various subjects, wrote textbooks. However, the activities of the Mkhitarians were more effective in the study of the Armenian language. They dealt with the development of new literary Armenian, wrote grammar of ancient Armenian, freeing it from the Latin influence. Their contribution to the development of new Armenian lexicography is great. Bilingual and multilingual dictionaries were especially important, which contributed to learning foreign languages.

Lexicography has an ancient history, and Armenian lexicography was started only in the 5th century, in connection with the creation of letters, and has gone a certain way of development. Mkhitar Sebastsi and his students become the founders of the new Armenian lexicography. Creating dictionaries free of defects became an imperative requirement, because the day by day developing literature, the revitalization of educational work, the expansion of the scope of the application of the Western Armenian philology, the deepening of the study of the language had created a new situation in the Armenian medium. However, they had to overcome a number of difficulties related to the choice of vocabulary, the development of scientific principles for creating a dictionary, vocabulary and other issues. The Mkhitaryans successfully overcame these difficulties and created dictionaries that have not lost their relevance to this day.

**Asoyan T., On the pedagogical activities of the Mkhitarians.-**The goal and mission of the Mkhitaryans were to carry out scientific, cultural, educational and enlightening activities among Armenians, to increase the level of self-awareness of the Armenian people, to help solve the problems of preserving Armenians in colonies formed in different countries as a result of unfavorable historical events.

One of the main areas of activity of the Mekhitaryan Congregation has been and remains the educational sphere. Since 1730s, more than 100 Mkhitaryan schools have operated in different parts of the world inhabited by Armenians: Hungary, Turkey, Italy, France, Crimea, Egypt, Argentina and other countries. With opening schools the Mkhitaryans had to create also many textbooks for different disciplines.

The Mkhitaryans "combined" their scientific activities with pedagogical ones. Almost all the famous Mkhitaryans were also involved in teaching. The above-mentioned issues related to the pedagogical activity of the Mkhitaryans were examined in the article.

**Barseghyan A., Manifestations of types of syntactic connections (management) in modern fiction.-**The article examines the manifesttations of the mode of syntactic connection /management/ in modern literary prose.

In the professional literature/syntax of modern Armenian/ have an ambiguous understanding and interpretation regarding the evaluation of the term management and the units of its connective structure, although all of them consider the mode of connection to be subordinate.

The article examines the rich factual material and provides the canonical, as well as in some cases, non-canonical manifestations of adverbial additions and adverbial additions.

There are also cases where the pronoun appears as a communication problem, conversational forms /իմ վրա, քո համար և այլն/and wrong usages of communication.

Hence, the study of rich factual material has shown:

a) Manifestations of case additions in the management of syntactic connections, in some cases do not correspond to the laws of the Armenian literary language.
b) Manifestations of case and prepositional additions, in the management of syntactic relations, in some cases also do not correspond to the law of the Armenian literary language.

**Barseghyan A., Intextual means of connection in modern feature speech /novel/.-**The modern feature speech/novel/ is a connected whole, which is realized by definite means.They mostly have titles,which are connected by each other with basic text,expressing author`s main thinking,idea.The examination of intextual means of connection of the structure of feature speech shows that by the style of the author and conditioned by the external situation the expression diverses with that relational words.The sentences ,the paragraphs ,the sections,the parts of speeches connections also differs ,which gradually decreases due to the independence of the sentences.

Our goal is to demonstrate the intertextual connection methods used in contemporary feature prose to link various parts of the text. The nature of these connections varies, depending on the means of linking sentences, paragraphs, sections, chapters, and parts of the text. Evidence of this can be found in the analysis of the construction techniques of the texts in R. Davoyan's "If God Wanted" A. Aghababyan's "Alone" V. Sahakyan's "Black Eyes, White Sheets" A. Pachyan's "Robinson," and A. Shahverdyan's "Spring Requiem." The differences in syntactic linking methods are illustrated with specific examples. The study is conducted by presenting individual means of connection.

**Feleqyan M., About the Homonymy of Suffixes or how many Suffixes -ոց (-ots) are there in the Armenian language? .-** This article discusses issues of distinguishing polysemy and homonymy of word-forming morphemes. Based on the proposed criteria, three homonymous suffixes with the phonetic composition ոց (նոց//անոց) [ots (nots//anots)] are distinguished in the modern Armenian language: -ոց 1 (has the word-formation meaning “place”), -ոց 2 (with the word-formation meaning “a specific object” and “the name of an action as a phenomenon”), -ոց 3 (an inactive suffix, preserved only in a few borrowings from the Old Armenian language).

**Feleqyan M., Lexicographical presentation of personal pronouns.-** The dictionary interpretation of pronouns largely depends on the grammatical understanding of the pronoun. To which part of speech this group of words belong has not been finally decided in grammar. This is one of the main reasons for controversies in the lexicography of personal pronouns.

Supplemental word forms of personal pronouns (including plural forms) must be presented in dictionaries as headwords with independent entries. In the dictionary entry, next to the head word, all forms of the conjugation must be shown. When explaining these words, not only their grammatical meanings should be indicated, but also their verbal usage and spelling.

**Fishenkjian A., Shifts in the Grammatical System of Literary Western Armenian Based on Existing Textbooks of Western Armenian (Verb).-** In literary Western Armenian, there have been shifts in the verb conjugation system. They are reflected primarily in the verb ending ուլ, verbal affixes, forms of irregular conjugation, the formation of irregular and incomplete verbs, etc.

This article examines how the formation of two forms of irregular verb conjugation (with and without changing the verb base) is presented in textbooks, the various manifestations of these verbs, discusses the problems associated with changes in Western Armenian textbooks, shows how the forms of irregular verb conjugation are determined in various Western Armenian grammar textbooks.

A study of Western Armenian textbooks published in recent decades indicates the use of appropriate forms, and examples from the written literary language indicate the presence of shifts in this area.

The research work carried out has shown that over the past half-century in modern Western Armenian, verbal affixes or concepts of forms of irregular conjugation of verbs have changed. After the 1990s, Western Armenian textbooks show a systematic presentation of these issues with certain terminological differences.

**Fishenkjian A., Application of Syntactic Relations in Western Armenian.-** In the syntactic structure of the modern Armenian language, connections play a crucial role. In specialized literature, syntactic connections of the Armenian language, especially its eastern branch, are often considered as unchangeable parts of speech, while scientifically substantiated patterns and features are given. At the same time, a number of authors of school textbooks for elementary, middle and senior grades limit themselves to explaining the features associated with syntactic connections using descriptions, examples and practical exercises. The article examines the problem of incorrect use of syntactic links of the Western Armenian language in written and oral speech, caused by the influence of Eastern Armenian and other languages. In the traditional Armenian diaspora - Syria, Lebanon, Egypt and other countries, Western Armenian is positioned as a native language, while in reality it has the status of a second language. Using the state language of the host country in everyday speech, a native speaker of Western Armenian introduces various shades of foreign

language into the structure of his native language, which over the course of decades acquire a stable character and themselves begin to exert a strong influence on the style and syntax of the Western Armenian language. Moving away from such integration seems to be a difficult task.

**Galstyan A., Telyan L., Semantic and functional analysis of the verb անել /to do/ of the Armenian language.-** The article analyzes the different uses of the universal verb անել in the various spheres of language /colloquial speech, dialects, children's speech, jargons, etc./. Word combinations consisting of two, three, four or more components are studied.

**Galstyan A., Analysis of new words with a foreign language component**. **-** The article examines new words with components photo-, kino-, radio-, as well as halfcopy words with suffixes կրիպտո-, էկո-, եվրա-, նանո-. The material is analyzed from the point of view of the location of the foreign language component in the word and classified according to the semantic features of these components. The article uses factual material from the "New words" series.

**Ghamoyan L., Semantic (thematic) group "Personal jewelry" in Armenian.-**In the semantic (thematic) group “personal jewelry” the common word is the word “ornament”, which has a great word-forming activity. The first jewelry appeared together with clothes, being an expression not of fantasy and aesthetics, but of mystical ideas. There is evidence of names of various kinds of gems and jewelry of the 5th century (or earlier), which by genealogy are represented by the following groups: a) native Armenian words, b) Iranian borrowings, c) Greek borrowings, d) Assyrian borrowings, e) Arabic borrowings, f) Turkic borrowings. Words of unknown origin are also highlighted. The names of ornaments, transferred from Old Armenian, as well as created and borrowed (including foreign ones) in modern literary Armenian and Western Armenian, and in some cases, in dialects, are presented.

Types of ornaments are also singled out in a separate classification: neck ornaments, breast ornaments, head ornaments, nose ornaments, ear ornaments, arm ornaments, leg ornaments and other ornaments intended to be used for dressy or other purposes. Among precious metals, gold and

silver, words made up of them and names of ornaments are also distinguished.

